
Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
փոփոխությունների նախագծի վերաբերյալ
մասնագիտական կարծիք ներկայացնող
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալլատի աշխատանքային խումբ



Մ Ա Ս Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ
1-ԻՆ, 2-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 8-ՐԴ ԳԼՈՒԽՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան,
«31» օգոստոս 2015թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասկացություններ	4
Նախաբան	5
Հեղինակային խումբ	7
ԳԼՈՒԽ 1. ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	8
ՀՈՂՎԱԾ 5. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ	8
ՀՈՂՎԱԾ 6. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ	10
ՀՈՂՎԱԾ 11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ	11
ՀՈՂՎԱԾ 17. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ	13
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	15
ՀՈՂՎԱԾ 23. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՄԱՀԱՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔԸ	15
ՀՈՂՎԱԾ 24. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԻԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	18
ՀՈՂՎԱԾ 25. ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱՔԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔԸ	20
ՀՈՂՎԱԾ 26. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	21
ՀՈՂՎԱԾ 29. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ	24
ՀՈՂՎԱԾ 32. ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ	25
ՀՈՂՎԱԾ 33. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	29
ՀՈՂՎԱԾ 34. ԱՄՈՒՄՆԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ	30
ՀՈՂՎԱԾ 35. ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	31
ՀՈՂՎԱԾ 37. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	32
ՀՈՂՎԱԾ 38. ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	36
ՀՈՂՎԱԾ 41. ԿԱՐԾԻՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ	38
ՀՈՂՎԱԾ 42. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ	39
ՀՈՂՎԱԾ 43. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ	41
ՀՈՂՎԱԾ 44. ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ	43
ՀՈՂՎԱԾ 45. ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	44
ՀՈՂՎԱԾ 46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	46
ՀՈՂՎԱԾ 47. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	49
ՀՈՂՎԱԾ 48. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	50

ՀՈԴՎԱԾ 52. ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ	53
ՀՈԴՎԱԾ 53. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԱՄ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ	54
ՀՈԴՎԱԾ 55. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ: ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳԵԼՔԸ: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	59
ՀՈԴՎԱԾ 57. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ	62
ՀՈԴՎԱԾ 58. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	64
ՀՈԴՎԱԾ 59. ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼԸ	68
ՀՈԴՎԱԾ 63. ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	69
ՀՈԴՎԱԾ 64. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ	70
ՀՈԴՎԱԾ 66. ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	71
ՀՈԴՎԱԾ 67. ՆՈՒՅՆ ԱՐԱՐՔԻ ՀԱՄԱՐ ԿՐԿԻՆ ՉԴԱՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ	71
ՀՈԴՎԱԾ 72. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ	72
ՀՈԴՎԱԾ 73. ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԸ	74
ՀՈԴՎԱԾ 76. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ	80
ՀՈԴՎԱԾ 78. ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ	88
ԳԼՈՒԽ 7. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ	89
ՀՈԴՎԱԾ 161. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ	89
ՀՈԴՎԱԾ 162. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ	89
ՀՈԴՎԱԾ 163. ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ	90
ՀՈԴՎԱԾ 164. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ (ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ) ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ (ԸՆՏՐՈՒԹՅԱՆ) ԿԱՐԳԸ, ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	93
ՀՈԴՎԱԾ 171. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ	94
ՀՈԴՎԱԾ 173. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ	96
ՀՈԴՎԱԾ 174. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	100
ԳԼՈՒԽ 8 . ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	102

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանձնաժողով	Հայաստանի Հանրապետության Նախագահի 04.09.2013թ. թիվ ՆՀ-207-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ստեղծված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով
Նախագիծ	Հանձնաժողովի կողմից 15.07.2015թ. հրապարակված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ (1-7 գլուխներ), ինչպես նաև լրամշակված 1-15 գլուխները պարունակող նախագիծ
Սահմանադրություն	Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրություն (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով)
Աշխատանքային խումբ	Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 20.07.2015թ. թիվ 206-Լ որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիք ներկայացնող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատանքային խումբ
Կարծիք	Աշխատանքային խմբի սույն կարծիքը
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 04.11.1950թ. եվրոպական Կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Դաշնագիր	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր
Կոմիտե	Մարդու իրավունքների կոմիտե
Մեկնաբանություններ	2010 թվականին հրատարակված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ
Վեներիկի հանձնաժողով	Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վեներիկի հանձնաժողով)

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով:

Այդ կապակցությամբ հուլիսի 5-ը դարձել է պետական տոն՝ Սահմանադրության օր:

Սահմանադրությունն ամրագրել է Հայաստանի Հանրապետության բնույթը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության, հռչակել է Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, սահմանեց հանրապետության կառավարման ձևը՝ հիմնված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Սահմանադրությամբ ձևավորվեց կիսանախագահական կառավարման ձև՝ պետության գլխին՝ Հանրապետության Նախագահին վերապահված լայն լիազորություններով:

2001 թվականի Եվրոպայի խորհրդին անդամակցելու փաստով պայմանավորված Սահմանադրությունում որոշակի փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, սակայն 2003 թվականին հանրաքվեի դրված սահմանադրական փոփոխությունների նախագիծը չի ընդունվել:

Փոփոխությունների հաջորդ նախագիծը հանրաքվեի է դրվել 2005 թվականի նոյեմբերի 27-ին, որն ընդունվել է:

Հանձնաժողովը սկզբնական շրջանում հրապարակել էր Նախագծի 1-7 գլուխները, իսկ հետո՝ Նախագծի 1-15 գլուխները:

Աշխատանքային խումբը, հաշվի առնելով **ժամանակի սղությունը**, սույնով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների վերաբերյալ կարծիքը, որոնք առնչվում են Մարդու իրավունքներին և ազատություններին, դատական իշխանության և արդարադատությանը նպաստող կառույցների կազմավորմանը:

Հատկանշական է, որ սույն կարծիքի մի մասը կազմվել է 01.08.2015 թվականի դրությամբ՝ Հանձնաժողովի կողմից 15.07.2015 թվականին հրապարակված Նախագծին համապատասխան և կան որոշ նորմեր, որոնք փոփոխության են ենթարկվել 04.08.2015 թվականի դրությամբ:

Կարծիքի մեջ ընդգրկված են Նախագծի միայն այն նորմերը, որոնց վերաբերյալ Աշխատանքային խումբը կարծիքի ներկայացման պահին առաջարկներ է ունեցել:

Նշված Կարծիքով որևէ նորմի վերաբերյալ առաջարկ չներկայացնելը չի բացառում Աշխատանքային խմբի կողմից, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ուսումնասիրության կատարումը և առաջարկների ներկայացումը:

Ընդհանուր առմամբ սահմանադրական փոփոխությունների նախագիծը չափազանց ծավալուն է, և դրանով փորձ է արվել կարգավորել նաև այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնց իրավական կարգավորումն իրականում կարող է ապահովվել օրենքներով:

Հասարակական այնպիսի հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումը, որոնք սահմանադրական կարգավորման ենթակա չեն, անհարկի ծանրաբեռնում է Սահմանադրությունը և հետագայում կարող է խոչընդոտել

սահմանադրական նորմերի պատշաճ կիրառմանը:

Մասնավորապես, այդ հարաբերությունների կարգավորումը Սահմանադրության մակարդակով հետագայում կարող է արգելափակել օրենքներով այդ հարաբերությունները նորովի կարգավորելու հնարավորությունը և հանգեցնել նոր սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության:

Նախագիծը բովանդակում է նաև Հայաստանի Հանրապետության իրավունքին և իրավակիրառ պրակտիկային անհայտ հասկացություններ և ձևակերպումներ, որոնք, ըստ էության, հիմնարար նշանակություն չունեն, և դրանց Սահմանադրության մեջ ներմուծման անհրաժեշտությունը բավարար չափով հիմնավորված չէ:

Միաժամանակ, Աշխատանքային խումբն արձանագրում է, որ Նախագծով կան որոշ նոր և նախկինում առկա, սակայն Նախագծով խմբագրված կարգավորումներ, որոնք գործող Սահմանադրության համեմատությամբ կարելի է դիտարկել, որպես առաջընթաց: Օրինակ՝ Աշխատանքային խումբը դրական է գնահատում այն, որ որոշ հոդվածներում հաշվի են առնվել նաև ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկան և մի շարք որոշումներով արտահայտած դիրքորոշումները: Մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը նախատեսող 57-րդ հոդվածում սահմանվել է դրույթ, որով, ըստ էության, տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրականացման պայմանները և կարգը պետք է սահմանվեն օրենքով: Այս կարգավորման հիմքում, ընկած է նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, որ համապատասխան իրավունքի շրջանակներում ձեռնարկատիրական գործունեության իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման:

Դրական նորամուծություն կարելի է դիտել նաև Նախագծի 60-րդ հոդվածով սահմանված վնասի հատուցման իրավունքի նախատեսումը: Գործող Սահմանադրությունը մասնավորեցնում էր վնասի հատուցման երկու դեպք՝ ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում պատճառված վնասի հատուցումը (Սահմանադրության 16-րդ հոդված) և տուժողին պատճառված վնասի հատուցումը (Սահմանադրության 20-րդ հոդված): Իսկ նախագծով յուրաքանչյուր անձի համար երաշխավորվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը:

Հատկանշական է նաև այն, որ Նախագծով աշխատանքային իրավունքների մի մասը սահմանվել է որպես երաշխիք՝ առանձնացվելով Նախագծի 3-րդ գլխում:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Աշխատանքային խումբը վերլուծությունը կատարել է Նախագծի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների վերաբերյալ, իսկ առանձին հոդվածներ Աշխատանքային խմբի համատեղ քննարկմանը ներկայացրել են խմբի հետևյալ անդամները՝

- | | |
|--|--|
| 1) Արթուր Հովհաննիսյան՝
փաստաբան, Փաստաբանների
պալատի նախագահի առաջին
տեղակալ | հոդվածներ 33, 34, 161-164, 171, 173,
174, 176 |
| 2) Տիգրան Սաֆարյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 32, 41, 43, 63, 64, 66 |
| 3) Էմիլ Ամիրխանյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 58, 73 |
| 4) Արմինե Հարությունյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 35, 52 |
| 5) Տարոն Սիմոնյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդված 73 |
| 6) Հունան Տեր-Վարդանյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 44, 45, 47 |
| 7) Դավիթ Հունանյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 24, 38 |
| 8) Քրիստինա Սարդարյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 11, 25, 26 |
| 9) Լևոն Գևորգյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 5, 53, 76, 78 |
| 10) Լյուդվիկ Դավթյան՝
փաստաբան, ի.գ.թ. | Նախաբան, հոդվածներ 6, 17 |
| 11) Արա Խզմալյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 17, 28 |
| 12) Տիրայր Վարդազարյան՝
փաստաբան, ի.գ.թ. | հոդվածներ 37, 42, 46, 48, 55 |

ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

* * *

ՀՈԴՎԱԾ 5. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

1. *Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական իրավական ակտերը՝ Սահմանադրությանը, սահմանադրական օրենքներին և օրենքներին:*

2. *Ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմերը գերակայություն ունեն օրենքների նկատմամբ: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:*

5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունն, ըստ էության, առավել հակիրճ արտահայտում է գործող Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված հետևյալ դրույթը.

«Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը բովանդակային նորամուծություն է: Առաջին նախադասության մեջ օգտագործվող «ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմեր» արտահայտությունն, ըստ ամենայնի, վերաբերվում է միջազգային իրավունքի իմպերատիվ կամ *jus cogens* նորմերին¹:

Այս նորամուծությունը, սակայն, կարծում ենք խիստ խնդրահարույց է: Նախ՝ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների խմբին չդասվող միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը գործում են գերազանցապես միջպետական (կամ առնվազն միջազգային իրավունքի սուբյեկտների միջև) հարթությունում (օրինակ՝ ուժի գործադրման արգելքը, ռազմական հանցագործությունների արգելքը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների արգելքը և այլն): Ուստի

¹ Պայմանագրերի իրավունքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի հայերեն տարբերակի 53-րդ հոդվածում օգտագործվող «պարտադիր նորմ» (անգլ.՝ “peremptory”) արտահայտությունն այնքան էլ հաջող չէ, քանի որ չի արտահայտում անգլերեն “peremptory” կամ ֆրանսերեն “impérative” բառերի իրական իմաստը և, ավելին, ստեղծում է տպավորություն, թե խնդրո առարկա նորմերից տարբերվող նորմերը ոչ պարտադիր են: Ուստի կարծում ենք, որ այս ձևակերպումը յուրաքանչյուր դեպքում հստակեցման կարիք ունի, եթե այն օգտագործվելու է Նախագծի վերջնական տեքստում:

դրանց կիրառումը ներպետական իրավական համակարգում (պետություն-անհատ մակարդակում) կամ պարզապես հնարավոր չէ, կամ կարող է լուրջ խնդիրներ ստեղծել հենց ազգային անվտանգության տեսանկյունից:

Օրինակ՝ եթե որևէ եվրոպական պետության տարածքում (օրինակ՝ Բելգիայի, որտեղ 1993թ. ի վեր գործում է օրենսդրություն, որն ունիվերսալ իրավազորություն է շնորհում բելգիական դատարաններին միջազգային հանցագործությունների նկատմամբ) ունիվերսալ իրավազորության հիման վրա քրեական գործ հարուցվի ՀՀ քաղաքացու նկատմամբ և կայացվի մեղադրական դատավճիռ, Նախագծի գործողության պայմաններում Եվրոպայի Խորհրդի շրջանակներում կնքված Էքստրադիցիայի վերաբերյալ կոնվենցիայի կամ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում կարող են առաջանալ էական իրավական և քաղաքական բարդություններ:

Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումը խնդրահարույց է նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից: Երկու նախադասությունների կառուցվածքից (եթե վերանանք տարբեր ենթակաների օգտագործման փաստից) տպավորություն է ստեղծվում, որ խոսքը երկու նախադասություններում նույն երևույթի մասին է: Այսպես՝ «X-երը գերակայություն ունեն օրենքների նկատմամբ: Եթե x-երում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»:

Սակայն, ենթակաները տարբեր են, և հարց է առաջանում. եթե երկու նախադասություններում խոսքը գնում է օրենքի նկատմամբ գերակա ուժ ունեցող երկու երևույթների մասին, ապա ինչո՞ւ են տարբեր կերպ տրված օրենքների հետ փոխհարաբերության վերաբերյալ ձևակերպումները:

Բացի այդ, պայմանագրերը միջազգային նորմերի նյութականացման ձևերից են (աղբյուր), իսկ *jus cogens* նորմերը նորմերի իրավաբանական ուժի հիերարխիկ բնութագիր են և դրանց քննարկումը միևնույն հարթությունում պարզապես անտրամաբանական է: Այսպես՝ պայմանագրային նորմը նույնպես կարող է լինել *jus cogens* բնույթի կամ *jus cogens* բնույթի նորմը սովորույթի ուժով կարող է պարտադրել պետությանն անկախ նրանից թե վերջինս անդամակցում է այդ նորմն արձանագրող որևէ միջազգային պայմանագրի թե ոչ²:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 5-րդ հոդվածի մեկնաբանությունն Աշխատանքային խումբն առաջարկում է հոդվածի տեքստից ընդհանրապես հանել ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմերի հիշատակումը և միջազգային պայմանագրերի և օրենքների հարաբերակցության մասով օգտագործել գործող Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ **«Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:»** շարադրանքը:

² Տե՛ս օրինակ M. SHAW, INTERNATIONAL LAW (6th ed., Cambridge University Press, 2008), p. 123-124.

* * *

ՀՈԴՎԱԾ 6. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրավական որոշակիության սկզբունքն ընդհանուր սահմանադրական սկզբունք է և վերաբերում է ցանկացած իրավահարաբերություն կարգավորող նորմատիվ իրավական յուրաքանչյուր նորմի: Այն իրավական պետության բովանդակության բաղկացուցիչ մասն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:³

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը,

³ Տե՛ս, օրինակ, ՀՀԵ՛ս, օրինակ, University Press, 2008), p. 123-124. ուն, թե խնդրո առարկա նորմերից տա

ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:⁴

Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին» ձևակերպումը հաջող չէ կամ այն նույնիսկ ավելորդ է այնքանով, որքանով իրավական որոշակիության սկզբունքը վերագրում է միայն 6-րդ հոդվածի իմաստով լիազորող նորմերին: Մինչդեռ իրավական որոշակիության սկզբունքը, ինչպես արդեն նշել ենք, ընդհանուր սահմանադրական սկզբունք է և վերաբերում է հասարակական հարաբերություններ կարգավորող յուրաքանչյուր նորմատիվ բնույթ ունեցող նորմի: Ուստի, քննարկվող սահմանադրական դրույթում իրավական որոշակիության սկզբունքը սահմանելով միայն որպես լիազորող նորմերին ներկայացվող պահանջ՝ կարծում ենք, սխալ է:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով 6-րդ հոդվածը՝ Աշխատանքային խումբն առաջարկում է.

1. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունը՝ «Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին», հանել:

2. Նախագծի 6-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. **«4. Օրենքները և նորմատիվ իրավական այլ ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:»**

* * *

ՀՈԴՎԱԾ 11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. **Հանրային իշխանությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ:**

2. **Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:**

11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրության «Մարդու հիմնական իրավունքները» գլխում 33.2 հոդվածով ամրագրված է՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

⁴ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Այս նորմի բովանդակությունը ամրագրված չէ Նախագծում:

Նախագծի «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի 11-րդ հոդվածում ամրագրված է «Շրջակա միջավայրի պահպանություն և կայուն զարգացում» վերնագրով նորմ, որի համաձայն՝

«1. Հանրային իշխանությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ,

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»:

Նախագծի 11-րդ հոդվածի ձևակերպումը անձին իրավունք չի վերապահում պաշտպանել իր հիմնական իրավունքներից մեկը՝ **մաքուր և առողջության համար անվտանգ միջավայրում ապրելու իրավունքը:**

Նախագծի քննարկվող նորմում օգտագործված «Հանրային իշխանությունը ղեկավարվում է կայուն զարգացման սկզբունքով» եզրույթը առաջնային հարթակ է դնում տնտեսական գործոնը, այն բնապահպանական և բնօգտագործման խնդիրները լուծելիս լինելու է որոշիչը: Տվյալ դեպքում, նույն նորմում առկա «Հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ» ձևակերպումը չի «փրկում» իրավիճակը, քանի որ կարելի է հիմա վնասել բնական միջավայրը, սակայն հիմնավորել, որ ապագա սերունդներին դա չի վնասի կամ հետագայում վնասված բնությունը կվերականգնվի:

Բացի դրանից, հոդվածը չի սահմանում, որ հանրային իշխանությունը քննարկվող ոլորտում պետք է գործի օրենքին համապատասխան:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով 11-րդ հոդվածը՝ Աշխատանքային խումբն առաջարկում է.

1. Նախագծում վերականգնել առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու Մարդու իրավունքը երաշխավորող գործող Սահմանադրության 33.2 հոդվածով ամրագրված իրավանորմը, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:»

2. Նախագծի 11-րդ հոդվածը ձևակերպել հետևյալ կերպ՝

«1. Հանրային իշխանությունը պարտավոր է ապահովել շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ գիտակցելով իր պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ՝ օրենքին համապատասխան:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին» :

* * *

ՀՈԴՎԱԾ 17. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել հապուկ համաձայնագրով:

17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նշված հոդվածի 2-րդ մասով պետության և եկեղեցու հարաբերությունների կարգավորման հնարավորությունը թողնվել է **հատուկ համաձայնագրի** կարգավորմանը, ի տարբերություն գործող Սահմանադրության, որի 8.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն այդ հարաբերությունները կարող են կարգավորվել **օրենքով**:

Ներպետական և միջազգային իրավունքի համակարգերում **«համաձայնագիր»** եզրույթը կարող է վերաբերվել՝

- Քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում այդ հարաբերությունների սուբյեկտների միջև կնքվող գործարքներին.
- Միջազգային իրավունքի սուբյեկտների միջև միջազգային իրավունքի համաձայն կնքվող միջազգային պայմանագրերին.
- Որոշ պետություններում (օրինակ՝ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում)՝ պետական մարմինների միջև իրենց լիազորությունների իրականացման առնչությամբ փոխհամագործակցության հարցերը կարգավորելու նպատակով կնքվող համաձայնագրերին:

Կարծում ենք տրամաբանական է ի սկզբանե բացառել այն հնարավոր մեկնաբանությունը, որ քննարկվող դրույթում խոսքը գնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքվող համաձայնագրի մասին: Մասնավորապես, դժվար է պատկերացնել, թե ի՞նչ կարիք կա սահմանադրության մակարդակով նախատեսել Հայաստանի Հանրապետության և հայ առաքելական եկեղեցու միջև քաղաքացիաիրավական հարաբերությունների պայմանագրային կարգավորման հնարավորությունը:

Եթե ենթադրենք, որ նախագծում խոսքը գնում է միջազգային պայմանագիր հանդիսացող համաձայնագրերի մասին, ապա քննարկվող դրույթը ենթադրում է հայ առաքելական եկեղեցու *de facto* միջազգային իրավասուբյեկտության ճանաչման փորձ: Ենթադրում ենք, որ նախագծի հեղինակները նման նպատակ չեն հետապնդել քննարկվող դրույթը առաջարկելիս, այդ թվում՝ հաշվի առնելով, որ հայ առաքելական եկեղեցին օժտված չէ միջազգային իրավասուբյեկտության համար անհրաժեշտ հատկանիշներով:

Եվ վերջապես, անդրադառնալով պետական մարմինների

համաձայնագրերին (որոնք մինչ օրս ծանոթ չեն Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին), ենթադրում ենք, որ Նախագծի հեղինակները դժվար թե նպատակ ունեն հայ առաքելական եկեղեցին դիտարկել որպես պետական մարմին կան դրան հավասարեցված կառույց:

Նշվածից բխում է, որ քննարկվող նորմում խոսքը գնում է համաձայնագրի մի նոր՝ մինչ օրս Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին և միջազգային իրավունքին անհայտ տեսակի մասին: Ընդ որում, անհասկանալի է ոչ միայն այն, թե ի՞նչ համաձայնագրի մասին է խոսքը, այլ նաև այն, թե ու՞մ կողմից է այն կնքվելու, հաստատվելու կամ վավերացվելու:

Այսպիսով, Աշխատանքային խմբի կարծիքով քննարկվող դրույթն իրավական անորոշություն է մտցնում խնդրո առարկա հարցի իրավական կարգավորման մեջ, և ընդունման դեպքում անցանկալի տարընթերցումների և հակասական մեկնաբանությունների տեղիք կտա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով 17-րդ հոդվածը՝ Աշխատանքային խումբն առաջարկում է դրա 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ . **«2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:»:**

* * *

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* * *

ՀՈԴՎԱԾ 23. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՄԱՀԱՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔԸ

1. **Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:**
2. **Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է այնպիսի ուժի գործադրման, որը բացարձակապես անհրաժեշտ է:**
3. **Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:**

23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի իրավունքի վերաբերյալ գործող Սահմանադրության 15-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 15. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Նախագծի տեքստը փաստորեն տարբերվում է գործող Սահմանադրությունից միայն կյանքի իրավունքից բացառությունների արձանագրման փաստով (2-րդ մաս)՝ օգտագործելով ՄԻԵԿ 2-րդ հոդվածի 2-րդ մասում արձանագրված «բացարձակապես անհրաժեշտ» (անգլ.՝ “absolutely necessary”) ձևաչափը, սակայն առանց հաջորդող՝ «բացարձակապես անհրաժեշտ» լինելու դեպքերի **սպառնիչ** թվարկման:

Այն, որ մարդու կյանքի պաշտպանությունը բացարձակ չէ, և որ հնարավոր են իրավիճակներ, որոնցում անձի կյանքը կարող է դադարեցվել իրավունքի շրջանակներում (անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, մահապատժի կիրառող պետություններում՝ դատարանի հիմնավորված վճռի հիման վրա մահապատժի կիրառման, ռազմական գործողությունների ընթացքում կոմբատանտի կողմից մեկ այլ կոմբատանտի կամ ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցող այլ անձի ոչնչացման, ռազմական թիրախի ոչնչացման ընթացքում՝ հետապնդվող ռազմական նպատակին համաչափ քաղաքացիական զոհեր առաջ բերելու արդյունքում և այլն) արձանագրված է թե՛ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում, թե՛ միջազգային ատյանների կողմից այդ փաստաթղթերի կիրառման պրակտիկայում:

Կյանքի դադարեցման այս իրավաչափի հիմքերը, սակայն բացառություններ չեն կյանքի իրավունքից որպես այդպիսին, այլ կյանքի իրավունքի ներքին (“inherent”) հատկանիշներ են: Ավելին՝ այդ դեպքերը կարող են փոփոխվել, ձևափոխվել կախված իրավիճակից՝ վտանգի առկայություն, զինված ընդհարման

առկայություն և այլն⁵:

Այս մասին է վկայում մասնավորապես ՄԻԵԿ-ից ավելի ուշ ընդունված միջազգային փաստաթղթերի շարադրանքը: Մասնավորապես Դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասն արձանագրում է կյանքի իրավունքի հետևյալ ձևակերպումը.

Յուրաքանչյուր մարդկային էակ ունի կյանքի բնական [անգլ.՝ “inherent”] իրավունք: Այս իրավունքը պաշտպանված պետք է լինի օրենքով: Ոչ ոք չպետք է կողմնակալ կերպով զրկվի իր կյանքից:

Գրեթե նույնական ձևակերպում է առկա նաև 1969թ. Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև 1982թ. Մարդու և ազգերի իրավունքների վերաբերյալ աֆրիկյան խարտիայի 4-րդ հոդվածում: Բոլոր այս փաստաթղթերում օգտագործվում է «*Ոչ ոք չպետք է կողմնակալ կերպով զրկվի իր կյանքից*» ձևաչափը:

Այն է՝ հնարավոր են կյանքից զրկելու անկողմնակալ դեպքեր, որոնք չեն հակասում կյանքի իրավունքի պաշտպանվածության կենտրոնական գաղափարին: Հատկանշական է, որ **այս նույն գաղափարն է արձանագրված նաև ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում:**

«Թեպետ կյանքի իրավունքն ակնհայտ բազմիմաստ է, այնուամենայնիվ, վերջինիս սահմանները ճշգրիտ ընդգծելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի ... իրավաչափ հարկադրանքի ինստիտուտի առնչությունն այդ իրավունքի հետ: ... Սահմանադրությամբ անդրադարձ չկա իրավաչափ հարկադրանքի ինստիտուտին, սակայն դա չի հակասում Սահմանադրությանը:⁶»:

«Կյանքի իրավունքի խախտում չէ նաև անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում անձին կյանքից զրկելը: ... Սահմանադրությամբ ամրագրված իմաստով կյանքից զրկել չի համարվում նաև պատերազմի ժամանակ՝ հակառակորդ բանակի «մարտնչող կազմի դեմ» ուղղված գործողությունների արդյունքում մահ պատճառելը:⁷»

Նման պայմաններում կյանքից զրկելու «բացարձակապես անհրաժեշտ» դեպքերի վերաբերյալ դրույթի ավելացումը լիովին անտրամաբանական է:

Ավելին՝ կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պոզիտիվ պարտավորությունն ընդգծելու, ինչպես նաև հավանական չարաշահումներից զերծ մնալու նպատակով վերը շարադրված միջազգային փաստաթղթերում (բացառությամբ առավել վաղ սերնդի ՄԻԵԿ-ի) օգտագործվում է հետադարձ

⁵ Տե՛ս օրինակ Արդարադատության միջազգային դատարանի՝ Միջուկային զենքով սպառնալիքի կամ դրա կիրառման իրավաչափության վերաբերյալ խորհրդարարական եզրակացությունը, որում խոսվում է զինված հակամարտության ժամանակ կյանքի իրավունքի վերաբերյալ մարդու իրավունքների փաստաթղթերի դրույթների գործողության և այդ դրույթների՝ մարդասիրական իրավունքի լույսի ներքո մեկնաբանվելու մասին: *Threat or Use of Nuclear Weapons*, Advisory Opinion, 1996 ICJ Reports 226, p. 240, §25.

⁶ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդ. խմբ.՝ Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 182:

⁷ *Ibid.*, էջ 186:

շարադրանք՝ արգելելով կողմնակալ կերպով կյանքից զրկելը, այլ ոչ թե թույլատրելով կյանքից զրկելու «բացարձակապես անհրաժեշտ» դեպքերը: Երկրորդ մոդելը ոչ միայն ավելի քիչ մարդակենտրոն է, այն նաև «հնացած է» և ստեղծում է անհրաժեշտություն որոշելու այդ «բացարձակապես անհրաժեշտ» դեպքերի ցանկը:

Նախագիծը, ի տարբերություն ՄԻԵԿ-ի, ոչ միայն չի սահմանում նման դեպքերի սպառիչ ցանկ, այն անգամ չի հստակեցնում, թե ու՞մ պարտականությունն է այդ ցանկի սահմանումը (օրենսդրի՞) կամ թե ի՞նչ իրավական ակտով այն պետք է սահմանվի (օրենքո՞վ):

Հավանական հակափաստարկն առ այն, թե այդ «բացարձակապես անհրաժեշտ» դեպքերն արձանագրված են ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի 2-րդ մասում և ինկորպորացվում են Նախագծի տեքստի մեջ 81-րդ հոդվածի (*Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան*) ուժով, համարում ենք անընդունելի:

Սահմանադրությունը պետք է լինի ինքնաբավ իրավական գործիք, այլ ոչ թե ամբողջանա միջազգային պայմանագրային պարտավորությունների միջոցով, քանի որ (1) ներպետական դատարանների համար հենց Սահմանադրությունն է հանդիսանում բարձրագույն իրավաբանական ուժով օժտված փաստաթուղթ, (2) միջազգային պայմանագրերը կարող են դենոնսացվել (չեղյալ հայտարարվել) կամ փոփոխվել կողմերի համաձայնությամբ, ինչը նշանակում է, որ նման տեսական զարգացումների պարագայում Նախագծի տեքստը կյանքի իրավունքի մասով կդառնա ոչ ամբողջական:

Ամեն դեպքում, հաշվի առնելով, որ կյանքից զրկելու իրավաչափ դեպքերը կյանքի իրավունքի «ներքին» հատկանիշն են (այսինքն՝ գտնվում են այդ իրավունքով չպաշտպանվող ոլորտից դուրս), այլ ոչ թե շեղումներ են այդ իրավունքից, խնդրո առարկա դրույթի (Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասի) ավելացումը համարում ենք աննպատակահարմար: Հակառակ տրամաբանությամբ կստացվեր, որ գործող Քրեական օրենսգրքի՝ «Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները» 8-րդ գլխի մի շարք դրույթներ հակասում են գործող Սահմանադրության 15-րդ հոդվածին, քանի որ վերջինս չի խոսում կյանքից զրկելու իրավաչափ դեպքերի մասին: Ինչը հակասում է հենց գործող Սահմանադրության մեկնաբանություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 23-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբը գալիս է այն եզրահանգման, որ՝

1. Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասը թերի է, քանի որ օգտագործելով ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «բացարձակապես անհրաժեշտ» ձևաչափը, ի տարբերություն ՄԻԵԿ-ի, չի սահմանում նման դեպքերի սպառիչ ցանկ:

2. Խնդրո առարկա դրույթը նաև թերի է, քանի որ չի հստակեցնում, թե ու՞մ պարտականությունն է այդ «բացարձակապես անհրաժեշտ» դեպքերի սահմանումը կամ թե ի՞նչ իրավական ակտով այն պետք է սահմանվի:

3. Նախագծի 81-րդ հոդվածն այս բացը չի լրացնում, քանի որ կախվածության մեջ է դնում Նախագծի տեքստը միջազգային փաստաթղթերից՝ դարձնելով այն ոչ ինքնաբավ:

4. Յուրաքանչյուր դեպքում ՄԻԵԿ-ում օգտագործվող ձևաչափը «հնացած է», տարբերվում է մարդու իրավունքների առավել նոր սերնդի փաստաթղթերում օգտագործվող առավել մարդակենտրոն «ոչ ոք չպետք է կողմնակալ կերպով զրկվի իր կյանքից» ձևաչափից, և դրա ներմուծման անհրաժեշտությունը բացակայում է:

5. Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասով հիշատակված դրույթի ներմուծումը կյանքի իրավունքի բովանդակությունն արտացոլող հոդվածի մեջ համարում ենք աննպատակահարմար և առաջարկում ենք պահպանել գործող Սահմանադրության ձևակերպումը:

Ծանոթություն. Աշխատանքային խմբի կողմից այս կարծիքն ընդունելուց հետո, Հանձնաժողովը 23-րդ հոդվածը ներկայացրել է հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 23. Կյանքի իրավունքը: Մահապատժի արգելքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

* * *

ՀՈԴՎԱԾ 24. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

2. Բժշկության և կենսաբանության ոլորտներում, մասնավորապես, արգելվում են՝

1) եվգենիկական փորձերը.

2) մարդու մարմինը կամ նրա մասերը՝ որպես այդպիսին, շահույթի աղբյուրի դարձնելը.

3) մարդու վերարտադրողական կլոնավորումը:

3. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակորեն հայտնած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը պետք է նախօրոք տեղեկացվի նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

**24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածում ներկայացվում է Մարդու անձեռնմխելիության իրավունքը, որն ամրագրված է գործող Սահմանադրության 16-րդ հոդվածով: Անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը հստակեցվել է այն ամրագրվում է որպես «Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք»:

Բացի դրանից, նույն հոդվածի մեջ են ներառվել նաև առանց մարդու համաձայնության՝ նրան փորձերի չենթարկելու վերաբերյալ սահմանադրական կարգավորումները, որոնք գործող Սահմանադրությամբ ամրագրված են առանձին հոդվածով (17-րդ հոդված): Դրանով, ըստ էության, ընդգծվել է այս կարգավորումների՝ մեկ գաղափարական սահմանների մեջ գտնվելու հանգամանքը, ինչը լիովին հիմնավոր է: Ավելին, գործող Սահմանադրությամբ դրսևորվում է երկակի մոտեցում. 44-րդ հոդվածով նախատեսվում է, որ անձեռնմխելիության իրավունքը կարող է օրենքով սահմանված կարգով սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, իսկ բացառապես մարդու համաձայնությամբ նրան գիտական, բժշկական կամ այլ փորձերի ենթարկելու իրավունքը ենթակա չէ սահմանափակման ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Նախագծով նախատեսվում է, որ մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը նույնպես ենթակա չէ սահմանափակման ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Այնուհանդերձ, հոդվածի առաջին մասով տրված ձևակերպումը նախատեսում է անորոշ հեռանկար: Մասնավորապես, այս իրավունքի սահմանափակման նպատակները՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, որ նախատեսվում են Նախագծի 24-րդ հոդվածի մեջ, իրենց բնույթով գնահատողական հասկացություններ են: Այսինքն, այս հասկացությունները ստանում են բովանդակություն, ելնելով տվյալ իրավիճակից, հասարակության կողմից տվյալ երևույթի հանդեպ ունեցած վերաբերմունքից:

Խնդիրն այն է, որ այս իրավունքն իր բովանդակությամբ և էությամբ հիմնաքարային նշանակություն ունի, և հիմնավոր չէ Սահմանադրությամբ ամրագրել այս իրավունքի սահմանափակման հնարավորություն՝ օրենսդրական կարգավորման միջոցով՝ նշելով բացառապես սահմանափակման նպատակները:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է Սահմանադրությամբ նախատեսել դրա ընդհանուր հիմքերը:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 24-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբը գալիս է այն եզրահանգման, որ սույն հոդվածով ամրագրված իրավունքը անհրաժեշտ է նախատեսել որպես սահմանափակման ոչ ենթակա իրավունք:

* * *

ՀՈԴՎԱԾ 25. ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔԸ

- 1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:**
- 2. Մարմնական պատիժներն արգելվում են:**
- 3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:**

25-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային խումբը գտնում է, որ քննարկվող կարգավորումն անհրաժեշտ է դիտարկել իրավական տեխնիկայի կանոնների համատեքստում:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կարևորագույն կանոններից է իրավական ակտերում շաղկապների օգտագործումը:

Մասնավորապես օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ *այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմանների առկայությունը պարտադիր է, չի կարող կիրառվել «կամ» շաղկապը: Այս դեպքում պետք է կիրառվեն «և» կամ «ու» շաղկապները:*

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ պարբերությունները սահմանում են՝ *եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:*

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետներով, ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

Նշված կանոնները համադրելով Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի հետ կարելի է արձանագրել նորմում առկա տարրնկալումն այն առումով, որ «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի» բառերից հետո «կամ» շաղկապի օգտագործումը հանգեցնում է այն եզրակացության, որ «անմարդկային կամ նվաստացնող» բառերը վերաբերելի են միայն «վերաբերմունքին» և չեն վերաբերում «պատժին»: Նախագծում ներկայացված ձևակերպման պարագայում քննարկվող դրույթն ընկալվում է **«ոչ ոք չի կարող ենթարկվել պատժի»** ձևաչափով, ինչը չի բխում նորմի բուն իմաստից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 25-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբը գալիս է այն եզրահանգման, որ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող պատժի**

կամ վերաբերմունքի»:

* * *

ՀՈԴՎԱԾ 26. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոքի չի կարելի անձնական ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

1) անձն իրավասու դատարանի կողմից դատապարտվել է հանցանք կատարելու համար.

2) անձը չի ենթարկվել դատարանի իրավաչափ կարգադրությանը.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած կամ երբ դա ողջամտորեն անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դատախարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վրանգավոր վարակիչ հիվանդությունների փարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև, երբ անձն ունի հոգեկան խանգարում, թմրամոլ կամ գինեմոլ է.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:

3. Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկումն անիրավաչափ է:

5. Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները:

6. Սույն հոդվածի խախտմամբ ազատությունից զրկված անձն օրենքով սահմանված հիմքերով և կարգով ունի պատճառված վնասի հատուցման իրավունք:

**26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Նախ՝ հարկ է նշել, որ ուսումնասիրվող հարցի վերաբերյալ թե՛ գործող Սահմանադրությունը, թե՛ Նախագիծը, մեր կարծիքով, ունեն բացթողում, այն է՝ չեն նախատեսում կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորություն: Այսինքն, այն բոլոր դեպքերը, երբ անձը կարող է ազատ արձակվել, նույնիսկ եթե ձերբակալումը կամ կալանավորումը իրավաչափ են, սակայն ձերբակալման կամ կալանավորման նպատակներին կարելի է հասնել այլ երաշխիքներով:

Կարծում ենք, ճիշտ կլինի սահմանադրական մակարդակով սահմանել նորմ, որը կերաշխավորի անձի ազատության իրավունքից զրկումը միայն ծայրահեղ դեպքերում, երբ իրավաչափ նպատակին հնարավոր չէ հասնել այլընտրանքային խափանման միջոցներով:

Նախագծի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն անձին կարելի է ազատությունից զրկել նրա գինեմոլ կամ թմրամոլ լինելու պատճառով:

Գործող Սահմանադրությամբ գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանց կարելի է ազատությունից զրկել հասարակական վտանգը կանխելու նպատակով:

Այսպիսով, Նախագիծը մի կողմից, կարծես թե, նեղացրել է անձանց շրջանակը՝ չդիտելով թափառաշրջիկությունը ազատությունից զրկման պայման: Սակայն, մյուս կողմից, անկախ որևիցե հանգամանքից, հնարավորություն է տվել միայն գինեմոլության կամ թմրամոլության համար անձին ազատությունից զրկել:

Այս մոտեցումը տրամաբանական չէ, և պետք է մարդու հիմնական իրավունքների պաշտպանության տեսանկյունից նահանջ համարել գործող Սահմանադրության համեմատ:

Գործող Սահմանադրությունը նախատեսում է ազատությունից զրկման օրինականությունը ու հիմնավորվածությունը վերադաս դատական ատյան բողոքարկելու իրավունքը: Կարծում ենք, սա լուրջ երաշխիք է, որն անհրաժեշտ է ներառել Սահմանադրության Նախագծում:

Նախագծով վերլուծվող հոդվածից հեռացվել է անձի ապօրինի խուզարկության չենթարկվելու, այն բողոքարկելու և ապօրինի խուզարկության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքը:

Սակայն, Նախագծի 24-րդ հոդվածի, որը նախատեսում է ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև 76-րդ և 60-րդ հոդվածների ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ այս մոտեցումը կարելի է արդարացված համարել:

Քննարկվող հոդվածի 5-րդ մասով սահմանվել է, որ ***Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները***: Սույն դրույթը կրկնում է Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթն այն տարբերությամբ, որ գործող կարգավորմամբ Նախագծով սահմանված ***«պայմանագրային պարտավորություններ»*** եզրույթի փոխարեն օգտագործվում է ***«քաղաքացիաիրավական պարտավորություններ»*** եզրույթը:

Կարծում ենք, որ գործող կարգավորումն առավել նպատակահարմար է այն

հաշվառմամբ, որ «**քաղաքացիաիրավական պարտավորություններ**» եզրույթն առավել լայն է, քան «**պայմանագրային պարտավորություններ**» եզրույթը և իր բովանդակության մեջ ներառում է ոչ միայն պայմանագրային պարտավորությունները, այլ նաև քաղաքացիաիրավական շրջանառության մեջ ոչ պակաս տարածում և կարևորություն ունեցող արտապայմանագրային պարտավորությունները:

Նախագծով տրված կարգավորման պարագայում ստացվում է, որ **Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ նա ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները, սակայն կարելի է ազատություններից զրկել, երբ վերջինս ի վիճակի չէ կատարելու իր քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող արտապայմանագրային, օրինակ՝ մեկ այլ անձին կամ այլ անձի գույքին պատճառած վնասի՝⁸ հետևանքով ծագող դեղիկային պարտավորությունները:**

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 26-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբը գալիս է այն եզրահանգման, որ քննարկվող հոդվածում անհրաժեշտ է կատարել հետևյալ խմբագրումները՝

1. Նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ պարբերությամբ (փես ընդգծված մասը)՝

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկումն անիրավաչափ է: **Դատարանը անձին ազատ է արձակում, եթե իրավաչափ ձերբակալման կամ կալանավորման նպատակին հնարավոր է հասնել այլ երաշխիքներով:**

2. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝ «6) հանրության համար վրանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև, երբ անձն ունի հոգեկան խանգարում, կամ թմրամոլության կամ գինեմոլության **պատճառով վրանգ է ներկայացնում:**»:

3. Նախագծի 26-րդ հոդվածի 5-րդ մասում «պայմանագրային պարտավորություններ» բառերը փոխարինել «**քաղաքացիաիրավական պարտավորություններ**» բառերով:

4. Նախագծի 26-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ՝ «**Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական արյանում:**»:

⁸ Տվյալ պարագայում «վնաս» եզրույթն օգտագործելիս նկատի ունենք դրա քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում տրված մեկնաբանությունը:

* * *

ՀՈԴՎԱԾ 29. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման առումով Հայաստանում վիճակը չափազանց մտահոգիչ է: Մի շարք անկախ ուսումնասիրություններ, հետազոտություններ և զեկույցներ փաստում են, որ Հայաստանում լուրջ խնդիրներ կամ կանանց դեմ խտրականության (այդ թվում՝ հասարակական և քաղաքական կյանքում նրանց ոչ բավարար մասնակցության, հանրային և մասնավոր սեկտորում առանցքային պաշտոններում նրանց թերներկայացվածության առումով), կանանց դեմ բռնության (առավելապես՝ գրեթե անպատիժ ընտանեկան բռնության), ընտանիքում և հասարակությունում կանանց դերերի և պարտականությունների վերաբերյալ կարծրատիպերի, սեռով պայմանավորված հղիության ընդհատումների առումով:⁹ Միաժամանակ, խտրականության դեմ պայքարի առումով նույնպես Հայաստանի Հանրապետությունը չի ձեռնարկում բավարար քայլեր:

Նման իրավիճակում պարզապես կանանց և տղամարդկանց իրավահավասարության ամրագրումը և խտրականության արգելումը բոլորովին բավական չեն: Փոխարենը, մեր կարծիքով, անհրաժեշտ է սահմանել պետության պոզիտիվ պարտականություն գործնականում ապահովելու այդ իրավահավասարության իրականացման ռեալ հնարավորություններ՝ այդ թվում հատուկ ժամանակավոր միջոցների կիրառման միջոցով (համաձայն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1979թ. կոնվենցիայով սահմանված պարտավորություններ¹⁰: Մասնավորապես, այդպիսի

⁹ Human Rights Committee, Concluding observations adopted by the Human Rights Committee at its 105th session, 9-27 July 2012, CERD/C/ARM/CO/5-

6, առ 01.09.2015 թ. հասանելի է հետևյալ հղումով՝

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR/C/ARM/CO/2&Lang=En, Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women, 2 February 2009, CEDAW/C/ARM/CO/4/Rev.1, առ 01.09.2015 թ. հասանելի է հետևյալ հղումով՝

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW/C/ARM/CO/4/Rev.1&Lang=En

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW/C/ARM/CO/4/Rev.1&Lang=En

¹⁰ Տես՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Հանձնաժողովի 5-րդ Ընդհանուր Ռեկոմենդացիա (1988), տես նաև՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի 18-րդ Ընդհանուր Ռեկոմենդացիա (1988):

միջոցները պետք է ուղղված լինեն կանանց աշխատաշուկայում և առհասարակ տնտեսության մեջ, հասարակական և քաղաքական կյանքում լիարժեք ինտեգրելու համար: Նման միջոցները կարող են ներառել պոզիտիվ դիսկրիմինացիոն վերաբերմունք, քվոտային համակարգեր և այլն:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնախումբը դեռ 2009 թվականին հորդորել է Հայաստանի Հանրապետությանը օրենսդրորեն սահմանել և իրագործել պոզիտիվ դիսկրիմինացիայի համապատասխան միջոցառումներ, սակայն մինչ օրս որևէ նկատելի առաջընթաց այս առումով չի արձանագրվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 29-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ խմբագրությամբ՝ **«խտրականությանը կամ անհավասարությանը նպաստող, կանանց և տղամարդկանց իրավահավասարության արդյունավետ իրականացմանը խոչընդոտող սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ հիմնապատճառների հաղթահարման համար կիրառելի միջազգային պայմանագրերի համաձայն կարող են կիրառվել դրական խտրականություն կամ անհավասարություն ենթադրող հատուկ ժամանակավոր միջոցներ»:**

* * *

ՀՈԴՎԱԾ 32. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության գաղտնիությունը որոշակի ժամկետով կարող է սահմանափակվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման, մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգը կանխելու նպատակով:

32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն գործող Սահմանադրության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը սահմանվել է առանձին հոդվածով:

Գործող Սահմանադրությունում այն ներառված է 23-րդ հոդվածում (5-րդ պարբերություն) և տեղ է գտել անձնական ու ընտանեկան կյանքի հարգանքի, անձնական բնույթի տեղեկությունների օգտագործմանը վերաբերող դրույթներից հետո:

Բովանդակային առումով Սահմանադրությունից տարբերությունը կայանում է նրանում, որ հաղորդակցության ձևերից թվարկվել են միայն նամակագրություն

ու հեռախոսային խոսակցությունները, և նկատի ունենալով գիտության ու տեխնիկայի զարգացման տեմպերն ու անկանխատեսելիությունը, նշվել է «հաղորդակցության այլ ձևեր» ընդհանուր հասկացությունը, որի մեջ կարող են մտնել ինչպես ներկայումս հայտնի և գործող հաղորդակցության միջոցները, այնպես էլ հետագայում ներմուծվողները:

Հոդվածի 2-րդ մասում սահմանվել է սույն իրավունքի սահմանափակման հնարավորությունը և այդպիսի սահմանափակման նպատակները, ինչը գործող Սահմանադրությունում բացակայում է (խոսքը չի գնում 43-րդ հոդվածի մասին) և նշված է միայն «օրենքում սահմանված դեպքերում և կարգով»:

Կարծում ենք, որ 2-րդ մասի ձևակերպումը խնդրահարույց է հետևյալ պարճառաբանություններով՝

1. Հաղորդակցության գաղտնիությունը որոշակի ժամկետով կարող է սահմանափակվել միայն օրենքով, դափարանի որոշմամբ՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման, մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վրանգը կանխելու նպատակով:

«Կարող է սահմանափակվել օրենքով, դափարանի որոշմամբ» ձևակերպումը չի համապատասխանում օրինաստեղծ գործունեության կանոններին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումների (45-րդ հոդվածի 10-րդ կետի 4-րդ պարբերություն) համաձայն՝ *եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:*

Ստացվում է, որ ստորակետով տարանջատված լինելով, սույն իրավունքի յուրաքանչյուր սահմանափակման դեպքի համար պետք է լինի «*օրենք+դափարանի որոշում*» պայմանների, ինչպես նաև նույն մասում նշված լեգիտիմ բոլոր նպատակների առկայությունը: Այս կապակցությամբ կարծում ենք, որ պետք է կիրառվի հետևյալ ձևակերպումը՝ **«*օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դափարանի որոշմամբ*»:**

Ըստ նման ձևակերպված թե՛ գործող Սահմանադրության 23-րդ հոդվածում, և թե՛ Նախագծի տարբեր հոդվածներում, երբ Սահմանադրությամբ որոշակի իրավիճակի մանրամասնումը տրված է օրենքին (օրինակ՝ տե՛ս Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին կետը, 31-րդ հոդվածի 3-րդ կետը):

2. Նման տրամաբանությամբ է ձևակերպված նաև ՄԻԵԿ 8-րդ հոդվածի 2-րդ մասը:

Սույն իրավունքի սահմանափակման լեգիտիմ նպատակները ձևակերպված են հետևյալ կերպ՝ **«*հանցագործությունների կանխման կամ բացահայտման, մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վրանգը կանխելու նպատակով*»:**

Նման ձևակերպումը՝ **ա)** ըստ էության, լայնացնում է ներկայումս գործող իրավակարգավորմամբ հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցությունների այլ տեսակների վերահսկման հնարավոր դեպքերի շրջանակը և **բ)** ուղղակիորեն հակասում է ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայով հստակ մշակված պահանջներին:

ա) Նույնիսկ ներկայումս գործող «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը «նամակագրության, փոստային,

հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում» և «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման համար նախատեսել է անհամեմատ սահմանափակ հնարավոր դեպքեր, քան առաջարկվում է Նախագծով: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշված միջոցառումները «կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:» Մինչդեռ, Նախագծով նախատեսվում է նույնիսկ «**գույքին սպառնացող վտանգը կանխելու**» նպատակով հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման հնարավորություն:

բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման վերաբերյալ իր մոտեցումները վերահաստատել է Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի վերաբերյալ գործով վճռում, մասնավորապես, նշելով հետևյալը. «124. Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և վերահսկման այլ ձևերը լուրջ միջամտություն են անձնական կյանքի և հաղորդակցության նկատմամբ և համապատասխանաբար պետք է հիմնված լինեն հատկապես հստակ «օրենքի» վրա: Կարևոր է խնդրի վերաբերյալ ունենալ հստակ և մանրամասն կանոններ, հատկապես երբ կիրառման համար առկա տեխնոլոգիաները շարունակաբար կատարելագործվում են (տե՛ս Kopp, վերևում մեջբերված, կետ 72, և Amann, վերևում մեջբերված, կետ 56):

125. Վերահսկման գաղտնի միջոցառումների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում Դատարանը մշակել է հետևյալ նվազագույն երաշխիքները, որոնք պետք է սահմանվեն օրենսդրությամբ՝ լիազորությունների չարաշահումներից խուսափելու նպատակով. Հանցագործությունների բնույթը, որոնք կարող են վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք հանդիսանալ, մարդկանց այն կատեգորիաների սահմանումը, որոնց հեռախոսները կարող են ենթակա լինել գաղտնալսման, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահմանման համար, կանխարգելիչ միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ տվյալները այլ կողմերին հաղորդելու դեպքում, և այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն (տե՛ս Weber and Saravia v. Germany (որոշում), գանգապ թիվ 54934/00, կետ 95, ՄԻԵԿ 2006XI, Association for European Integration and Human Rights and Ekimdzhiiev v. Bulgaria, գանգապ թիվ 62540/00, կետ 76, 2007թ. հունիսի 28, և Liberty and Others v. the United Kingdom, գանգապ թիվ 58243/00, կետ 95, 2008թ. հուլիսի 1):

126. Ավելին, ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվի պետական մարմինների կողմից 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքներին կամայական միջամտության դեմ իրավական պաշտպանության միջոց: Մասնավորապես, այն դեպքում, երբ գործադիր իշխանությունն իրականացնում է գաղտնի գործունեություն, կամայականության վտանգներն ակնհայտ են: Քանի

որ հաղորդումների վերահսկման միջոցառումների իրականացումը գործնականում բաց չէ շահագրգիռ անհատների կամ հանրության լայն զանգվածների կողմից ուսումնասիրության համար, ապա իրավունքի գերակայությանը կհակասի, եթե գործադիր իշխանությանը կամ դատավորին շնորհիվ անսահմանափակ լիազորությամբ արտահայտվող իրավական հայեցողություն: Հետևաբար, օրենքը պետք է բավարար հստակությամբ նախատեսի իրավասու մարմիններին տրամադրվող ցանկացած նման հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը՝ հաշվի առնելով փոխադրվող միջոցառման օրինական նպատակը՝ անհատին կամայական միջամտության դեմ համապատասխան պաշտպանություն տրամադրելու համար¹¹:

127. Հետևաբար, Դատարանը պետք է համոզված լինի, որ լիազորությունների չարաշահման դեմ գոյություն ունեն համարժեք և արդյունավետ երաշխիքներ: Նշվածի գնահատումը պայմանավորված է գործի բոլոր հանգամանքներով, այն է՝ հնարավոր միջոցառումների բնույթը, շրջանակը և տևողությունը, դրանք կարգադրելու համար պահանջվող հիմքերը, դրանք թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու համար իրավասու մարմինները, և ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը:»¹²:

Եթե Հանձնաժողովը ցանկանում է Սահմանադրության տեքստում սահմանել ցանկացած իրավունքի սահմանափակման հնարավոր դեպքերը կամ դրա համար պահանջվող չափանիշները, ապա կարծում ենք սույն իրավունքի վերաբերյալ պետք է նշվեն ՄԻԵԴ-ի կայուն նախադեպային պրակտիկայով հաստատված պահանջները, այլ ոչ թե սահմանվեր, ըստ էության, անսահմանափակ մի շրջանակ, որի մեջ ներառվում են նույնիսկ գույքային հանցագործությունները:

Ավելին, տեսականորեն չի կարելի բացառել նույնիսկ այնպիսի իրավիճակ, երբ Նախագծով նշված «գույքին սպառնացող վտանգը» չպարունակի հանցակազմի հատկանիշներ, այլ ուղղակի հանդիսանա վարչական զանցանք:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 32-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «**Հաղորդակցության գաղտնիությունը որոշակի ժամկետով կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման, մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգը կանխելու նպատակով:**»:

¹¹ Տե՛ս Kruslin, վերևում մեջբերված, կետ 30, Amann, վերևում մեջբերված, կետ 56, և Rotaru, վերևում մեջբերված, կետեր 55-56:

¹² Տե՛ս Klass and Others v. Germany, 1978թ. սեպտեմբերի 6, կետ 50, շարք Ա, թիվ 28, Association for European Integration and Human Rights and Ekimdzhiiev, վերևում մեջբերված, կետ 77, և Uzun v. Germany, զանգատ թիվ 35623/05, կետ 63, ՄԻԵԴ 2010 (քաղվածքներ):

* * *

ՀՈԴՎԱԾ 33. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Նման տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով հստակ սահմանված նպատակով, շահագրգիռ անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով նախատեսված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքագրված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

33-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձն իրավունք ունի ծանոթանալու միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքագրված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

Մինչդեռ, օրենքով անձնական տվյալների մշակման իրավունք տրված է ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, այլ նաև՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց¹³: Ուստի, արդարացի է, որպեսզի անձն իրավունք ունենա ծանոթանալու նաև ոչ պետական մարմինների¹⁴ կողմից իր մասին հավաքագրված տվյալներին, օրինակ՝ իր գործատուի կողմից հավաքագրված տեղեկություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 33-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբը Նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել է հետևյալ խմբագրությամբ. «**3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու հանրային կամ մասնավոր իրավունքի սուբյեկտի մոտ իր մասին հավաքագրված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:**»:

¹³ Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերը:

¹⁴ Տես՝ Նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի տրված եզրակացության 45-րդ կետը:

* * *

ՀՈԴՎԱԾ 34. ԱՄՈՒՆԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Ամուսնական փարիքի հասած կինը և փղամարդն իրենց կամքի ազատ արտահայտությամբ միմյանց հետ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք ունեն:

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

3. Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Ամուսնության փարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով»:

34-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկվող հոդվածում «հավասար իրավունքներից օգտվելը» որպես 2-րդ մաս նախատեսելը, կարծես կապը խզում է նույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերի միջև:

Նախագծի 34-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ բացառապես «ամուսնանալու ու ընտանիք կազմելու» իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն ավելացված 2-րդ մասի պարագայում կարող է տարընթերցման խնդիր լինել, այն տեսանկյունից, թե արդյո՞ք ամուսնանալիս հավասար իրավունքներից օգտվելը ևս կարող է սահմանափակվել:

Ուստիև, առաջարկվում է 34-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել որպես 1-ին մասի 2-րդ նախադասություն:

Ինչ վերաբերվում է առհասարակ Նախագծի 34-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությանը, ապա դրա անհրաժեշտությունն, անկասկած, կա. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածով տրված են ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները (կրկնակի ամուսնություն, անգործունակ ճանաչված լինելը, որոշակի անձանց միջև ամուսնության արգելքը): Մինչդեռ գործող ՀՀ Սահմանադրության 35-րդ, 43-րդ և 44-րդ հոդվածների վերլուծությունից ստացվում է այնպես, որ ամուսնանալու իրավունքի արգելքը պայմանավորված է բացառապես ռազմական կամ արտակարգ դրության առկայությամբ: Հետևաբար, փաստորեն, ներկայումս ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածը հակասության մեջ է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի հետ:

ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 34-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ամուսնական փարիքի հասած կինը և փղամարդն ունեն իրենց կամքի ազատ արտահայտությամբ միմյանց հետ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

3. Ամուսնության փարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով»:

* * *

ՀՈԴՎԱԾ 35. ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել դատական ակտով, օրենքով սահմանված դեպքերում՝ երեխայի խնամքին և առողջությանն սպառնացող վտանգից պաշտպանելու նպատակով:

3. Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար: Մանրամասները սահմանվում են օրենքով:

35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նշված հոդվածը Սահմանադրության 36-րդ հոդվածի անփոփոխ տարբերակն է:

Իրավական տեխնիկայի կանոններից ելնելով հատկանշական է քննարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը: Մասնավորապես՝ նշված նորմի համաձայն՝ **Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել դատական ակտով, օրենքով սահմանված դեպքերում՝ երեխայի խնամքին և առողջությանն սպառնացող վտանգից պաշտպանելու նպատակով:**

Տվյալ կարգավորման համաձայն ծնողական իրավունքից զրկելը կամ այն սահմանափակելը կարող է իրականացվել երեխայի խնամքին և առողջությանը սպառնացող վտանգից պաշտպանելու նպատակով: Ընդ որում՝ որպես «սպառնալիքի առարկա» հանդիսացող «խնամքի» և «առողջության» պայմանները թվարկելիս օգտագործվում է «և» **շաղկապը:**

Նշված ձևակերպումը քննարկելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ պարբերության համատեքստում ստացվում է, որ ծնողական իրավունքից զրկելը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ առկա է սպառնալիք երեխայի խնամքին և առողջությանը միաժամանակ, մինչդեռ գործնականում առկա վտանգը կարող է սպառնալ միայն երեխայի առողջությանը, իսկ խնամքին՝ ոչ և հակառակը:

Կարծում ենք այդ առումով առավել արդյունավետ է «կամ» **շաղկապի կիրառումը**, քանի որ երեխայի շահերի պաշտպանությունից ելնելով երեխայի

«խնամքը» և «առողջությունը» կարևորվում են հավասարապես՝ ոչ միան համադրության մեջ (միաժամանակյա առկայությամբ), այլ առանձին՝ որպես երեխայի ինքնուրույն շահ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 35-րդ հոդվածի մեկնաբանությունը՝ Աշխատանքային խումբն առաջարկում է հոդվածի 5-րդ մասը սահմանել հետևյալ կերպ. **«Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել դատական ակտով, օրենքով սահմանված դեպքերում՝ երեխայի խնամքին կամ առողջությանը սպառնացող վրանգից պաշտպանելու նպատակով:»:**

* * *

ՀՈԴՎԱԾ 37. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պարտադիր է: Միջնակարգ կրթության նվազագույն տևողությունը տասը տարի է: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք պետական ուսումնական հաստատություններում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունի: Մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք:

37-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության իրավունքի վերաբերյալ գործող Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 39. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները որոշվում են օրենքով:

Ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

Ընդհանուր առմամբ Նախագծում կրթության իրավունքի կարգավորման շրջանակները մնացել են գրեթե նույնը, ինչ գործող Սահմանադրությամբ:

Այդուհանդերձ, Նախագծում կան որոշ տարբերություններ, որոնք ավելի շատ ենթադրում են գործող Սահմանադրությամբ սահմանված կրթության իրավունքի սահմանափակումներ, քան ընդլայնում: Ասվածը հանգում է հետևյալին.

- Թե՛ Նախագիծը, թե՛ Սահմանադրությունը սահմանում են **անվճար կրթության իրավունքը**: Ի տարբերություն գործող Սահմանադրության, որը, սահմանելով անվճար կրթության իրավունքը, փաստորեն ուրվագծել է նաև դրա իրականացման **երաշխիքները՝ պետության համար սահմանելով ֆինանսական աջակցության տրամադրման պարտականություն**, Նախագիծը սուկ սահմանում է անվճար կրթության իրավունքը՝ անպատասխան թողնելով, թե ինչ հիմունքներով է այն իրականացվելու և ինչ նվազագույն երաշխիքներ է պարտավոր ապահովել պետությունը: Ըստ այդմ, անհասկանալի է՝ ինչ կերպ է ապահովվելու յուրաքանչյուր ոքի անվճար կրթությունը:

Ավելին՝ պետությունը, ի տարբերություն գործող Սահմանադրության, սահմանադրական մակարդակով չստանձնելով նաև ուսումնական հաստատություններին ֆինանսական աջակցության պարտականություն, փաստորեն հետընթաց է արձանագրում անվճար հիմունքներով կրթության ապահովումից: Նման ենթատեքստ կարելի է տեսնել նաև պետական ուսումնական հաստատությունների ինքնակառավարման հարցի հետ կարգավորումների համեմատական վերլուծությունից, քանի որ, եթե գործող Սահմանադրությունն ամրագրում է **բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքներն օրենքով սահմանելու**, ապա Նախագծով ԲՈՒՀ-երին տրվում է ինքնավարության ավելի շրջանակ: Նման պայմաններում կարելի է ենթադրաբար խոսել, որ իրականում **պետական ԲՈՒՀ-երն են ապահովելու անվճար կրթության իրավունքի** իրականացումն իրենց հայեցողությամբ, որը **լրջորեն կարող է վրանգել Նախագծով ամրագրված անվճար կրթության իրականացման սկզբունքի լիարժեք իրագործումը՝** դրա համար սահմանված նվազագույն երաշխիքների բացակայությամբ:

- Խնդրո առարկա հողվածի հետ կապված Նախագծում առանձնացվել են մի քանի պարբերություններ: Ընդհանուր տրամաբանական վերլուծությամբ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ 1-ին պարբերությունը վերաբերում է **միջնակարգ կրթությանը**, 2-րդ պարբերությունը՝ **բարձրագույն և միջին մասնագիտական (արհեստագործական) կրթությանը**, իսկ 3-րդը՝ **ԲՈՒՀ-երի ինքնավարությանը**:

Այս վերլուծությունից անհասկանալի է դառնում՝ ինչ տրամաբանությամբ է

մարդու կրթության իրավունքը ներառվել միջնակարգ կրթության իրավունքի հետ միևնույն պարբերությունում, երբ իրականում «կրթության իրավունքն» ավելի տարողունակ հասկացություն է, քան «միջնակարգ կրթության իրավունքը»: Հետևաբար **«Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք» արտահայտությունը պետք է առանձնացվի առանձին պարբերությամբ:**

Նախագծում հողվածի շարադրման վերը նշված տրամաբանության անտեսումը հանգեցրել է նաև նրան, որ իրականում Նախագիծը չի սահմանում և չի պաշտպանում կրթության իրավունքն իր ողջ ծավալով և բովանդակությամբ, մինչդեռ «կրթության իրավունքը» չի սկսում և չի ավարտվում միջնակարգ, բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ: Այն սկսվում է **նախադարձական կրթությամբ** (pre-primary education)¹⁵, և հակված է ներառելու նաև **հետբուհական կրթությունը** (post-doctoral education)¹⁶:

Հատկանշական է «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայի¹⁷ (սույն կետում՝ Կոնվենցիա) 4-րդ հոդվածին անդրադարձն այն առումով, որ Կոնվենցիան անդրադառնում է միայն տարրական, բարձրագույն և միջնակարգ կրթությանը: Համաձայն Կոնվենցիայի նշված հոդվածի՝

«Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, բացի այդ, պարտավորվում են մշակել, զարգացնել և կիրառել այնպիսի պետական քաղաքականություն, որն ազգային պայմաններին ու սովորույթներին համապատասխանող մեթոդներով միտված լինի նպաստելու կրթության բնագավառում հավասար հնարավորություն և վերաբերմունք ապահովելուն, մասնավորապես.

ա) տարրական կրթությունը դարձնել անվճար և պարտադիր, միջնակարգ կրթությունը՝ իր տարբեր ձևերով, դարձնել բոլորի համար հնարավոր և մատչելի, բարձրագույն կրթությունը դարձնել բոլորի համար հավասարապես մատչելի՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, ապահովել դպրոց հաճախելու՝ օրենքով սահմանված պարտականության կատարումը բոլորի կողմից...»:

Կոնվենցիայի հետ համադրման տեսանկյունից ողջունելի է, որ պետությունը շարունակում է Կոնվենցիայի համեմատությամբ ավելի բարենպաստ պայմաններ սահմանել և ստանձնում է անվճար հիմունքներով ապահովելու ոչ միայն մարդու

¹⁵ Տե՛ս ISCED 2011թ. դասակարգումը:

https://en.wikipedia.org/wiki/International_Standard_Classification_of_Education#ISCED_2011_levels_of_education_and_comparison_with_ISCED_1997 :Կրթության նշված փուլը «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով անվանվում է որպես «նախադպրոցական կրթություն»:

¹⁶ ISCED 2011թ. դասակարգման բարձրագույն աստիճանը սահմանափակվում է բարձրագույն և հավասարաժեք (doctoral or equivalent) կրթության փուլով, և այն կարգավորվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով: Սակայն միջազգային պրակտիկայում արագ տարածում է ստանում նաև post-doctoral կրթությունը, որը որոշ արևմտյան զարգացած երկրների կրթական համակարգում գործող գիտական բարձրագույն կոչումից (PhD) հետո ստացված վերապատրաստման հնարավորությունն է՝ հետազոտության տեսական և գիտագործական տարբերակով: Ի դեպ, ՀՀ օրենսդրությունն օգտագործում է «հետբուհական մասնագիտական կրթություն» արտահայտությունը, սակայն, այն կարծես թե նույն մակարդակի վրա է դրվում ասպիրանտուրայի, հայցորդության հետ, մինչդեռ այն գիտական կոչում ստնալու հաջորդող գործընթաց է ենթադրում:

¹⁷ ՀՀ ԱԳՆ ՊՏ 2004. 12.20/4(12), ընդունվել է 15.12.1960թ.:

տարրական կրթությունը¹⁸, այլ նաև միջնակարգ կրթությունը 10 տարվա համար: Այս առումով պետությունը Նախագծով ստանձնում է ավելի մեծ պարտականություն, քան, օրինակ, միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնված պարտականություններն են:

Միևնույն ժամանակ, ինչպես նշվեց վերը, աչքաթող են արված ոչ պակաս կարևոր **նախատարրական և հետբուհական կրթությունները**, որոնք ապահովելու պարտականությունը պետությունը ևս պետք է ստանձնի կամ առնվազն :

• Նախագծի 37-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանվում է, որ «Յուրաքանչյուր ոք պետական ուսումնական հաստատություններում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունի», մինչդեռ Նախագծում միաժամանակ օգտագործելով «**միջնակարգ կրթություն**» և «**միջնակարգ մասնագիտական կրթություն**» արտահայտությունները դրանց ըմբռնման և շփոթելու տեսանկյունից խնդիրներ են առաջանում, հատկապես եթե հաշվի առնենք, որ «**միջնակարգ մասնագիտական կրթության**» փոխարեն ՀՀ գործող օրենսդրությունն օգտագործում է «**միջին մասնագիտական կրթություն**» եզրույթը¹⁹: Նաև հաշվի առնելով ISCED դասակարգման չափանիշները, որոնց համաձայն, անգլերենում տվյալ երևույթի համար կիրառվում է «Post-secondary non-tertiary education» եզրույթը²⁰, Նախագծով սահմանված «միջնակարգ մասնագիտական կրթություն» եզրույթի փոխարեն կարելի է սահմանել «**հետմիջնակարգ կրթություն**» եզրույթը, կամ առնվազն կիրառել այն եզրույթը, որն արդեն կիրառվում է ՀՀ գործող օրենսդրությունում, այն է՝ «միջին մասնագիտական կրթություն»:

Վերոնշյալից բացի, կարծում ենք, որ պետք է հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրության «կոշտ» բնույթն, այսինքն՝ այն, որ Սահմանադրության ընդունման և փոփոխության համար նախատեսված է հանրաքվեի ընթացակարգ, և պարտադիր կրթության նվազագույն շեմի սահմանումը սահմանադրական նորմով նպատակահարմար չէ նաև այն նկատառումից ելնելով, որ կրթական համակարգի փոփոխության (պարտադիր կրթության նվազագույն պահանջի հետ կապված) Սահմանադրության փոփոխության նպատակով հանրաքվեի անցկացման անհրաժեշտություն է առաջանալու, ինչը կոշտ Սահմանադրության ինստիտուտի հետ, կարծում ենք, համադրելի չէ:

¹⁸ Կոնվենցիայի անգլերեն տեքստում օգտագործվում է «primary education» եզրույթը, որը, ըստ UNESCO-ի Operational definition of basic education (Thematic framework, December 2007) զեկույցում (<http://www.unesco.org/education/framework.pdf>) ներկայացված նկարագրության, տվյալ երևույթի էվոլյուցիայի և համեմատական վերլուծությանը ներկայացված միջազգային փորձի, ավելի շատ արտահայտում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված համանուն «տարրական կրթության» էությունը և շարունակվում է հիմնականում մինչև անչափահասի 9 տարեկան լրանալը:

¹⁹ Տե՛ս «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը:

²⁰ Բառացիորեն «post-secondary» արտահայտությունը կթարգմանվի որպես «հետմիջնակարգ»:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը նշված վերլուծության հիման վրա առաջարկվում է՝ Նախագծի 37-րդ հոդվածի 1-ին մասում 3-րդ նախադասությունը («Պարտադիր կրթության նվազագույն տևողությունը տասներկու տարի է:») հանել կամ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը ձևակերպել հետևյալ կերպ. **«Պարտադիր կրթության ծրագրերը և նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով:»**

Ծանոթություն: Աշխատանքային խմբի կողմից այս կարծիքն ընդունելուց հետո Հանձնաժողովը 37-րդ հոդվածը ներկայացրել է հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 37. Կրթության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պարտադիր կրթության նվազագույն տևողությունը փաստերկու տարի է: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունի: Անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք՝ ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

* * *

ՀՈԴՎԱԾ 38. ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մարդն ազատ է՝ անելու այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ կամ օրենքներով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները:

38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկվող նորմն ամրագրում է գործող Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված կարգավորումը, սակայն անհասկանալի է թե ինչու՞ նախատեսված չէ գործող Սահմանադրությամբ ամրագրված դրույթն այն մասին, որ **«Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:**

Սույն հոդվածով ամրագրված իրավունքի համակարգային վերլուծությունից (հաշվի առնելով նաև գործող Սահմանադրության 42-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները) կարելի է առանձնացնել դրա հիմքում ընկած երեք հիմնական նորմ-սկզբունքներ.

- **յուրաքանչյուր ոչ ազատ է կախարելու այն ինչ արգելված է Սահմանադրությամբ կամ օրենքով.**

- **յուրաքանչյուր ոք ազատ է անելու այն ինչը չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները.**
- **ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով.**

Քննարկվող նորմում տեղ են գտնել միայն վերոնշյալ առաջին և երկրորդ սկզբունքները, իսկ երրորդ սկզբունքը, որը ոչ պակաս կարևոր է հանվել է:

Կարծում ենք, որ նշված մոտեցումը նույնպես հարկ է ամրագրել սահմանադրական նորմով, հետևյալ պատճառաբանությամբ.

Մարդը ոչ միայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ կրող սուբյեկտ է: Ինչպես նշվում է Մեկնաբանություններում՝ պարտականությունները հասարակական անհրաժեշտության արտահայտման իրավական ձևն են և կոչված են մարդու իրավունքների հետ մեկտեղ կյանքում ապահովելու կարգուկանոնը, հավասարակշռությունը, կայունությունը, խաղաղությունը: Իրավական պարտականությունը պետության կողմից անձի համար սահմանված իրավական անհրաժեշտությունն է, նրա վարքագծի պարտադիր չափն ու տեսակը²¹:

Կարծում ենք իրավական պարտականությունը վարքագծի այն ձևն է, որի սահմանները պետք է հստակ տրվեն օրենքով:

Ընդ որում՝ Մեկնաբանություններում տրվում է իրավական պարտականությունը սահմանող օրենքի «*հարկանիշները*», այն է՝ պարտականությունները սահմանող օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, կանխատեսելի և մատչելի, որպեսզի անձը կարողանա ճիշտ կողմնորոշվել իրենից օրենքով պահանջվող վարքագծի հարցում:

Ըստ էության, իրավական պարտականության՝ օրենսդրորեն սահմանման հիմնական նպատակը կայանում է դրանում իրավական որոշակիության սկզբունքի ամրագրման գաղափարի մեջ²²:

Իրավական որոշակիության սկզբունքին իր նախադեպային որոշումներով անդրադարձ է կատարել նաև ՄԻԵԴ-ը՝ մասնավորապես նշելով, որ *օրենքը պետք է լինի մատչելի և ձևակերպված լինի այնքան հստակ, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի կանխատեսել այն հետևանքը, որը կառաջացնի որոշակի գործողության կատարումը*:

Օրենքը պետք է **իրավական լինի**, այսինքն՝ իր հիմքում պետք է ունենա **իրավունքի գերակայության սկզբունքը**: Օրենքը դառնում է անհատի ազատության, անվտանգության և սեփականության պաշտպանը, նրա իրավունքների իրացման երաշխավոր միայն այն դեպքում, երբ **իրավական է**: Իրավական օրենքին ներկայացվող պահանջներն են **իրավական որոշակիությունը, հստակությունը և կանխատեսելիությունը**:

Վերոնշյալ դիտարկումներից ելնելով՝ գտնում ենք, որ քննարկվող հոդվածում անհրաժեշտ է պահպանել նախկին՝ «**Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով**» դրույթը:

²¹ Տես՝ Մեկնաբանությունների 495 էջը:

²² Կարելի է փաստել, որ իրավական որոշակիության սկզբունքի հիմքում ընկած է իրավունքի գերակայության գաղափարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 38-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է թողնել Սահմանադրության 42-րդ հոդվածով նախատեսված ձևակերպումը կամ Նախագծի 38-րդ հոդվածով նախատեսված նորմը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ **«Մարդն ազատ է՝ անելու այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ կամ օրենքներով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:**

* * *

ՀՈԴՎԱԾ 41. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր ոք իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում երաշխավորվում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը, հասարակության շրջանում առկա կարծիքների արտացոլումը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց պարվի ու բարի համբավի, ինչպես նաև այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

**41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ըստ էության հանդիսանում է գործող Սահմանադրության 27-րդ հոդվածի վերախմբագրված տարբերակը, իսկ 1-ին մասում տրված ձևակերպումը հնարավորինս մոտեցվել է ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 1-ին մասին:

Միաժամանակ, 3-րդ մասով փորձ է արվել սահմանել սույն իրավունքի սահմանափակման հնարավոր դեպքերը, սակայն կարծում ենք, որ ընտրված «կարող է սահմանափակվել միայն օրենքով» ձևակերպումը խիստ անհաջող է (այն կրկնվում է նաև Նախագծի բազմաթիվ այլ հոդվածներում): Տվյալ դեպքում առավել նպատակահարմար է «կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով» ձևակերպման կիրառումը: Հակառակ դեպքում հասկացվում է, որ յուրաքանչյուր սահմանափակման դեպքի համար

անհրաժեշտ է օրենքի ընդունում: Ինչ վերաբերում է սահմանափակման նպատակներին, ապա դրանք, ըստ էության, համահունչ են ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշվածներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 41-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է 41-րդ հոդվածի 3-րդ մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «**3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց պարզի ու բարի համբավի, ինչպես նաև այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:**»:

* * *

ՀՈԴՎԱԾ 42. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական, տեխնիկական ստեղծագործության և դասավանդման ազատություն:

42-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծագործելու ազատության վերաբերյալ գործող Սահմանադրության 40-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 40. Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

Ընդհանուր առմամբ Նախագծում որպես ստեղծագործելու ազատության տարրեր առանձնացված են նույն բաղադրիչները, ինչ գործող Սահմանադրությամբ: Դրանք են՝ գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունները²³:

• Նախագծով դադարել են Սահմանադրական ամրագրում ստանալու այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են «գիտության նվաճումներից օգտվելու» և «հասարակության մշակութային կյանքին մասնակցելու» իրավունքները: Եվ եթե մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված է, ապա նույնը չի կարելի ասել գիտության

²³ Ի դեպ, գործող Սահմանադրության համեմատությամբ, որտեղ հոդվածները վեճաբարված չեն, Նախագիծը համառոտ և ամփոփ կերպով վերնագրում բացահայտում է հոդվածի բովանդակությունը՝ դարձնելով Սահմանադրությունն ավելի ծավալուն:

նվաճումներից օգտվելու իրավունքի մասին: Հարկ է նշել, որ իրավունքների ավելի կոնկրետ և առարկայական թվարկումը սահմանադրական մակարդակով թույլ է տալիս հետագայում պրակտիկ առումով ապահովել դրանց արդյունավետ կիրարկումը: Օրինակ՝ որոշ դեպքերում պրակտիկ առումով դժվար է հղում կատարել որոշակի նորմերի, որոնք ամրագրում են մարդու որոշ բնական իրավունքներ կամ տրամաբանական առումով իրականության մեջ գոյություն ունեցող իրավունքներ, սակայն դժվար է լինում այդ իրավունքներն ամրագրող նորմերին հղում անելը հայցեր ձևակերպելիս, քանի որ դրանք չեն դարձել պոզիտիվ իրավունքի մաս ներպետական օրենսդրության մակարդակով կամ պետության կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերի ուժով: Նշվածը նաև որոշակի առումով պետք է դիտարկել դատական պաշտպանության արդյունավետ ապահովման իրավունքի ենթատեքստում:

Վերը նշվածի լույսի ներքո պետք է նշել, որ, օրինակ՝ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան²⁴ (15, 22, 23 հոդվածներ) աշխատողների համար սահմանում է հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքներ՝ դրանց իրացման համար գործատուների որոշակի պարտականությունների զուգահեռ սահմանմամբ: Այս փաստաթղթի հիման վրա դատական պաշտպանություն կարող են հայցել աշխատողները: Բացի այդ, որոշակի առումով մշակութային կյանքին մասնակցելու և ժամանցի իրավունքներ է ամրագրում Եվրոպական մշակութային կոնվենցիան²⁵, որով պաշտպանություն կարող են հայցել նաև ոչ աշխատողները: Այս և մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա դատական արդյունավետ պաշտպանություն կարող են հայցել նաև ոչ աշխատողները:

Մինչդեռ, Նախագծից հանելով «գիտության նվաճումներից օգտվելու» իրավունքը, հետագայում պրակտիկ խնդիրներ կարող են առաջանալ այնպիսի իրավունքների իրականացման ժամանակ, որոնք սերտորեն կապված են անձի մի շարք իրավունքների կիրառման հետ, որոնց արդյունավետ իրացումն անուղղակիորեն և անմիջականորեն կապված է գիտության և տեխնիկայի ժամանակակից ձեռքբերումները շրջանառության մեջ դնելուց: Սա կարող է կապված լինել, օրինակ՝ կյանքի իրավունքի պաշտպանության հետ, երբ շրջանառության մեջ պետք է դրվեն բժշկական սարքավորումներ:

• Նախագծով ամրագրվել է «դասավանդման ազատությունը»: «Դասավանդելը», ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»²⁶ բնորոշվում է որպես՝

1. որևէ առարկա կարգալ ուսումնական հաստատությունում, դաս տալ,
2. դասատու լինել, դասավանդմամբ զբաղվել:

Ընդհանուր առմամբ դասավանդելը մարդու իրավունք է և պետք է դիտարկվի *աշխատանքի ընդհատության ազատության* համատեքստում, եթե այն անձը ցանկանում է կատարել այն որպես աշխատանք՝ մասնագիտական առումով հոգեկան բավարարում ստանալու և վարձատրվելու նպատակով: Այս առումով դասավանդման ազատությունը՝ որպես հիմնարար և սահմանադրական

²⁴ ՀՀԱԳՆՊՏ 2004.11.26/6(14), ընդունվել է 03.05.1996թ., ուժի մեջ է մտել 01.03.2004թ.:

²⁵ ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13), ընդունվել է 19.12.1954թ., ուժի մեջ է մտել 25.04.1997թ.:

²⁶ Էդուարդ Բագրատի Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, <http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=24&pageNumber=293>::

մակարդակով ամրագրվող ազատություն սահմանելն առնվազն ինքնանպատակ է: Ավելին՝ սահմանադրական մակարդակով *դասավանդման ազատության* առանձնացմամբ չպետք է հատուկ ուշադրության հատկացնել դրան՝ որպես սուկ աշխատանքի, ըստ էության, տարբերություն չդնելով գիտությամբ զբաղվող դասավանդող մասնագետների և ոչ գիտական գործունեությամբ զբաղվող մասնագետների միջև: Անշուշտ, դասավանդումը՝ որպես աշխատանքի իրավունքի մաս, արդեն իսկ վերապահված է յուրաքանչյուր անձի, մինչդեռ սահմանադրական մակարդակով դրա առանձնացումը պետք է հետ քայլ համարել այնքանով, որ իրականում ուսումնական հաստատությունում դաս տալն ավելի շատ գիտական հենքի առկայություն պետք է ենթադրի և գործի առաջին հերթին որպես գիտնականների առաջնահերթ իրավունք: Միաժամանակ չբացառելով այն հանգամանքը, որ գիտական կոչման առկայությունն ինքնին անձին չպետք է և չի կարող առանձնացնել այլ մասնագետներից, սահմանադրական մակարդակով «*դասավանդման ազատությունը*» ստեղծում է հավասար հնարավորություն գիտական կոչում ունեցող անձանց և գիտական կոչում չունեցող անձանց՝ դրանով ապահովելով նրանց միջև դասավանդման իրավական լիակատար հավասարություն և փոքրացնելով հետաքրքրությունը երիտասարդության շրջանում գիտությամբ զբաղվելու նկատմամբ: Մինչդեռ, պետությունը մինչ գիտությունը հռչակել է որպես գերակա ուղղություն և անգամ քայլեր ձեռնարկել գիտությամբ զբաղվող անձանց դասավանդելուն պարտավորեցնելու առումով²⁷:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը նշված վերլուծության հիման վրա առաջարկվում է թողնել գործող Սահմանադրության 40-րդ հոդվածի շարադրանքը:

* * *

ՀՈԴՎԱԾ 43. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆԸ

- 1. Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք ունի:***
- 2. Օրենքով սահմանված դեպքերում բացօթյա փարածքներում կազմակերպվող հավաքներն անցկացվում են ողջամիտ ժամկետում կատարված իրազեկման հիման վրա:***

²⁷ Մի կողմ թողնելով գիտական գործունեությամբ զբաղվելուն պարտավորեցնելու իրավաչափության հարցը հարկադիր աշխատանքի տեսանկյունից՝ պետք է մեջբերել, օրինակ, ՀՀ կառավարության 26.04.2007թ. «Ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձև և բարձրագույն ու հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգը հաստատելու մասին» թիվ 581-Ն որոշումը, որի հիման վրա՝ պետական պատվերի շրջանակներում ընդունված դիմորդը, պայմանագիր կնքելով, պարտավորվում է ուսումն ավարտելուց հետո առնվազն 3 տարի աշխատել կամակերպությունում:

3. Չինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության և քննչական մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով:

4. Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պաշտպանության, հանցագործությունների կանխման, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

43-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նշված հոդվածը հանդիսանում է գործող Սահմանադրության 29-րդ հոդվածի վերախմբագրված տարբերակը:

Միաժամանակ, 4-րդ մասով կրկին փորձ է արվել սահմանել սույն իրավունքի սահմանափակման հնարավոր դեպքերը, սակայն ինչպես և բազմաթիվ այլ դեպքերում, կարծում ենք, որ ընտրված ձևակերպումը խիստ անհաջող է (այն կրկնվում է նաև Նախագծի բազմաթիվ այլ հոդվածներում): Այսպես, «*կարող է սահմանափակվել միայն օրենքով*» ձևակերպման փոխարեն կարծում ենք առավել ճիշտ կլիներ հետևյալ ձևակերպումը՝ «*կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով*»: Հակառակ դեպքում հասկացվում է, որ յուրաքանչյուր սահմանափակման դեպքի համար անհրաժեշտ է օրենքի ընդունում: Սահմանափակման նպատակներն, ըստ էության, համահունչ են ՄԻԵԿ 11-րդ հոդվածի 2-րդ մասում նշվածներին:

Նորամուծություն է հանդիսանում առաջարկվող հոդվածի 2-րդ մասը, որը վերաբերում է բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքների համար իրազեկման պարտականությունը օրենքով սահմանելու մասին վերապահմանը: Ըստ էության, նման իրազեկման համակարգը գործում է «Հավաքների ազատության մասին» ՀՀ գործող օրենքում, որը թե՛ ԵԱՀԿ-ի կողմից, և թե՛ ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայում խնդրահարույց չի դիտվում (գործող օրենքում տրված կարգավորումների շրջանակում):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը նշված վերլուծության հիման վրա առաջարկվում է նախագծի 43-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պաշտպանության, հանցագործությունների կանխման, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:**»:

* * *

ՀՈԴՎԱԾ 44. ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր ոք այլ անձանց հետ ազատորեն միավորվելու իրավունք ունի, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելը և դրանց անդամագրվելը:

2. Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ մասնավոր միավորման:

3. Միավորումների կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

4. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

5. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

44-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ մասնավոր միավորման»:

Անհասկանալի է Նախագծի կարգավորման նպատակը՝ տարանջատելու պետական միավորումները մասնավորից և հարկադիր անդամագրման արգելք սահմանել միայն մասնավոր միավորումներին անդամագրվելու համար:

Կարծում ենք, նման մոտեցումը մարդու իրավունքների սահմանման և պաշտպանության տեսանկյունից նահանջ քայլ է Սահմանադրության գործող տեքստի՝ պետական միավորների համար որևէ վերապահում չկատարող ձևակերպումից. «Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման»:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկում ենք թողնել քննարկվող նորմի գործոց Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված՝ «Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման» ձևակերպումը կամ Նախագծի 44-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել «Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ միավորման» խմբագրությամբ:

* * *

ՀՈԴՎԱԾ 45. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. *Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության:*

2. *Դափավորները, դափախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների՝ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:*

3. *Կուսակցությունները փարեկան հաշվեպնդություններ են հրապարակում իրենց միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև իրենց գույքի մասին, որի նկատմամբ վերահսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական լիազոր մարմինը:*

4. *Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի փապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը փապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ: Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ:*

45-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 45-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության»: Նորմն, ըստ էության, հանդիսանում է 44-րդ հոդվածի երկրորդ մասի նորմի (Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ մասնավոր միավորման) մասնավոր դրսևորում՝ առանց որևէ լրացուցիչ բովանդակային ծանրաբեռնվածության: Ուստի, նման նորմի առկայության նպատակահարմարությունը կասկածելի է:

Նախագծի 45-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ «Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի փապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը փապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման: Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ»: Սահմանադրական կարգը բռնի տապալելու հայտարարությունների կամ դրա նպատակով բռնություն կիրառելու դեպքում կուսակցությունների գոյությունը սահմանադրական մակարդակով հակասահմանադրական հոչակելը, թերևս, զրկում է տվյալ հիմքով կուսակցությունների գործունեությունն արգելելու իրավասություն ունեցող մարմնին՝ Սահմանադրական դատարանին, արված հայտարարությունների կամ գործողությունների բնույթը, վտանգավորության

աստիճանը (օրինակ՝ ինչ ինտենսիվությամբ, ինչքան մասսայականացված, կուսակցության շարքային անդամի, թե՛ ղեկավար կազմի կողմից կատարված լինելը և բազմաթիվ այլ հանգամանքներ) դրա հակասահմանադրականության տեսանկյունից գնահատելու հայեցողությունից: Այսինքն, նման գործողությունների և հայտարարությունների առկայության (անգամ աննշան կամ չնչին դրսևորումների) դեպքում կուսակցությունների գործունեության արգելումը, քննարկվող սահմանադրական նորմի ուժով, դառնում է ֆորմալ, մեխանիկական գործընթաց, ինչը, թերևս, մարդու իրավունքների և ժողովրդավարական հասարակության համար պետք է անընդունելի լինի:

Բացի այդ, անհասկանալի է նախագծի երկակի մոտեցումը. Սահմանադրական դատարանի՝ կուսակցության գործունեությունը կասեցնելու իրավասությունը նախատեսել Սահմանադրության մակարդակով, իսկ արգելելու իրավասությունը՝ օրենքի:

Անհասկանալի է նաև կուսակցության, այլ ոչ թե՛ կուսակցության գործունեության հակասահմանադրական լինելու մասին ձևակերպումը: Կուսակցությունը, համապատասխան գրանցման ընթացակարգեր անցնելու դեպքում օրինական է և կարող է գործել: Այլ բան է, որ վերջնիս գործունեությունը կարող է չհամապատասխանել որոշակի չափանիշների: Նշվածն է հիմնավորում նաև Նախագծի այն մոտեցումը, համաձայն որի, կուսակցության գործունեությունը կարող է նաև կասեցվել: Իհարկե, չի մասնավորեցվում, թե ո՞ր դեպքերում՝ դա թողնելով օրենքի կարգավորմանը, սակայն, միանշանակ է, որ որոշակի հանգամանքներ փոփոխվելու դեպքում (օրինակ՝ կուսակցության առաջնորդի՝ կուսակցությունից կամ, ավելին՝ քաղաքականությունից ընդհանրապես հեռանալու պարագայում), կուսակցության գործունեությունը, կարող է կրկին լինել սահմանադրական և թույլատրվել: Նշվածի հիմքով, թերևս, նպատակահարմար է հակասահմանադրական ճանաչել ոչ թե կուսակցությունը, այլ տվյալ կուսակցության գործունեությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով 45-րդ հոդվածի մեկնաբանություններն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է.

1. Նախագծի 45-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ նախադասությունը հանել:

2. Նախագծի 45-րդ հոդվածի չորրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Սահմանադրական կարգի բռնի տապալում քարոզող կամ սահմանադրական կարգը տապալելու նպատակով բռնություն կիրառող կուսակցությունների գործունեությունը Սահմանադրական դատարանի կողմից կարող է ճանաչվել հակասահմանադրական և արգելվել: Օրենքով սահմանված դեպքերում, Սահմանադրական դատարանի որոշմամբ, կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել:»:**

* * *

ՀՈԴՎԱԾ 46. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

2. Յուրաքանչյուր երեխա, ում ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք: Հայազգի յուրաքանչյուր ոք Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք: Սույն մասում սահմանված իրավունքների իրականացման կարգը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը սահմանվում են օրենքով:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերականգնման և դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

46-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիության իրավունքի վերաբերյալ գործող Սահմանադրության 11.3-րդ և 30.1-րդ հոդվածները սահմանում է.

Հոդված 11.3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:

Հոդված 30.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք: Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով:

Ոչ ոք չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով

նախադրված դեպքերի:

Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Գործող Սահմանադրության և Նախագծի միջև կան որոշ տարբերություններ՝ կապված քաղաքացիության իրավունքի ամրագրման հետ: Դրանք հանգում են հետևյալին.

1. Հայկական ծագում ունեցող օտարերկրյա քաղաքացիների քաղաքացիության ձեռքբերման կարգ.
2. ՀՀ սահմաններից դուրս ՀՀ կողմից իր քաղաքացուն պաշտպանելու իրավական սահմանների առավել ստույգ ամրագրում.
3. Երկքաղաքացիության վերացում.

Կան նաև որոշ փոփոխություններ, որոնք իմաստային առումով հիմնականում պահպանում են գործող Սահմանադրության կողմից քաղաքացիության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորման շրջանակները:

Հարկ է անդրադառնալ հիմնական տարբերություններին, որոնք առանձնացվել են վերը: Մասնավորապես՝

1. Հայկական ծագում ունեցող օտարերկրյա քաղաքացիների քաղաքացիության ձեռքբերման կարգ.

Գործող Սահմանադրությունն ամրագրում է, որ «Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով», մինչդեռ Նախագիծն ամրագրում է, որ «Հայազգի յուրաքանչյուր ոք Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք»: Առերևույթ ակնհայտ է, որ գործող սահմանադրական նորմի համեմատությամբ

Ա) սահմանափակվել է հայկական ինքնություն ունեցող կամ հայկական ծագում ունեցող կամ իրեն հայ համարող անձի ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունքը: Այսպես՝ Նախագիծը փաստորեն հնարավորություն է ընձեռում ՀՀ քաղաքացի դառնալու միայն նրանց, ովքեր բնակություն են հաստատելու ՀՀ-ում: Այս տեսանկյունից հեղիեղուկ է «ՀՀ-ում բնակություն հաստատելու» փաստը և դրա վերահսկումը, հատկապես այն դեպքերում, երբ առհասարակ անձը կարող է սկզբում բնակություն հաստատել ՀՀ-ում, իսկ մի քանի ամիս հետո վերստին տեղափոխվել այլ երկիր մշտական բնակության նպատակով՝ օգտագործելով ազատ տեղաշարժի իր իրավունքը: Այդ կապակցությամբ հարց է ծագում՝ ինչ կարգով, ինչ հիմնավորումներով և ինչ տրամաբանությամբ է անձին տրվում իրավունք դիմելու ՀՀ քաղաքացի դառնալու համար, եթե վերջինս կարող է ցանկացած պահի լքել ՀՀ-ն և ինչու է իմաստը նման անձանց ու այն անձանց միջև տարբերություն դնելը, որոնք, բնակություն չհաստատելով ՀՀ-ում, այդուհանդերձ, ցանկություն ունեն ձեռքբերելու ՀՀ քաղաքացիություն: Ավելին՝ հաշվի առնելով արդի մի շարք իրողություններ, ինչպես, օրինակ, այլ երկրներում հայկական ինքնության և ինքնագիտակցության զարթոնքը, ովքեր ունեն հայկական ինքնություն և ցանկանում են դառնալ ՀՀ քաղաքացի, փաստորեն զրկվում են իրենց հայրենիքի հետ կապը վերահաստատելու իրավական հնարավորությունից՝ ՀՀ քաղաքացիություն

ծեռքերելու միջոցով:

Բ) «Ազգությամբ հայ» արտահայտության փոխարեն օգտագործվում է «հայազգի» եզրույթը: Հաշվի առնելով, որ, ըստ էության, երկու եզրույթներն ունեն գրեթե միևնույն իմաստը, ցանկալի կլինի պահպանել ՀՀ օրենսդրության մեջ արդեն իսկ կիրառվող «Ազգությամբ հայ» եզրույթը: Որպես համեմատություն կարելի է նշել Իսրայելի օրինակը, որը ևս ունի մեծաթիվ սփյուռք, և Իսրայելն իր օրենսդրական ակտերում²⁸ օգտագործում է «իրեաների» քաղաքացիություն ստանալու գաղափարը՝ միաժամանակ սահմանելով «իրեա» համարվելու չափանիշները Վերադարձի մասին (Law of Return) 1950թ. իր օրենքով: Իսկ, օրինակ, Իռլանդիան, որը ևս ունի մեծաթիվ սփյուռք, ավելի խիստ չափանիշներ է սահմանում Իռլանդիայի քաղաքացիություն ստանալու համար, եթե անգամ նրանք ծնվել են Իռլանդիայի քաղաքացի հանդիսացող առաջին աստիճանի կամ երկրորդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող ծնողներից²⁹: Ամեն դեպքում եզրույթի իմաստային փոփոխության անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել «**հայկական ինքնություն ունեցող**» կամ «**հայկական ծագում ունեցող**» արտահայտությունները³⁰:

2. ՀՀ սահմաններից դուրս ՀՀ կողմից իր քաղաքացուն պաշտպանելու իրավական սահմանների առավել ստույգ ամրագրում.

Այս առումով թերևս միակ տարբերությունը գործող Սահմանադրության հետ այն է, որ պետությունը ստանձնում է դա իրականացնել միջազգային իրավունքի հիման վրա: Հաշվի առնելով, որ Նախագծի 5-րդ հոդվածում հստակ լուծված չէ, թե միջազգային իրավական փաստաթղթերի և Նախագծի հաստատման դեպքում Սահմանադրության նորմերի մրցակցության պայմաններում, որ մեկին պետք է տրվի գերակայություն, խնդրահարույց կարող է դառնալ ՀՀ քաղաքացիներին այլ պետություններին արտահանձնելու խնդիրը: Մինչդեռ Սահմանադրության գերակայության սահմանմամբ կարելի է կանխել արտաքին ճնշումները:

3. Երկքաղաքացիության վերացում.

Նշվածը, ըստ էության, հանդիսանում է պետության քաղաքականության հարց, դրա համար իրավական առումով առարկություններ չեն ներկայացվում: Սակայն պետք է հաշվի առնել ներկայումս առկա երկքաղաքացիների մեծ թիվը և նրանց պաշտպանությունն իրականացնել օրենսդրական ակտերով:

Ուշադրության է արժանի նաև այն, որ ՀՀ քաղաքացիությունից զրկելը պետք է արգելվի միայն պետությանը, ինչը համահունչ կլինի նաև «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիային³¹, մինչդեռ ՀՀ քաղաքացուն պետք է ընձեռվի հնարավորություն ընտրելու՝ ո՞ր երկրի քաղաքացի է ուզում լինել՝ սահմանելով նրա խնդրանքի հիման վրա քաղաքացիությունից զրկելու հնարավորություն:

Ինչ վերաբերվում է ՀՀ քաղաքացիներին օտարերկրյա պետությանը հանձնելու արգելքին, ապա այն սահմանվել է նախագծի 53-րդ հոդվածի 3-րդ

²⁸<http://www.mfa.gov.il/mfa/aboutisrael/state/pages/acquisition%20of%20israeli%20nationality.aspx> , https://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Other_Law_of_Return.html

²⁹ <http://www.inis.gov.ie/en/INIS/consolidationINCA.pdf/Files/consolidationINCA.pdf>

³⁰ Ազգությամբ հայ լինելու փաստը հաստատող փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 23.11.2007թ. թիվ 1390-Ն որոշմամբ:

³¹ ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12), ընդունվել է 30.08.1961թ., ուժի մեջ է մտել 16.08.1984թ.:

մասում:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 46-րդ հոդվածի մեկնաբանությունները՝ Աշխատանքային խումբն առաջարկում է այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 46. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

2. Ազգությամբ հայն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք: Սույն մասում սահմանված իրավունքների իրականացման կարգը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը սահմանվում են օրենքով:

3. Առանց սեփական խնդրանքի Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության վերականգնման և դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:»:

* * *

**ՀՈԴՎԱԾ 47. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

1. Ազգային ժողովի ընտրությունների կամ հանրաքվեի օրը փասնութ փարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեն:

2. Ազգային ժողովի պարգամավոր կարող է ընտրվել քսանհինգ փարին լրացած, վերջին հինգ փարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ փարում Հանրապետությունում մշտապես բնակվող և պետական լեզվին փիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց փասնութ փարին լրացել է ընտրությունների կամ տեղական հանրաքվեի օրը, և որոնք մշտապես բնակվում են փվյալ համայնքում:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունք չունեն դաբական ակտով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիբավորությամբ կաբարված ծանր հանցագործությունների համար օրինական ուժի մեջ մբած դաբավճռով դաբապարբված անձինք:

**47-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Նախագծի 47-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունք չունեն դատական ակտով անգործունակ ճանաչված, ինչպես նաև ծանր հանցագործությունների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք»: Գործող Սահմանադրության համապատասխան տեքստի համաձայն՝ «Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Առաջարկվող փոփոխության արդյունքում ստացվում է հետևյալը.

1. ընտրվել կարող է միջին կամ ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտված և պատիժը կրող անձը (հավանաբար, Նախագծի նորամուծությունն է):
2. Ընտրվել կարող է առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված և պատիժը կրող անձը (ամենայն հավանականությամբ, բացթողում է):

ԵՃՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկվում է վերախմբագրել Նախագծի 47-րդ հոդվածի 4-րդ մասը հետևյալ կերպ. «Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունք չունեն դատական ակտով անգործունակ ճանաչված, ինչպես նաև ծանր **և առանձնապես ծանր** հանցագործությունների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք»::

* * *

ՀՈԴՎԱԾ 48. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Յուրաքանչյուր քաղաքացի իր ունակություններին և մասնագիտական պարաստվածությանը համապատասխան մրցութային հիմունքներով օրենքով սահմանված հանրային ծառայության պաշտոնի անցնելու իրավունք ունի:

2. Հանրային ծառայողները ծառայում են ամբողջ ժողովրդին: Նրանք պարտավոր են իրենց պարտականությունները կատարել անաչառ և քաղաքականապես չեզոք՝ ելնելով բացառապես մասնագիտական նկատառումներից:

3. Այս իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

**48-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հանրային ծառայության անցնելու իրավունքի վերաբերյալ գործող Սահմանադրության 30.2-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 30.2. Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք:

Հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:

Ընդհանուր առմամբ Նախագծով հանրային ծառայության իրավունքի կարգավորումն ավելի ընդգրկում է տրված, քան գործող Սահմանադրությամբ: Օրինակ՝ գործող Սահմանադրությամբ չի արձարծվում **մրցութային հիմունքներով** հանրային ծառայության անցնելը, ինչպես նաև **մանրամասնված չեն հանրային ծառայողի գործունեության հիմնական սկզբունքները**: Մեկ այլ դրական առաջխաղացում է այն, որ Նախագիծը նշում է «**հանրային ծառայության անցնելու**» մասին, մինչդեռ գործող Սահմանադրությունն ամրագրում է «**հանրային ծառայության ընդունվելու**» իրավունքը: Հաշվի առնելով հանրային ծառայության էությունը և այդ իրավունքի վերաբերյալ դոկտրինալ մեկնաբանությունները՝ ավելի իրականում ավելի ընդունելի է հենց «**հանրային ծառայության անցնելու**» ձևակերպման կիրառումը:

Այդուհանդերձ, պետք է նկատել, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ Նախագծում տեղ գտած ձևակերպումներն ունեն որոշակի խնդիրներ, որոնք հանգում են հետևյալին.

Իհարկե, մի կողմ դնելով այն հանգամանքը, որ գործող Սահմանադրությունը ևս ամրագրում է հանրային ծառայության անցնելու իրավունքը, մեր համոզմամբ, **հանրային ծառայության անցնելու իրավունքը չպետք է ամրագրվի որպես առանձին իրավունք սահմանադրական մակարդակով**, քանի որ այն, իր էությամբ, հանդիսանում է «աշխատանքի ազատ ընտրության իրավունքի» բովանդակության մաս և տարր, ինչը բխում է նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի էությունից:

Հանրային ծառայության անցնելը, ըստ էության, իրենից ներկայացնում է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացում, որն առանձնանում է աշխատանքային այլ իրավահարաբերություններից որոշ հիմնական հատկանիշներով՝

Ա) այն հիմնականում իրականացնում են քաղաքացիները՝ ելնելով պետական անվտանգության շահերից.

Բ) այն իրականացվում է առանձնահատուկ պայմաններում՝ կապված հանրային ծառայության զբաղեցված պաշտոնի առանձնահատկություններից: Ըստ այդմ, հանրային ծառայողների համար սահմանվում են պարտականությունների և արտոնությունների, ներքին կարգապահական կանոնների ու պատասխանատվության, էթիկայի ու գործունեության սահմանափակումների այլ շրջանակ՝ ի համեմատություն այլ աշխատողների:

Հաշվի առնելով հանրային ծառայության դերի և նշանակության

կարևորությունը յուրաքանչյուր պետության համար՝ ընդունվել են մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնցից որոշները վավերացվել են նաև ՀՀ կողմից, օրինակ՝ «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» կոնվենցիան³²: Հարկ է նկատել, որ հանրային ծառայության էությունը և հանրային ծառայողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը թելադրում են ավելի շատ **կարևորել հանրային ծառայողների աշխատանքային և սոցիալական պաշտպանությունը**, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության անվտանգությունը, որը կարող է բխել նրանց մասնագիտական գործունեությունից: Հետևաբար՝ հանրային ծառայողի երաշխիքների ամրագրումը միջազգային իրավական փաստաթղթերում կատարվել է այն պարզ նկատառումով, որ պետությունը, միաժամանակ հանդիսանալով հանրային ծառայողների հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող գործատու, և միաժամանակ որպես աշխատանքային հարաբերությունները կարգավորող մարմին ու որպես աշխատանքային վեճեր լուծող մարմին, կարողանա արդյունավետորեն ապահովել իր նշված գործառույթների համատեղումը՝ չվնասելով հանրային ծառայողների՝ որպես աշխատողների աշխատանքային և սոցիալական շահերին: Ըստ այդմ, պետությունն ինքը համապատասխան օրենսդրական ակտերով պարտավոր է ապահովել այդ երաշխիքները՝ հիմք ընդունելով ընդհանուր աշխատանքային հարաբերությունների համեմատությամբ հանրային ծառայության առանձնահատկությունները, սակայն իրականում ամրագրել դա սահմանադրական մակարդակով, այն էլ ոչ այն նպատակների պաշտպանության վեկտորով, որոնք ուղղորդում են միջազգային իրավական փաստաթղթերը, առնվազն ինքնանպատակ է, քանի դեռ դրա իրականացման համար բացակայում են իրական մեխանիզմները և արդյունավետ դատական պաշտպանությունը: Բացի այդ, դա կաշկանդում է առհասարակ հանրային ծառայության անցնելը ոչ մրցութային հիմունքներով, օրինակ՝ կարող է բացառություն նախատեսվել գիտական կոչում ունեցող անձանց համար, կամ հնարավոր է հանրային ծառայության որոշ բնագավառներում թույլատրել աշխատանքի անցնելու նաև օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, կամ հանրային ծառայության որոշ պաշտոններում հնարավոր է թույլատրել առանց մրցութային հիմունքների ծառայության ընդունելու քաղաքացիների, եթե հիմնական ծառայողը երկարատև բացակայում է աշխատանքից (ժամանակավոր անաշխատունակության, երեխայի խնամքի արձակուրդ և այլն): Փաստորեն մրցութի հայտարարումը և երկարատև ժամանակամիջոցում հանրային ծառայողի ընտրությունը կարող են ավելի շատ վնասել աշխատանքին, քան օգնել դրան:

Բացի այդ՝ ի՞նչ տրամաբանությամբ չեն ամրագրվել, օրինակ, հանրային ծառայողների անփոփոխելիության, կամ նրանց աշխատանքային շահերի պաշտպանությամբ հանդես եկող կազմակերպությունների (միավորումների) անկախության սկզբունքներն այն դեպքում, երբ ամրագրված են նրանց անաչառ գործելու կամ քաղաքականապես չեզոք գործելու սկզբունքները: Մինչդեռ ակնհայտ է, որ քանի դեռ չկան իրական մեխանիզմներ հանրային ծառայողների

³² ՀՀԱԳԼՊՏ2004.12.20/5(13), ընդունվել է 27.06.1978թ., ուժի մեջ է մտել 29.07.1995թ.:

աշխատանքային և սոցիալական շահերի պաշտպանության համար, պահանջել նրանցից լինելու քաղաքականապես չեզոք, պարզապես կարող է որակվել ոչ իրատեսական, իսկ այն ամրագրող սահմանադրական նորմը՝ ոչ կենսունակ: Այս մասով անհրաժեշտ է նշել, որ, օրինակ, աշխատանքային հիմնարար իրավունքներից որոշ հանրային ծառայողներ ընդհանրապես զրկված են, օրինակ՝ գործադուլի իրավունքը, կամ նրանց համար սահմանվում են կարգապահական պատասխանատվության այնպիսի հիմքեր, որոնք հակված ենք անգամ որակելու որպես հարկադիր աշխատանք դառնալու հավակնություն ունեցող (օրինակ՝ առանց հանրային ծառայողի համաձայնության նրա պաշտոնի կամ դասային աստիճանի իջեցումը, դրամական տուգանքների կիրառումը), իսկ սա նշանակում է, որ հասունացել է պահը սահմանադրական կարգավորմամբ բարելավել նրանց վիճակը՝ հասարակության լայն շերտերի մոտ հետաքրքրություն առաջացնելով հանրային ծառայության նկատմամբ: Այս լույսի ներքո հատկապես կարևորվում է հանրային ծառայության իրավունքի սահմանադրական հիմունքների ամրագրումը հենց առաջին հերթին նրանց պաշտպանվածությունն ապահովելու համար, ինչից ածանցյալ է նրա սրտացավ ծառայությունը պետությանը և ամբողջ ժողովրդին:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով քննարկվող հոդվածի մեկնաբանությունը՝ Աշխատանքային խումբն առաջարկում է հանել նշված հոդվածը Նախագծից, կամ դրանում ամրագրել որոշակի իրական երաշխիքներ ինչպես օրինակ, հանրային ծառայողի անփոփոխելիությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում, հանրային ծառայողների շահերը ներկայացնող և պաշտպանող մարմինների անկախության սկզբունքը պետական մարմիններից:

* * *

ՀՈԴՎԱԾ 52. ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլ անձանց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Անհատական և կոլեկտիվ հանրագրերին առնչվող մանրամասները սահմանվում են օրենքով:

52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանրագրերի ինստիտուտը նորամուծություն է Սահմանադրության մեջ, ներառում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքների՝ պետական մարմինների գործունեության թափանցիկության, քննադատության, վերահսկելիության, մատչելիության, հասանելիության հասկացությունները:

Հանրագրերը՝ petitio, հայտ, միջնորդություն, գրավոր պահանջով հանրային հաստատություններին և պաշտոնական անձանց (օրինակ՝ Խորհրդարան, այլ

ներկայացուցչական մարմին, կառավարություն, պետության ղեկավար) դիմելու իրավունք: Որպես կանոն, դա մի փաստաթուղթ է, որը պարունակում է որևէ հարցի շուրջ միասնական կարծիք ունեցող քաղաքացիների ստորագրությունները: Հանրագրերը կարող են ներկայացվել ազգային, կրոնական, ռասայական, սեռային, սոցիալական պատկանելության, քաղաքական հայացքների և այլախոհության այլ ձևերի առկայության դեպքերում ՀՀ Սահմանադրության և օրենքների զանգվածային խախտումների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակումների կապակցությամբ: Բացի այդ, հանրագրերը կարող են ներկայացվել նաև, երբ առկա են անհանդուրժողականության, բռնություն և ատելություն հրահրելու և նմանատիպ այլ իրավիճակներ: Միևնույն ժամանակ, հանրագրերով չպետք է խախտվեն այլոց իրավունքներն ու օրինական շահերը: Հանրագրերը պետք է ներկայացվեն գրավոր, պարունակեն ներկայացնողների անունները, հասցեներն ու ստորագրված լինեն վերջիններիս կողմից: Դրանք ենթակա են պարտադիր ընդունման պետական համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Հանրային իշխանության մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ողջամիտ ժամկետում /որոշ աղբյուրներում՝ 30-օրյա ժամկետում/ պատասխան ներկայացնել հանրագրերում բարձրացված հարցերի կապակցությամբ:

Հանրագրերը չեն կարող որևէ կերպ ազդել դատարանի անկախության վրա, սակայն այս վերապահումը հողվածում նշված չէ, որը կարծում եմ, լուրջ բացթողում է:

Հանրագրերը կարող են տարածվել նաև ինտերնետում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկվում է նախատեսել դրույթ, որ հանրագիր չի կարող ներկայացվել դատարաններին:

* * *

ՀՈԴՎԱԾ 53. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԱՄ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

1. Քաղաքական հետապնդման ենթարկվող անձինք Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու իրավունք ունեն: Ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

2. Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե արտաքսման կամ հանձնման դեպքում լուրջ սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգումների կամ այլ անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացին օտարերկրյա պետությանը կարող է հանձնվել միայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:

**53-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Քաղաքական ապաստանի վերաբերյալ դրույթը նորամուծություն է: Գործող Սահմանադրությունը միայն նշում է, որ «քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը» լուծվում են ՀՀ Նախագահի կողմից (55-րդ հոդված, կետ 15):

Հատկանշական է, որ պետության կողմից օտարերկրացիներին մուտքի հնարավորություն տալու միջազգային պարտականության գոյության հարցը թե՛ քննարկումների առարկա է: Դասական միջազգային իրավունքը համարել է այս հարցը պետության ինքնիշխան իրավասության ոլորտի ներքո գտնվող խնդիր, այն է՝ պետություններն իրենք են ազատ եղել որոշելու թույլ տալ օտարերկրացիների մուտքի իրավունք, թե ոչ³³:

Այսօր գործող միջազգային փաստաթղթերից 1951թ. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիան ³⁴ (վերանայված 1967թ. Արձանագրությամբ) սահմանում է փախստականի բնորոշումը.

«[Յուրաքանչյուր ոք], ով ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի պարկանելու հիմքերով հետապնդման ենթարկվելու հիմնավորված երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է, կամ նման երկյուղի պատճառով, ցանկություն չունի օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների արդյունքում գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, անկարող է, կամ նման երկյուղի պատճառով, ցանկություն չունի վերադառնալ այդտեղ»:

Եվ արձանագրում է որոշ իրավիճակներում վերջիններիս վտարման արգելք.

«Ոչ մի անդամ պետություն որևէ եղանակով չի վրարի կամ վերադարձնի (“refouler”) փախստականի այն տարածքների սահմաններին, ուր նրա կյանքը կամ ազատությունը վտանգված կլինեն ռասայի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պարկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով»:

Սակայն, խնդրո առարկա պարտավորությունը վերաբերվում է այն իրավիճակներին, երբ փախստականն արդեն իսկ գտնվում է պետության տարածքում:

Թեև ՄԱԿ-ի Փախստականների հարցերով բարձր հանձնակատարի գրասենյակի փորձագետները փորձում են առավել լայն մեկնաբանություն տալ այս դրույթներին, նման մեկնաբանության հետ թերևս համաձայն չեն բազմաթիվ միջազգային իրավունքի մասնագետներ և, որ առավել կարևոր է, այն համահունչ չէ պետությունների պրակտիկայի հետ:

³³ JAMES HATHAWAY, THE RIGHTS OF REFUGEES UNDER INTERNATIONAL LAW, Cambridge University Press. Cambridge, New York. 2005. p. 280, տես նաև V.J. Irizarry u Puente, *Exclusion and Expulsion of Aliens in Latin America*, 36 AMERICAN JOURNAL OF INTERNATIONAL LAW 254 (1942).

³⁴ Convention relating to the Status of Refugees, 28 July 1951, 189 U.N.T.S. 137, art. 1(A)(2).

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով բարձր հանձնակատարի գրասենյակի փորձագետների համաձայն Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի 33-րդ հոդվածի առաջին մասի ձևակերպումն («Ոչ մի անդամ պետություն որևէ եղանակով չի վտարի կամ վերադարձնի փախստականի...») ըստ էության բացարձակացնում է արգելքը, դարձնում այն ընդգրկուն³⁵, բացի այդ ըստ վերջիններիս դիրքորոշման հակառակ մեկնաբանությունը կհակասի պայմանագրի ընդհանուր նպատակին³⁶ : Մեկ այլ փաստարկի համաձայն ֆրանսերեն “*refoulement*” եզրույթն իր իմաստով առավել լայն է, քանց պարզապես վերադարձումը և ներառում է նաև մուտքի արգելքը³⁷ :

Ոլորտի հայտնի մասնագետ Գ.Ս.Գուդվին-Գիլլը, հերքում է առավել լայն մեկնաբանության հնարավորությունը՝ նշելով, որ *Փախստականների վերաբերյալ կոնվենցիայի* նախապատրաստական աշխատանքների ժամանակ պետությունները ցանկություն չունենին ընդարձակելու չվտարելու պարտականության բովանդակությունը³⁸ :

Նույն մեկնաբանությունը որդեգրեց նաև ԱՄՆ-ի Գերագույն դատարանը 1993թ. իր որոշումներից մեկում (*Sale v. Haitian Centers Council*³⁹) : Գերագույն դատարանի առջև բարձրացվել էր ԱՄՆ նախագահի հրամանի իրավաչափության հիմնահարցը, որը թույլ էր տալիս մերժել բոլոր այն նավերի մուտքը ԱՄՆ տարածք, որոնք կկանգնեցվեին բաց ծովում՝ առանց վերջիններիս վրա գտնվող անձանց ինքնությունը կամ փախստականի կարգավիճակ ունենալու փաստը ստուգելու :

Այսպիսով, Նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասն առավել առաջ է գնում գոյություն ունեցող միջազգային փորձից և պարտավորություններից՝ արձանագրելով մուտքի իրավունքի կոնկրետ դեպք. պետությունն, ըստ էության, պարտավորվում է ապաստան տալ «*քաղաքական հետապնդման*» ենթարկվող անձանց :

Առաջացող հարցերն այստեղ ավելի շատ քաղաքական (ազգային անվտանգության ոլորտի հետ առնչվող), այլ ոչ թե իրավական բովանդակության են : Մասնավորապես՝ անհասկանալի է նման պարտավորություն ստանձնելու և պետության ինքնիշխան ազատությունը (օտարերկրացիների մուտքի հարցում) սահմանադրորեն սահմանափակելու նպատակահարմարությունը : Նախագծի հիմնավորումներ կոչվող փաստաթուղթը միայն նշում է, որ նման իրավունք ամրագրված է եվրոպական մի շարք սահմանադրություններում, ինչը բավարար հիմք համարել դժվար է :

Անհասկանալի է քաղաքական հետապնդման ենթարկվող անձանց խմբի առանձնացումը և հատուկ տարբերակումը, մասնավորապես, ռասայական կամ ազգային առանձնահատկությունների հիման վրա հետապնդման ենթարկվող անձանցից (որոնց նման մուտքի իրավունք Նախագիծը չի տրամադրում) :

³⁵ Office of the United Nations High Commissioner for Refugees, *The Haitian Interdiction Case 1993: Brief Amicus Curiae*, 6 INTERNATIONAL JOURNAL OF REFUGEE LAW 86 (1994).

³⁶ *Ibid.*, P. 92:

³⁷ *Ibid.*

³⁸ G. S. GOODWIN-GILL, *THE REFUGEE IN INTERNATIONAL LAW*, 2nd ed., Clarendon Press. New York / Oxford, 1996, p. 122.

³⁹ *Sale, Acting Commissioner, INS v. Haitian Centers Council*, 509 U.S. 180 (1993), at 180.

Նախագծի խնդրո առարկա հոդվածի 2-րդ մասը կրկին վերաբերվում է միջազգային իրավունքի *non-refoulement* (չվտարելու) սկզբունքին, սակայն արդեն դրա համընդհանուր ճանաչում ստացած համատեքստում: Վերոնշյալ սկզբունքն արգելում է պետություններին վտարել, արտաքսել, էքստրադիցիայի ենթարկել անձանց բոլոր այն դեպքերում, երբ առկա է վերջիններիս խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի ենթարկելու վտանգ:

Խնդրո առարկա սկզբունքն, ինչպես արդեն նշվեց, արձանագրված է 1951թ. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի 33-րդ հոդվածով: Այն իր հետագա զարգացումն է ստացել խոշտանգումների արգելքի համատեքստում:

Այսպես՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի ⁴⁰ (այսուհետ՝ «*խոշտանգումների դեմ կոնվենցիա*») 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ոչ մի անդամ պետություն չի վտարի, վերադարձնի (“*refouler*”) կամ հանձնի որևէ անձի այլ Պետության, ուր հիմնավոր հիմքեր կան հավաստելու, որ նա կլինի խոշտանգման ենթարկվելու վտանգի փակ»:

Թեև համընդհանուր բնույթի մարդու իրավունքների վերաբերյալ կոնվենցիաներում բացակայում են անմիջական և բառացի հղումները *non-refoulement* սկզբունքին, Դաշնագրի ՄԻԵԿ-ի և մի շարք այլ ունիվերսալ և տարածաշրջանային բնույթի պայմանագրերում ամրագրված խոշտանգումների և անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի վերաբերյալ արգելքները հաճախ են մեկնաբանվել որպես այդ փաստաթղթերին անդամակցող պետությունների համար *non-refoulement* պարտավորություն առաջացնող:

Մասնավորապես, նման եզրակացության են եկել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն Դաշնագրի 7-րդ հոդվածի (խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելք) վերաբերյալ⁴¹, ինչպես նաև Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի (խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելք) վերաբերյալ հանրահայտ *Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործի շրջանակներում⁴²: Այս ատյանների կայացած պրակտիկայի համաձայն խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելքն անխուսափելիորեն հանգեցնում է նաև հանձնման և վերադարձման արգելքի մի պետության տարածք, որտեղ անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի⁴³:

Այս մոտեցումն անվիճելի է ժամանակակից միջազգային իրավունքում: Եվ

⁴⁰ Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment, 10 December 1984, 1465 U.N.T.S. 85.

⁴¹ The Nature of the General Legal Obligation Imposed on States Parties to the Covenant. General Comment No. 31 of the Human Rights Committee. UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add.13. 26 May 2004. § 12: *AJR v. Australia*. Communication no. 692/1996. 28 July 1997. UN Doc. CCPR/C/60/D/692/1996. § 6.8: *Kindler v. Canada*. Communication no. 470/1991. 30 July 1993. UN Doc. CCPR/C/48/D/479/1991. § 6.2:

⁴² *Soering v. the United Kingdom*, Application no. 14038/88. European Court of Human Rights 7 July 1989, § 86:

⁴³ *Ng v. Canada*. Communication no. 469/1991. 5 November 1993. UN Doc. CCPR/C/49/D/469/1991. § 9.8, *Chahal v. United Kingdom*, Application no. 22414/93. European Court of Human Rights. 15 November 1996. §§ 75-82.

հետևաբար խնդրո առարկա դրույթն արդեն իսկ բացահայտորեն իր տեղն ունի Սահմանադրության խոշտանգումների և անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի վերաբերյալ դրույթում:

Այդ իսկ պատճառով բացարձակապես անհասկանալի է սահմանադրական մակարդակով իրավունքի տարբեր դրսևորումների մանրամասնման պրակտիկ անհրաժեշտությունը:

Նախագծի 53-րդ հոդվածի 3-րդ մասը նույնաբովանդակ է գործող Սահմանադրության 30.1-րդ հոդվածի երրորդ պարբերության հետ, որն արձանագրում է.

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Տարբերությունը միայն շարադասության մեջ է. գործող Սահմանադրությունն ամրագրում է արգելքը և արգելքից հնարավոր միակ բացառությունը, մինչդեռ Նախագիծը խոսում է անմիջապես բացառության մասին՝ առանց հստակեցնելու արգելքի բնույթը: Այս առումով գործող Սահմանադրության տեքստն առավել նախընտրելի է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխատանքային խումբը գտնում է, որ պարզ չէ քաղաքական հեղապնդման ենթարկվող անձանց մուտքի իրավունք տրամադրելու պարտավորություն ստանձնելու և պետության ինքնիշխան ազատությունը (օտարերկրացիների մուտքի հարցում) սահմանադրորեն սահմանափակելու նպատակահարմարությունը Նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասով: Մուտքի հարցի նպատակահարմարությունը (ի տարբերություն օտարման հստակ կարգավորված չլինելով միջազգային իրավունքի կողմից), պետք է յուրաքանչյուր դեպքում որոշվի գործադիր իշխանության կողմից:

2. Աշխատանքային խումբը գտնում է, որ հիմնավորված չէ քաղաքական հեղապնդման ենթարկվող անձանց խմբի առանձնացումը և հատուկ տարբերակումը, մասնավորապես, ռասայական կամ ազգային առանձնահատկությունների հիման վրա հեղապնդման ենթարկվող անձանցից (որոնց նման մուտքի իրավունք Նախագիծը չի տրամադրում):

3. Աշխատանքային խմբի կարծիքով նպատակահարմար չէ նաև Նախագծի 53-րդ հոդվածի 2-րդ մասով non-refoulement միջազգային պարտավորության առանձին ամրագրման նպատակահարմարությունը, քանի որ այն արդեն իսկ ենթադրվում է սահմանադրորեն ամրագրված խոշտանգումների և անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքն ամրագրող սահմանադրական դրույթում:

* * *

**ՀՈԴՎԱԾ 55. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ:
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ: ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՐԳԵԼՔԸ: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող աշխատանքից անհիմն կերպով ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք ունի: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

3. Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Յուրաքանչյուր աշխատող ծնող երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում ունի արձակուրդի իրավունք:

4. Մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

5. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝

1) այն աշխատանքը, որը դրվում է հանցագործության համար դատապարտված անձի վրա.

2) զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.

3) ցանկացած աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ:

**55-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքային հիմնական իրավունքների վերաբերյալ գործող Սահմանադրության 32-րդ, 33-րդ և 35-րդ հոդվածները սահմանում են.

Հոդված 32. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:

Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հարկադիր աշխատանքն արգելվում է:

Հոդված 33. Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով:

Հոդված 35.

Մայրության հետ կապված պարճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

Ընդհանուր առմամբ Նախագծով պահպանվել են գործող Սահմանադրությամբ ամրագրված հիմնական աշխատանքային իրավունքները: Հարկ է նկատել, որ աշխատանքային իրավունքների մի մասը Նախագծով սահմանվել է որպես երաշխիք՝ առանձնացվելով Նախագծի 3-րդ գլխում: Այս առումով Նախագիծն էականորեն չի տարբերվում գործող Սահմանադրությունից և ողջունելի է աշխատանքային իրավունքների և երաշխիքների լայն շրջանակի նախատեսումը: Ողջունելի է առհասարակ հարկադիր և պարտադիր աշխատանքի մասին ներպետական օրենսդրության մեջ դրանց բովանդակության բացահայտումը, այն էլ սահմանադրաիրավական մակարդակով: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հարկադիր կամ պարտադիր աշխատանքի թույլատրելի դեպքերը բխում են ՀՀ կողմից վավերացրած Աշխատանքի միջազգային կազմակերպության «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» և «Հարկադիր աշխատանքի վերացման մասին» կոնվենցիաներին՝ նաև հաշվի առնելով ՄԻԵԴ նախադեպային թվով 4 որոշումները:

Միաժամանակ Նախագծով փորձ է կատարվել ավելի մանրամասն ներկայացնելու որոշակի իրավունքների բովանդակությունը, սակայն արդյունքում այդ իրավունքների սահմանադրաիրավական բովանդակությունը նեղացել է: Կան նաև խնդիրներ՝ կապված հոդվածների վերնագրերի ընտրության, դրանց բովանդակության և եզրույթների կիրառության առումով: Անդրադառնանք դրանց՝ առանձին-առանձին: Այսպես՝

1. Անհասկանալի է Նախագծի 55-րդ հոդվածի վերնագրում «աշխատանքի ընտրության ազատությունը» և «աշխատանքային այլ իրավունքները» առանձնացնելը:

Ա) Նախ՝ արդյո՞ք «ազատությունը» «իրավունք» է, թե ոչ: Հոդվածի վերնագրի ձևակերպումն այնպես է տրված, որ տպավորություն է առաջանում, որ դրանք նույնացվում են, քանի որ «աշխատանքի ընտրության **ազատությունից**» հետո նշվում է «աշխատանքային **այլ իրավունքների**» մասին: Ստացվում է, որ աշխատանքի ընտրության ազատությունն իրավունք է՝ աշխատանքի իրավունք, մինչդեռ «իրավունքը» և «ազատությունը» բովանդակային առումով լրիվ չեն համընկնում, չէ՞ որ իրավունքին հակադրվում է որևէ մեկի պարտականությունը, ինչը կարող է բացակայել ազատության դեպքում:

Բացի այդ, նույն տրամաբանական շփոթությունը կա նաև հոդվածի վերնագրի և բովանդակության մեջ, որոնցից վերջինում օգտագործվում է «աշխատանքի ազատ ընտրության իրավունք» արտահայտությունը: Նշվածի

կոնտեքստում կարևոր է հասկանալ Նախագծի հեղինակների մտադրությունը՝ արդյո՞ք նրանց ներքին համոզմամբ աշխատանքի ընտրությունը նույնացվում է իրավունքի հետ և արդյոք պետությունը ստանձնում է աշխատանքի ապահովման պարտականություն, թե ոչ: Ամեն դեպքում ունենք զգացողություն, որ Նախագծի հեղինակներն այն ենթադրաբար դիտարկել են որպես իրավունք, սակայն խորշելով անձի աշխատանքի իրավունքին պետության՝ անձին աշխատանքով ապահովելու պարտականության հակադրումից՝ օգտագործել են «ազատություն» եզրույթը: Այս առումով հոդվածի վերնագիրը պետք է հստակեցվի, հակառակ պարագայում հետագայում սահմանադրաիրավական նորմի մեկնաբանման ժամանակ տարակարծություններ և առերևույթ շփոթություն կառաջանան:

Բ) Հոդվածի վերնագրում օգտագործվում է «**աշխատանքի ընտրության ազատություն**», իսկ հոդվածի բովանդակության մեջ «**աշխատանքի ազատ ընտրության իրավունք**»: Փաստորեն, բացի այն, որ, ինչպես նշված է «ա» կետում, շփոթություն կա «իրավունք» և «ազատություն» եզրույթների կիրառման առումով, կա շփոթություն նաև «**աշխատանքի ընտրության ազատության**» և «**աշխատանքի ազատ ընտրության**» միջև, որոնցից մեկն օգտագործվում է վերնագրում, իսկ մյուսը՝ բովանդակության մեջ: Մինչդեռ, ինչպես վկայում են դոկտրինալ մեկնաբանությունները, **աշխատանքի ընտրության ազատության**» և «**աշխատանքի ազատ ընտրության**» բովանդակություններն իրականում տարբեր են այն առումով, որ աշխատանքի ընտրության ազատությունը հնարավորություն է անձի համար ընտրելու «աշխատելու և չաշխատելու» միջև, մինչդեռ աշխատանքի ընտրության ազատությունը ենթադրում է ընտրություն աշխատանքի, աշխատանք ենթադրող գործունեության տեսակների միջև: Այս առումով, միայն հոդվածի և դրա բովանդակության միջ այսքան խնդիրների առկայությունը հետագայում իսկական չարիք կարող են դառնալ այդ հոդվածներով սահմանված նորմերի սահմանադրաիրավական մեկնաբանության և դրանց կիրառման ապահովելու առումով՝ սկսած ողջ իրավունքի ճյուղի հիմքում ընկած եզրութաբանությունից:

2. Անհասկանալի է Նախագծի 55-րդ հոդվածի վերնագրում «այլընտրանքային ծառայությունը» ներառելը: Այլընտրանքային ծառայությունն ընդամենը նախատեսված է որպես հարկադիր կամ պարտադիր աշխատանքի տեսակ, և անհասկանալի է՝ ինչու, օրինակ, հանրային աշխատանքների մասին նշում չկա վերնագրում, իսկ այլընտրանքային ծառայության մասին կա? Այս առումով պետք է հոդվածի վերնագրից բացառել «այլընտրանքային ծառայությունը»՝ փոխարենը վերնագրի վերջին 2 նախադասությունները միավորել իրար: Վերաձևակերպման արդյունքում կարելի է նշել, օրինակ, «Հարկադիր աշխատանքի արգելքը և կիրառման սահմանափակումները»

3. Մի կողմ թողնելով հավակնությունները, որ կցանկանայինք աշխատանքային բոլոր իրավունքների մասին կարգավորումներ տեսնել Սահմանադրության մեջ՝ իրականում, մեր համոզմամբ, ավելորդ է հոդվածի 2-րդ կետը: Նախ՝ եթե Նախագծով կան երաշխիքներ, որոնք աշխատողի համար պաշտպանություն են նախատեսում օրինական հիմքերով ազատվելու դեպքերի համար, ապա ինչու՞մն է այդ իրավունքը նշելու իմաստը, հատկապես եթե դրա բովանդակության հիմնական տարրը կարող է տեղավորվել դատական պաշտպանության իրավունքի բովանդակության մեջ, որը Նախագծով

նախատեսված է: Իսկ այլ պաշտպանության միջոցների որոշները նախատեսվել են որպես երաշխիք, իսկ մյուսները, միևնույնն է, հստակեցվելու են օրենսդրական ակտերով, ուստի նման ձևակերպման առկայությունն օրենսդրին ո՛չ կաշկանդում է և ո՛չ էլ սահմանափակում է այլ պաշտպանության միջոցներ սահմանելու իրավունքը: Այս առումով նշված կետն իմաստազրկվում է:

4. Հոդվածի 3-րդ կետում նախատեսվում է երեխայի ծննդյան դեպքում միայն կնոջ վճարովի արձակուրդի իրավունքը, մինչդեռ ընդունված է նաև հորը վճարովի արձակուրդ տրամադրելու իրավունքը: Իսկ որոշ երկրներում, ինչպես օրինակ, ԱՄՆ մի շարք նահանգներ առհասարակ մայրության արձակուրդը շատ կարճատև է և որպես հիմնարար արձակուրդ չի նախատեսվում: Հոդվածի կետը թերի է նաև այն առումով, որ մայրության իրավունքի մասին խոսվում է միայն երեխայի ծննդյան և որդեգրման դեպքում, մինչդեռ մայրության իրավունքի բովանդակության մանրամասնումը հանգեցրել է նրան, որ այդ իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունից դուրս են մնացել մահացած ծնված երեխայի մոր իրավունքները, փոխնակ մայրերի միջոցով երեխա ունեցող մայրերի իրավունքները, որոնք պետք է ներառվեն մայրության արձակուրդի իրավունքի բովանդակության մեջ:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 55-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է այն վերախմբագրել՝ հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները:

* * *

ՀՈԴՎԱԾ 57. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Օրենքը սահմանում է այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը:

2. Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

3. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի այս հոդվածը գրեթե նույնությամբ կրկնում է գործող Սահմանադրության 33.1-րդ հոդվածը, համաձայն որի՝

Հոդված 33.1. *Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված*

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը եւ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները եւ դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

Տեքստերի համադրությունը ցույց է տալիս, որ Նախագծի շրջանակներում միակ առաջարկվող փոփոխությունը վերաբերվում է նոր դրույթի ներմուծմանը, համաձայն որի «Օրենքը սահմանում է այս [տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու] իրավունքի իրականացման պայմանները և կարգը»: Ընդ որում, գործող սահմանադրության վերլուծության հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը նախկինում եզրակացրել էր, որ համապատասխան իրավունքի շրջանակներում ձեռնարկատիրական գործունեության իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման⁴⁴:

Քննարկվող հոդվածը նաև որևէ ակնհայտ հակասություններ չունի Մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների հետ:

Այդուհանդերձ կարծում ենք, որ քննարկվող հոդվածը որոշակի բարելավման կարիք ունի: Մասնավորապես, խոսքը գնում է 57-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ, որը սահմանում է, որ «շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են»:

Թերևս, հանրահայտ փաստ է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի արդյունավետ իրագործման համար զգալի խոչընդոտ է հանդիսանում բազմաթիվ ոլորտներում առկա փաստացի մենաշնորհը կամ որոշակի տնտեսավարողների գերիշխող դիրքը: Ընդ որում, այս խնդիրը յուրահատուկ չէ Հայաստանի համար, և նկատվում է թույլ զարգացած ժողովրդավարություն ունեցող շատ երկրներում: Այս հանգամանքներում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի արդյունավետ իրագործման համար պետության դերը չի կարող սահմանափակվել զուտ *մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման և անբարեխիղճ մրցակցության* արգելքի ամրագրմամբ, այլ պետք է ներառի պոզիտիվ քայլեր՝ ուղղված այս չարաշահումների կանխմանը և վերացմանը:

Թեև քննարկվող դրույթի ներքո պետության պոզիտիվ պարտավորությունը կարող է նաև ենթադրվել, այնուամենայնիվ նպատակահարմար է Նախագծի 57-րդ հոդվածի 2-րդ մասում հստակ ամրագրել պետության պոզիտիվ պարտավորությունը վերացնելու և կանխելու մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 57-րդ հոդվածի մեկնաբանությունը՝

⁴⁴ Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ ՍԴՈ-780 որոշումը:

Աշխատանքային խումբն առաջարկում է հողվածում սահմանել պետության պոզիտիվ պարտականությունը բացառելու շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն:

* * *

**ՀՈԴՎԱԾ 58. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ:
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Անձի սեփականության իրավունքի իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի և այլոց իրավունքների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սեփականությունից զրկելու նկատմամբ նախնական դատական վերահսկողության դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ հողի նկատմամբ սեփականության ձեռքբերման իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

**58-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Նախագծի 58-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սեփականությունից զրկելու նկատմամբ նախնական դատական վերահսկողության դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով:

Գործող Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Անդրադառնալով գործող իրավակարգավորմանը հարկ է նշել, որ սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական

սկզբունքը, նախ և առաջ, ենթադրում է, որ անձը սեփականության իրավունքից կարող է զրկվել միայն այնպիսի հիմքերով, որոնք ուղղակիորեն նախատեսված են **օրենքի մակարդակ ունեցող իրավական ակտով**: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիության սահմանադրական **երկրորդ երաշխիքը դատականն է**, այն է՝ Սահմանադրության գործող նորմը իմպերատիվ կերպով սահմանում է միայն **դատական կարգով** սեփականությունից զրկելու հնարավորություն: Սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել **բացառապես դատական կարգով**: Ընդ որում, դատական կարգով սեփականությունից զրկելու սահմանադրական պահանջը ենթադրում է, որ անձի սեփականության իրավունքը հարկադրաբար կարող է դադարեցվել քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարության մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ **իրավասու դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի (վճռի, դատավճռի, որոշման) հիման վրա**⁴⁵: Սեփականության հարկադիր օտարման դեպքերում, անկախ այդպիսի օտարման հիմքերից, պետք է ապահովվի **արդյունավետ դատական վերահսկողությունը որպես սեփականության անձեռնմխելիության սկզբունքի երաշխիք**:

Առաջարկվող իրավակարգավորման տառացի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ օրենքով պետք է սահմանվեն սեփականությունից զրկելու նախնական դատական վերահսկողության դեպքերը: Այսինքն, ստացվում է, որ օրենքով կսահմանվեն այն առանձին դեպքերը, երբ սեփականությունից զրկելու համար անհրաժեշտ կլինի ապահովել նախնական դատական վերահսկողություն, իսկ մյուս բոլոր դեպքերում ոչ նախնական և ոչ էլ հետագա դատական վերահսկողություն կարող է չպահանջվել: Այսինքն, օրենքով սահմանվող առանձին (բացառիկ) դեպքերից զատ սեփականությունից զրկելը հնարավոր կլինի առանց դատական վերահսկողության կամ այլ կերպ ասած արտադատական կարգով: Այսպիսով, առաջարկվող իրավակարգավորումը ի տարբերություն գործող իրավակարգավորման չի ամրագրում այնպիսի հիմնարար և իմպերատիվ պահանջ, ինչպիսին է՝ **միայն դատական կարգով սեփականությունից զրկելու հնարավորությունը**:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքից բխում է, որ ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանության համար գոյություն ունեն որոշակի ընթացակարգային երաշխիքներ:

Այսպես, *Sovtransavto v. Ukraine* (2002) գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պետությունը **պարտավոր է նախատեսել դատական ընթացակարգեր, որոնք սահմանում են անհրաժեշտ դատավարական երաշխիքներ, և հետևաբար նաև դատարաններին հնարավորություն են ընձեռում արդար և արդյունավետ կերպով քննել մասնավոր անձանց միջև ծագած վեճերը**: *Ceni v. Italy* (2014)

⁴⁵ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Ա. Վաղարշյանի - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ պետության եւ իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ: Երեւան, Իրավունք, 2010, էջ 337-346

գործով, ՄԻԵԴ-ը, քննարկման առարկա դարձնելով սնանկության կառավարչի կողմից նախնական պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափության հարցը, արձանագրել է, որ «Դիմումատուն չուներ որևէ հնարավորություն գնահատման առարկա դարձնելու սնանկության կառավարչի գործողությունների համաչափությունը, հաշվի առնելով, որ **վերջինս գործել է հայեցողական լիազորությունների շրջանակներում, ինչը դատական հսկողությունից դուրս է:** Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ Պետության կողմից չի ապահովվել 1-ին արձանագրության 1-ին հոդվածով **երաշխավորված պոզիտիվ պարտավորությունը**»⁴⁶:

Այսպիսով, սեփականության իրավունքի պաշտպանությունը սերտորեն կապված է նաև ՄԻԵԿ 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի ապահովման հետ: ՄԻԵԿ 6-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համեմատության արդյունքում կարելի է արձանագրել, որ եթե վերջինս սահմանում է սեփականության իրավունքի բովանդակային երաշխիքները (թույլատրելի միջամտության պահանջներ), **ապա 6-րդ հոդվածը նվիրված է պրոցեսուալ երաշխիքներին (դատարանի մատչելիություն և հրապարակային դատաքննության իրավունք):** Մասնավորապես, Hentrich v. France (1994) գործով սեփականության իրավունքից զրկում որակվեց չափազանց ցածր գնով գնված ապրանքը հարկային մարմնի կողմից գնելու նախապատվության իրավունքի իրացումը: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրեց, որ այն դեպքում, երբ օրենսդրությունը թույլ է տալիս իշխանություններին ցուցաբերել հայեցողություն, օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, կանխատեսելի, **ապահովի հիմնարար ընթացակարգային երաշխիքները (մրցակցային վարույթ)**⁴⁷: Chadzitsakis and Franta v. The Czech Republic, 27.09.2012 թվականի վճռով⁴⁸ ՄԻԵԴ-ն անդրադառնալով ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի օտարմանը, որը տեղի է ունեցել արբիտրաժային կարգով՝ նշել է, որ բաժնետոմսերի սեփականատերերի օտարման ընթացակարգը մի շարք թերություններ է ունեցել Կոնվենցիայի 6-հոդվածի (**արդար դատաքննության իրավունք**) **իմաստով և հետևաբար չի կարող բավարարել Կոնվենցիայի 1-ին հոդվածի (սեփականության իրավունք) 1-ին պարբերության ընթացակարգային պահանջները:** Այս համատեքստում Դատարանը վերահաստատել է, որ այն պահանջը, որպեսզի **տրիբունալը ձևավորված լինի օրենքի հիման վրա, սերտորեն փողկապակցված է արդար դատաքննության հիմնարար սկզբունքների հետ, այդ թվում տրիբունալի անդամների անկախության և անկողմնակալության սկզբունքների հետ:**

Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ նախատեսվում է սեփականությունից զրկելու **արտադատական կարգ**, այն պետք է ապահովի որոշակի ընթացակարգային երաշխիքներ և ապահովի անձի արդար

⁴⁶ Stu` Ceni v. Italy 04/02/2014թ. վճիռ, գանգատ թիվ 25376/06, 74, 75 կետեր:

⁴⁷ Stu` Hentrich v. France 22/09/1994թ. վճիռ, գանգատ թիվ 13616/88, կետ 42:

⁴⁸ գանգատ թիվ 7398/07, 31244/07, 11993/08 և 3957/09:

դատաքննության իրավունքը: Մասնավորապես, վեճը լուծելու իրավասություն ունեցող մարմինը պետք է համապատասխանի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ տրիբունալի ՄԻԵԴ չափանիշներին: Ընդ որում՝ օրենքի հիման վրա ստեղծված տրիբունալի պահանջն առնչվում է այն հարցին, թե արդյո՞ք վեճը լուծող որոշակի կարգապահական կամ վարչական մարմինը 6-րդ հոդվածի ինքնավար հասկացության իմաստով ունի «տրիբունալի» կամ «դատարանի» բնույթ, անգամ եթե չի ստացել «դատարան» կամ «տրիբունալ» անվանումը ներպետական համակարգում (H. v. Belgium, 30/11/1987թ. վճիռ, գանգատ թիվ 8950/80, 57-62 կետեր): Այնտեղ, որտեղ մասնագիտական, կարգապահական կամ գործադիր մարմինը չի համապատասխանում վերոնշյալ պահանջներին, 6-րդ հոդվածը պահպանված կլինի՝ պայմանով, որ դիմողն այնուհետև ունեցել է լրիվ դատական վերանայման հնարավորություն փաստի և իրավունքի հարցերով (A.Menarini Diagnostics S.R.L v. Italy, 27/09/2011թ. վճիռ, գանգատ թիվ 43509/08, 57-67 կետեր): Բոլոր այն դեպքերում, երբ վարչական մարմինը «քաղաքացիական» իրավունքներին առնչվող որոշում է կայացնում, պետք է ներպետական օրենսդրությամբ առկա լինի դատական մարմին դիմելու իրավունք: Առնվազն մեկ ատյան վերանայելու իրավունքը 6-րդ հոդվածի ինքնավար պահանջ է (Albert and Le Compte v. Belgium, 10/02/1983թ. վճիռ, գանգատներ թիվ 7299/75 և 7496/76, 25-37 կետեր):

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ առաջարկվող իրավակարգավորումը սեփականության իրավունքի պաշտպանության տեսակետից հստակ և արդյունավետ ընթացակարգային երաշխիքներ չի նախատեսում: Բաց է մնում այն հարցը, թե ինչպիսի ընթացակարգով պետք է կատարվեն սեփականությունից զրկելու այլ դեպքերը (արդյոք բոլոր այն դեպքերում, երբ չի նախատեսվում նախնական դատական վերահսկողություն, ապահովվում է հետագա դատական վերահսկողություն, թե ոչ), և թե ինչպիսի երաշխիքներ են ապահովվում այդ ընթացակարգերի արդար դատաքննության չափորոշիչին համապատասխանելու համար:

Մասնավորապես, ստացվում է, որ անձի սեփականության իրավունքին միջամտության ցանկացած առանձին դեպքում պետությունը պետք է ապահովի մի շարք ընթացակարգային երաշխիքներ, ինչը կպահանջի ոչ միայն օրենսդրական, այլ նաև համակարգային մի շարք փոփոխություններ բոլոր այն պետական մարմիններում, որոնց գործունեությունը առնչվում է, կամ հետագայում կարող է առնչվել անձին սեփականության իրավունքից զրկելուն: Կարծում ենք առաջարկվող կարգավորումը բավականին ռիսկային է և իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջանալ բազմաթիվ խնդիրներ, որոնք հետագայում կհանգեցնեն Հայաստանի դեմ կայացվող ՄԻԵԴ վճիռների թվի աճին:

Բացի այդ՝ Սեփականությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողության դեպքերին անդրադարձ է կատարվել նաև ՌԴ Սահմանադրական դատարանի կողմից: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ սեփականության հարկադիր օտարման դեպքում

վերահսկողությունը կարող է լինել, ինչպես նախնական այնպես էլ հետագա⁴⁹ : Վերահսկողության վերոնշյալ տեսակների ընտրությունը կախված է իրավահարաբերության բնույթից և չի կարող կախվածության մեջ դրվել օրենսդրի հայեցողությունից: Բոլոր այն դեպքերում, երբ ծագած իրավահարաբերությունը հանգեցնում է գույքի իրավական ճակատագրի փոփոխմանը, այսինքն՝ տեղի է ունենում գույքի իրավափրոջ փոփոխություն (փոխվում է տիրոջ սեփականատերը), ապա նման դեպքերում թույլատրելի է միայն նախնական դատական վերահսկողությունը⁵⁰:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 58-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է թողնել գործող Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ պարբերության ձևակերպումն առ այն, որ **«Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:»**:

* * *

ՀՈԴՎԱԾ 59. ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼԸ

1. Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

59-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 59-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ **«Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:»**:

Առաջարկվում է 59-րդ հոդվածի առաջին մասի տեքստից հանել **«Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված»** բառերը, քանի որ նշված ձևակերպումն անհարկի սահմանափակում է դատական պաշտպանության

⁴⁹ Вестник Пермского университета. Юридические науки, Выпуск№ 1-3 / 2009; ПРИНЦИП НЕПРИКОСНОВЕННОСТИ СОБСТВЕННОСТИ В АКТАХ КОНСТИТУЦИОННОГО СУДА РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ, Л.В. Сагдеева Ассистент кафедры гражданского права и процесса Пермского государственного университета, 2009; стр. 88-95

⁵⁰ Определение Конституционного Суда РФ от 10 марта 2005 г. N 97-О

ենթակա իրավունքների շրջանակը (օրինակ, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, որը, չգիտես ինչու, հանվել է Նախագծի տեքստից, սակայն ամրագրված է ինչպես գործող Սահմանադրությունում, այնպես էլ՝ Կոնվենցիայում):

Հոդվածի առաջին մասում նշվում է, որ անձն իրավունք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: Սակայն, մեր կարծիքով, անձը պետք է ունենա նաև ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային նորմերով, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերով ամրագրված իր իրավունքների դատական պաշտպանության իրավունք:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 59-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է.

1. Յուրաքանչյուր որ ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր որ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

* * *

ՀՈԴՎԱԾ 63. ՅՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՋԱՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ոչ որ պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ: Օրենքը կարող է նախապեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

63-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվող կարգավորումը կարծում ենք հանդիսանում է «հետքայլ» գործող Սահմանադրության (22-րդ հոդվածի 1-ին պարբերություն) համեմատ, քանի որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի **վերաբերյալ** ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու փոխարեն սահմանում է իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի **դեմ** ցուցմունք տալու պարտականությունից ազատման հնարավորությունը: Նման կարգավորումն անթույլատրելի է, քանի որ գործնականում դա կարող է կիրառվել ցուցմունքներ կորզելու նպատակով: Մասնավորապես, պրակտիկայում հնարավոր է, որ լինեն դեպքեր, երբ առաջին հայացքից օրինակ ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ «չեզոք»՝ ոչ դեմ, ցուցմունքը հետագայում, քննության արդյունքներով կիրառվի նրանց, իսկ դեմ: Անձինք պետք է ունենան իրենց, ամուսինների կամ մերձավոր

ազգականների **վերաբերյալ** լռություն պահպանելու իրավունք, ինչը հնարավոր չէ Նախագծով առաջարկվող իրավակարգավորման դեպքում:

ԵՃՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 63-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է. թողնել գործող Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը՝ **«Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:»**:

* * *

ՀՈԴՎԱԾ 64. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

64-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային խումբը գտնում է, որ քննարկվող հոդվածում արդարացված չէ գործող Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում անմեղության կանխավարկածի կարևորագույն տարր հանդիսացող՝ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու և անմեղությունն ապացուցելու պարտավորություն չունենալու վերաբերյալ դրույթները առաջարկվող Նախագծում չնախատեսելը:

Միաժամանակ, գործող Սահմանադրության համեմատությամբ Նախագծում դուրս է հանվել՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձին պատասխանատվության ենթարկելու և այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից՝ նրան մեղավոր ճանաչելու, կարևորագույն երաշխիքը, ինչը պետք է վերականգնել:

ԵՃՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նախագծի 64-րդ հոդվածի մեկնաբանությունն՝ Աշխատանքային խումբն առաջարկում է այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 64. Անմեղության կանխավարկածը

1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքին համապատասխան՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Զփարարված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի:»:

* * *

ՀՈԴՎԱԾ 66. ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հանցանք կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի.

1) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին.

2) պաշտպանվելու անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով.

3) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար.

4) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները.

5) օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի տիրապետում հայերենին:

66-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով գրեթե ամբողջությամբ վերարտադրվել է ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասով անձանց երաշխավորվող նվազագույն իրավունքների շրջանակը, սակայն առանց որևէ տրամաբանության դուրս է մնացել բավարար միջոցներ չունենալու դեպքում անվճար նշանակված պաշտպան ունենալու հնարավորությունը: Թեպետ Նախագծի 62-րդ հոդվածում նշված է, որ օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց է տրվում պետական միջոցների հաշվին, այդուհանդերձ, Աշխատանքային խումբը գտնում է, որ հատկապես հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձանց նվազագույն իրավունքների շարքը նախատեսող այս հոդվածում սահմանադրական մակարդակով պետք է երաշխավորվի բավարար միջոցների բացակայության դեպքում անվճար պաշտպան ունենալու իրավունքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 66-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ. «**6) բավարար միջոցներ չունենալու դեպքում անվճար նշանակված պաշտպան ունենալ:**»:

* * *

ՀՈԴՎԱԾ 67. ՆՈՒՅՆ ԱՐԱՐՔԻ ՀԱՄԱՐ ԿՐԿԻՆ ՉԴԱՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանն օրենքին համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր

երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:

67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածի 2-րդ մասն ինքնին չի համապատասխանում իրավական ակտի որոշակիության սկզբունքին: Նույն արարքի համար կրկին չդատվելու սահմանադրական երաշխիքը ինքնին պարտավորեցնում է պետական մարմիններին օրենքով սահմանված միջոցներով բացահայտել հանցագործությունը և անձին ենթարկել պատասխանատվության: Նախագծի այս վարքագծի կանոնը սահմանված է ի վնաս «դատապարտված» անձի՝ առանց վաղեմության ժամկետը և այլ էական պայմանները որոշակիացնելու:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է հանել 67-րդ հոդվածի 2-րդ մասը:

* * *

**ՀՈԴՎԱԾ 72. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Եթե տվյալ հանցանքը կատարելուց հետո օրենքը սահմանում է ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է վերջինս:

72-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկվող նորմի առնչությամբ գործող Սահմանադրության 22-րդ հոդվածը սահմանում է՝ «...Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:

Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:»

Տեքստերի համադրությունը ցույց է տալիս, որ Նախագծով որոշ չափով նեղացվել է ամրագրվող երաշխիքների ծավալը: Այսպես, գործող

Սահմանադրությունը հստակ սահմանում է, որ հետադարձ ուժ ունի ինչպես պատիժը մեղմացնող, այնպես էլ **պատժելիությունը վերացնող** օրենքն: Մինչդեռ Նախագիծը չի հիշատակում պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ ուժի մասին՝ հետադարձ ուժ նախատեսելով միմիայն պատիժը մեղմացնող օրենքի համար («*Եթե տվյալ հանցանքը կատարելուց հետո օրենքը սահմանում է ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է վերջինս*»):

Ավելին, Նախագիծն արգելում է պատասխանատվության հետադարձ ուժ պատիժ սահմանող կամ խստացնող օրենքների համար միմիայն հանցագործությունների մասով: Մինչդեռ գործող Սահմանադրությունում համապատասխան երաշխիքները վերաբերվում են նաև զանցանքների համար պատասխանատվություն սահմանող, վերացնող կամ փոփոխող օրենքին: Այսպիսով, այս առումով ևս Նախագծում արձանագրվել է հետ ընթացք ի համեմատ գործող Սահմանադրության:

Հարկ է նշել, որ քննարկվող մասով Նախագծի տեքստը մեծամասամբ կրկնում է Դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասը (*Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:*)

Սակայն այն հանգամանքը որևէ կերպ չի արդարացնում գործող Սահմանադրության համեմատ առկա երաշխիքների նվազեցումը:

Բացի դա, Նախագիծը (ինչպես նաև գործող Սահմանադրությունը) չեն անդրադառնում միջազգային իրավունքի նորմերի համաձայն արարքների քրեականացման հնարավորությանը: Այսպես, ինչպես Դաշնագրի 15-րդ հոդվածը, այնպես էլ ՄԻԵԿ 7-րդ հոդվածը 7-րդ հոդվածը սահմանում են, որ անձը կարող է մեղավոր ճանաչվել, եթե արարքը կատարման պահին քրեական հանցագործություն է համարվում գործող ներպետական **կամ միջազգային իրավունքի համաձայն**: Լրացուցիչ, Դաշնագրի և ՄԻԵԿ համապատասխան հոդվածների 2-րդ մասերով սահմանվում է, որ ոչինչ չի խոչընդոտում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության (ՄԻԵԿ-ում օգտագործվում է «քաղաքակիրթ ազգեր» եզրույթը, որն ունի միևնույն իմաստային լիցքը) կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել է քրեական հանցագործություն: Ընդ որում, Նախագծում, ի տարբերություն գործող Սահմանադրության, այս հարցը ,կարծես թե, առհասարակ բաց է թողնվել, քանի որ 72-րդ հոդվածի առաջին նախադասությունում առհասարակ չի հստակեցվում, թե ինչ ակտերի նորմերի համաձայն է կատարվում արարքի որակումը որպես հանցագործություն:

Միջազգային քրեական հանցագործությունները հանդիսանում են մարդու իրավունքների լրջագույն խախտումներ, իսկ դրանց քրեականացման հարցում առաջնային դեր է խաղում հենց միջազգային իրավունքը: Ուստի առավել տրամաբանական կլիներ Սահմանադրությամբ նախատեսել արարքի՝

անմիջապես միջազգային իրավունքի նորմերով քրեականացման հանցավորություն:

Ելնելով ամբողջ վերոգրյալիս, Նախագծի 72-րդ հոդվածում առաջարկվում է՝

1. Նախատեսել պատիժը վերացնող օրենքի հետադարձ ուժ:

2. Պատիժը մեղմացնող կամ վերացնող օրենքների համար հետադարձ ուժ նախատեսել ոչ միայն հանցագործությունների, այլ նաև զանցանքների համար:

3. Արգելել հետադարձ ուժ հաղորդել ցանկացած պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքին, այլ ոչ միայն՝ քրեական պատասխանատվություն սահմանողներին:

4. Սահմանել, որ անձին չի կարելի դատապարտել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել գործող օրենքների կամ միջազգային իրավունքի կիրառելի նորմերի համաձայն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 72-րդ հոդվածի հետևյալ շարադրանքը՝ **«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել գործող օրենքների կամ միջազգային իրավունքի կիրառելի նորմերի համաձայն: Արարքի համար պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:»:**

* * *

ՀՈԴՎԱԾ 73. ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒՇԸ

1. Այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնք վարթարացնում են անձի իրավական վիճակը, կարող են բացառության կարգով հետադարձ ուժ ունենալ, եթե անձի վստահության իրավունքը դրան չի խոչընդոտում:

2. Անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ էության, այս հոդվածը գործող Սահմանադրության 42-րդ հոդվածի երրորդ և չորրորդ մասերի վերախմբագրությունն է. **«Անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:**

Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:»:

Նշված հոդվածը պետք է դիտարկել դրա նախորդ՝ 72-րդ հոդվածի հետ

համադրության մեջ, որը սահմանում է. «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Եթե փյալ հանցանքը կատարելուց հետո օրենքը սահմանում է ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է վերջինս»:

Այս երկու հոդվածների համադրությունից պարզ է դառնում, որ նախագծի հեղինակները ցանկացել են բացառել նյութական քրեական իրավունքում օրենքի կամ այլ իրավական ակտի հետադարձ ուժը, սակայն անձի իրավական վիճակը վատթարացնող քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարական, վարչական, վարչական դատավարական ոլորտներում թողել են օրենքի կամ այլ իրավական ակտի հետադարձ ուժի հնարավորություն՝ բացառության կարգով: Իսկ այդ բացառությունն էլ սահմանափակել են անձի վստահության իրավունքով:

Նորմի բովանդակությունը հետազոտելիս անհրաժեշտ ենք համարում ելնել իրավունքի որոշակիության սկզբունքի և իրավաչափ վարքագծի պահանջներից: Միևնույն ժամական ex post facto իրավական ակտի հետադարձ ուժի վերլուծության համար օգտակար է հիմնվել չորս չափանիշների վրա՝ notice, reliance, equity և moderation of burden, որոնցից սույն դեպքում ամենակարևորը վստահությունն է (reliance):

Ընդունված է կարծել, որ վստահությունը իրավաբանական պրակտիկայում կամ վստահության իրավունք սահմանում է այն իրավիճակը, երբ «*օրենքը [իրավական ակտը] պակաս վատթարացնող է, եթե անձը նախապես ողջամիտ ակնկալիքներ չի ունեցել*⁵¹»:

Կարծիքներ կան նաև, որ այն անգամ վատթարացնող էլ չէ, եթե անձը նման ակնկալիքներ չի ունեցել, բայց փաստացի անձի իրավական վիճակը վատթարացել է: Նման կարծիքներ արտահայտվել են անգամ որոշ երկրների ազգային դատական պրակտիկայում⁵²: Սակայն, այս պրակտիկան, ցույց տալով իրավունքի որոշակիության տեսանկյունից իր խոցելիությունը, արդեն իսկ փոխարինվել է հակառակ պրակտիկայով, որը բացառում է անձի կարգավիճակը վատթարացնող իրավական ակտի հետադարձ ուժը ոչ միայն քրեաիրավական, այլև այլ ոլորտներում ևս: Վերոնշյալ դատական ակտերի վերանայումը հենց այդ հիմքերով էլ տեղի է ունեցել:

Աշխատանքային խումբը գտնում է, որ չափազանց վտանգավոր է անձի իրավական վիճակը վատթարացնող ex post facto իրավական ակտին, անգամ բացառիկ դեպքերում, հետադարձ ուժի տրամադրումը և դրա սահմանափակումը միայն «վստահության իրավունք» թույլ գործիքով, որովհետև այդ նորմի կիրառման հետևանքները շատ ավելի անբարենպաստ կլինեն, քան այն նպատակի կենսագործման հնարավոր դրական կողմերը, որ, կարծում ենք, ներդրվել է այդ նորմը սահմանելիս:

Աշխատանքային խումբը գտնում է, որ չպետք է իրավական ակտով, և այն էլ՝ բարձրագույն իրավական ակտով սահմանել իրավիճակ, որ թույլ է տալիս

⁵¹ Steve Selinger, The Case against Civil Ex Post Facto Laws, The Cato Journal, Vol. 15, Nos. 2-3, p. 205.

⁵² ԱՄՆ դատական համակարգ, Calder v. Bull, U.S. v. Carlton, etc.

իրավունքի նորմի պատշաճ կենսագործման համար անհրաժեշտ իրական երեք հատկանիշներից (իրավունքի ընդհանրություն/համապարտադիրություն, որոշակիություն և հավասար կիրառելիություն⁵³) մեկի՝ իրավունքի որոշակիության տրամաբանությանը հակառակ հնարավոր իրավաչափ իրավիճակ: Եթե այդպիսի վարքագիծ կա, ուրեմն դա իր հիմքում ոչ իրավաչափ վարքագիծ է:

Իսկ եթե իրավական ակտի հետադարձ ուժը խոչընդոտում է անձի վստահության իրավունքին, ուրեմն այդ ակտն, ի սկզբանե, իրավունքի որոշակիությունն է խախտում, և հետևաբար՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 79-րդ հոդվածը, որը սահմանում է, որ «*Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների նախադրյալները և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի հիմնական իրավունքի կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ*»:

Հետևաբար, դրա մասին առանձին հոդվածով նշելը իրավական ակտի ավելորդ ծանրաբեռնում է ենթադրում և ավելորդ մեկնաբանությունների տեղ տալիս:

Իրավական ակտը, որը վատթարացնում է անձի իրավական կարգավիճակը և կիրառող մարմնի տեսական դիտարկմամբ կարող է համարվել անձի վստահության իրավունքի շրջանակներում, ինքնին իրավունքի որոշակիության սահմաններից դուրս է, որովհետև չի կարող լինել իրավաչափ վարքագծից դուրս վստահության իրավունք, քանի որ դա կհակասեր իրավաչափ ակնկալիքներին և հետևաբար՝ իրավունքի որոշակիության սկզբունքին, իսկ վստահության իրավունքը չի կարող հիմնվել ոչ իրավաչափ ակնկալիքների վրա:

Չպետք է իրավական մակարդակում թույլ տալ այնպիսի իրավիճակ, որը հնարավոր համարի անձի վստահության իրավունքը չխախտող, բայց իրավական վիճակը վատթարացնող օրենքի կամ այլ իրավական ակտի հետադարձ ուժ, քանի որ դա իրավունքի մեկնաբանող մարմնի մոտ կառաջացնի կամայականության դրսևորման հնարավորություն և իրավունքի որոշակիության սկզբունքի խախտում կամ առնվազն՝ անտեսում:

Վստահության իրավունքը (այլ իրավական համակարգերում նաև՝ վնասի կամ վնասաբեր վստահություն – detrimental reliance) ex post facto իրավական ակտերի բացառման համարժեք ինստիտուտ չէ:

Նախ, ո՛չ օրենսդրական կարգավորումները, ո՛չ դատական որոշումները չպետք է կարողանան նսեմացնել իրավունքի որոշակիությունը, որը սահմանում է իրավական ակտի հետադարձ ուժի արգելքը:

Վստահության իրավունքը ex post facto իրավական ակտերի բացառման համարժեք ինստիտուտ չէ նաև այն պատճառով, որ այն պահանջում և քաջալերում է ոչ նյութական քրեական գործերով հետադարձ իրավական ակտերի ընդունման կանխավարկածը:

Միայն վստահության իրավունքով ex post facto իրավական ակտերի բացառումը զրկված է նաև իրավական տրամաբանությունից: Արդյո՞ք առկա է իրավական իմաստ նրանում, որ պահանջում ենք անձից փաստացի ողջամտորեն ակնկալել, որ գոյություն ունեցող օրենսդրությամբ նրա վիճակը վնասաբեր է իր

⁵³ F.A. Hayek, The Constitution of Liberty, 1960, pp. 205-220.

համար: Ոչ ոք (անգամ իրավաբանները) չգիտի բոլոր իրավական ակտերի պահանջները: Եվ ավելորդ օբյեկտիվ իրավունքի հստակ սահմանափակումը ծանրաբեռնել սուբյեկտիվ գործիքներով, որն ավելորդ մեկնաբանությունների և կամայականությունների տեղ է տալու, կարծում ենք, հիմնավոր չէ:

Գործող կարգավորմամբ անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերի հետադարձ ուժն արգելող սահմանադրական դրույթն ունի իմպերատիվ բնույթ: Ընդ որում՝ քննարկվող նորմին նույնական նորմ է ամրագրված է նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 54-րդ հոդվածով, որի վերաբերյալ ՌԴ Սահմանադրական դատարանն իր 20.04.2006 թվականի թիվ 4-Կ որոշման պատճառաբանական մասի 4.3.-րդ կետում արձանագրել է դիրքորոշում առ այն, որ «Սահմանադրության 54-րդ հոդվածում ամրագրված դրույթը դատարանին կամ օրենքը կիրառող մարմնի **հայեցողական լիազորություն չի վերապահում**»:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության գործող 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, մասնավորապես, բացահայտված է ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-723 որոշման մեջ: Սահմանադրական դատարանն այդ որոշման մեջ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ նշել է. **«Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը**»: Այդ սկզբունքը միաժամանակ, հանդես է գալիս իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»: **Ըստ Սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը**⁵⁴:

Առաջարկվող իրավակարգավորման վերաբերյալ, նախ և առաջ, հարկ է նշել, որ այն բավարար չափով հստակ չէ և կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանությունների և ընկալումների: Մասնավորապես, գտնում են, որ իրավական ակտին վստահելու իրավունքի բացակայությունը որպես անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժ չունենալու սկզբունքից բացառություն նախատեսելն աննպատակահարմար է, հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ՝ հոդվածից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ իրավական հարցադրումները՝

⁵⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Ա. Վաղարշյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ պետության եւ իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ: Երեւան, Իրավունք, 2010, էջ 497

1. Արդյո՞ք օրենքը կամ այլ իրավական ակտը վատթարացնող է թե ոչ (առավել անբարենպաստ պայմաններ է սահմանում, քան իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքը), եթե այո, ապա

2. Արդյո՞ք անձը կարող էր վստահության իրավունք ունենալ մինչ օրենքի, կամ այլ իրավական ակտի ընդունումը առկա իրավակարգավորման հանդեպ:

1. Առաջին հարցադրման մասով հարկ է նշել, որ եթե խոսվում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի մասին, նշանակում է, որ իրավահարաբերության ծագման պահին պետք է առկա լինի նաև առավել բարենպաստ պայմաններ սահմանող օրենք: Հակառակ դեպքում վատթարացնող օրենքի և, հետևաբար նաև օրենքների հետադարձ ուժի վերաբերյալ սահմանադրական նորմի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է: Այսինքն, նախ կարևորվում է հարցադրումն այն մասին, թե արդյոք իրավահարաբերության ծագման պահին առկա է եղել «օրենք» թե ոչ:

Կարծում եմ տեղին է անդրադառնալ անձի իրավունքներին կատարված միջամտությունը ՄԻԵԿ տեսանկյունից իրավաչափ որակելու համար ՄԻԵԴ կողմից առաջ քաշված այնպիսի պայմանի, ինչպիսին է՝ կիրառված միջոցների համապատասխանությունը ներպետական օրենքին:

Մասնավորապես, ՄԻԵԴ-ն անդրադարձ է կատարել «օրենքի» կարգավիճակին, դրան ներկայացվող պահանջներին՝ ամրագրելով նաև իրավունքի գերակայության սկզբունքը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «Կոնվենցիայի իմաստով «օրենք» և «օրինական» բառերը չեն սահմանափակվում ներպետական իրավունքին հղում կատարելով, այլ վերաբերվում են նաև օրենքի որակին: Նրանք պետք է համապատասխանեն իրավունքի գերակայության սկզբունքին»⁵⁵ :

ՄԻԵԴ-ն նաև արձանագրել է, որ

- Օրենքը պետք է լինի բավականաչափ մարչելի,
- Նորմը կարող է որակվել որպես «օրենք», եթե այն բավականաչափ հստակ է, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները⁵⁶:

Վերոնշյալից հետևում է, որ օրենքի հետադարձ ուժի կանոն կիրառելիս պետք է առաջնորդվել այն կանխավարկածով, որ իրավահարաբերության ծագման պահին գործել է օրենք, որը բավականաչափ մարչելի, հստակ և կանխատեսելի է: Հակառակ դեպքում, եթե չկա նման օրենք, ապա հետագայում ընդունված օրենքը չի կարող որակվել որպես վատթարացնող:

2. «Օրենքի» առկայության պայմաններում առանձնապես կարևորվում է այն հարցադրումը, թե արդյոք անձը կարող էր ունենալ **վստահության իրավունք (իրավաչափ ակնկալիք)** իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքի նկատմամբ:

Իրավաչափ ակնկալիք եզրույթին անդրադարձ է կատարվել ՀՀ

⁵⁵ Տես՝ James and others v. UK 21/02/1986թ. վճիռ, գանգատ թիվ 8793/79, կետ 67:

⁵⁶ Տես՝ Sunday times v. The United Kingdom, 26/04/1979թ. վճիռ, գանգատ թիվ 6538/74, կետ 49, Տես՝ Lithgow and Others v. the United Kingdom, 08/07/1986թ. վճիռ, գանգատ թիվ 9006/80; 9262/81; 9263/81; 9265/81; 9266/81; 9313/81; 9405/81, կետ 110:

Սահմանադրական դատարանի⁵⁷ և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով⁵⁸: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը 18.04.2014 թվականի թիվ ՍԴՌ-1148 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի փարրերից մեկը»:

Իրավաչափ ակնկալիք եզրույթին անդրադարձ է կատարվել նաև ՄԻԵԴ-ի կողմից, որը տվել է «Իրավաչափ ակնկալիք» հասկացության բնորոշումը: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ««Իրավաչափ ակնկալիք»-ն առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի փայավորություն»⁵⁹:

ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև, որ «Անձն ունի Իրավաչափ ակնկալիք, եթե ազգային օրենքում առկա է բավարար իրավական հիմք, օրինակ, երբ փվյալ հարցի կարգավորման վերաբերյալ առկա է որոշակի դատական պրակտիկա: Իրավաչափ ակնկալիքը բացակում է բոլոր այն դեպքերում, երբ ներպետական օրենքի ճիշտ մեկնաբանության և կիրառության վերաբերյալ առկա է վեճ և երբ դիմումատուի դիմումը արդյունքում մերժվում է ներպետական դատարանների կողմից»⁶⁰:

ՄԻԵԴ դիրքորոշումների հաշվառմամբ պետք է փաստել, որ այն դեպքում, երբ կա «օրենք», որը բավականաչափ մատչելի, հստակ և կանխատեսելի է, ապա անձը չի կարող չունենալ իրավաչափ ակնկալիք՝ բավականաչափ իրավական հիմքեր վստահելու դրա իրավաչափ լինելուն:

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ իրավահարաբերությունը կարգավորող նորմերը հստակ և մատչելի չեն, առկա չէ միասնական դատական պրակտիկա, կամ երբ համապատասխան իրավահարաբերությունը ընդհանրապես կարգավորված չէ և օրենսդիրը որոշել է կարգավորել նախկինում դեռևս չկարգավորված հարցը, ապա իրավաչափ ակնկալիքի և, հետևաբար նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի կիրառման մասին խոսք չի կարող լինել:

Հիմք ընդունելով վերոգրյալը գտնում են, որ Սահմանադրության նախագծով նախատեսված բացառությունը առարկայազուրկ է:

Այլ հարց է, որ որոշ դեպքերում, նույնիսկ եթե կա իրավաչափ ակնկալիք,

⁵⁷ «Քաղաքացի Գևորգ Ալոյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 18.04.2014 թվականի թիվ ՍԴՌ-1148 որոշում

⁵⁸ Լյուդմիլա Յվետկովա ընդդեմ Սվետլանա Հովակիմյան, 29.07.2011թ. թիվ ԳԴ/0145/02/10, «Գոլդուեյ» ընդդեմ «Վալթի Մոթորս», 19.10.2012 թիվ ԵՇԴ/0177/02/11 որոշումներ

⁵⁹ *Stu' Kopecký v. Slovakia* 28/09/2004թ. վճիռ, գանգապ թիվ 44912/98, 45-52 կետեր

⁶⁰ Case of Centro Europa 7 S.R.L. and Di Stefano v. Italy (Application no. 38433/09), պարագրաֆ 173

հանրային շահից ելնելով անձի իրավունքը կարող է սահմանափակվել, բայց սահմանադրական դրույթը այդ մասին չէ:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է հանել անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի բացառման սահմանափակումն ընդհանրապես, և թողնել գործող Սահմանադրության կարգավորում՝ **«Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»:**

Ծանոթություն. Աշխատանքային խմբի կողմից այս կարծիքն ընդունելուց հետո Հանձնաժողովը 73-րդ հոդվածը ներկայացրել է հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 73. Օրենքների հետադարձ ուժը

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

* * *

ՀՈԴՎԱԾ 76. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 22-25-րդ, 27-29-րդ, 34-36-րդ հոդվածներում, 37-րդ հոդվածի 1-ին մասում, 40-րդ հոդվածի 1-ին մասում, 46-րդ, 54-րդ, 59-րդ, 63-րդ, 65-68-րդ և 70-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

76-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արտակարգ և ռազմական դրության ռեժիմների վերաբերյալ գործող Սահմանադրության 44-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 44. Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով

Ժամանակավորապես սահմանափակվելու ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Առաջին հայացքից, իհարկե, Նախագծի տեքստն իրավունքների պաշտպանության համար առավել լայն երաշխիքներ է սահմանում՝ ընդարձակվել է անօտարելի իրավունքների ցանկը, ավելացվել են «*օրենքով սահմանված կարգով*» և «*միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը*» ձևաչափերը:

Սակայն Նախագծի 76-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը վերջինիս այլ դրույթների հետ ստիպում է գալ այլ եզրակացության:

Նախ՝ նշենք, որ թե՛ գործող Սահմանադրության, թե՛ Նախագծի խնդրո առարկա տեքստերն ունեն ակնհայտ բաց. դրանք չեն նախատեսում իրավունքների սահմանափակման իրավաչափությունը գնահատող օբյեկտիվ չափանիշներ՝ փոխարենը հղում կատարելով «*պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների*» վրա: Այսինքն՝ տեքստերն ամբողջականանում են միայն միջազգային պարտավորությունների ներմուծման (ինկորպորացիայի) միջոցով:

Նշենք նաև, որ Նախագծում ամրագրված «*օրենքով սահմանված կարգով*» արտահայտությունն ակնհայտորեն վերաբերվում է զուտ սահմանափակումների գործարկման և արտակարգ/ռազմական դրություն հայտարարելու ընթացակարգին, մինչդեռ «*միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը*» արտահայտությունն ինքնին չի տրամադրում այդ իրավիճակի անհրաժեշտությամբ թելադրված սահմանափակումների թույլատրելիության գնահատման չափանիշներ: Արդյունքում ստացվում է, որ Նախագիծն իրականում առաջ չի գնում գործող Սահմանադրությամբ սահմանվող երաշխիքներից (իսկ համակարգային վերլուծությունը, ինչպես նշվեց և ինչպես ցույց կտրվի ստորև ստիպում է գալ անգամ հակառակ եզրակացության):

Անդրադառնանք միջազգային պայմանագրերի շրջանակներում հարցի իրավական կարգավորմանը: Արտակարգ իրավիճակների պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությունից հնարավոր շեղումների վերաբերյալ դրույթներ ամրագրված են ՀՀ կողմից վավերացված երկու պայմանագրերում՝ ՄԻԵԿ և Դաշնագրում:

ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամապետելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

Համանման կերպ Դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության ժամանակ, որի

առկայությունը պաշտոնապես հայտարարվել է, սույն Դաշնագրի Անդամ Պետությունները կարող են ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Դաշնագրով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամարելելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ և չեն ներառում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

Այսպիսով՝ միջազգային պայմանագրերը սահմանում են լրացուցիչ որակումներ (երաշխիքներ), որոնք առկա չեն ո՛չ գործող Սահմանադրությունում, ո՛չ էլ Նախագծում: Դրանք են՝ արտակարգ դրության որակումը որպես «ազգի կյանքին սպառնացող» և շեղումների թույլատրելիությունը «բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը» (անգլ.՝ strictly required by the exigencies of the situation)՝ ի տարբերություն Նախագծում օգտագործվող «այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը» ձևակերպման:

Այս չափանիշները հետագայում պարզաբանվել և հստակեցվել են պետությունների կողմից ՄԻԵԿ-ի և Դաշնագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների՝ համապատասխանաբար ՄԻԵԴ և Կոմիտեի կողմից:

Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ «ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության» հասկացության բնական և սովորության իմաստը բավարար հստակ է և ենթադրում է «բացառիկ ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակ, որը ազդում է ողջ բնակչության վրա և վրանգում է ողջ համայնքի կազմակերպված կյանքը, որից կազմված է պետությունը» (ընդգծումը մերն է)⁶¹: Այն նաև նշել է, որ պարտավորություններից շեղումն արդարացնելու համար արտակարգ իրավիճակը «պետք է լինի իրական կամ վրահաս, այն պետք է ազդի ողջ ազգի վրա, այնպես որպեսզի վրանգվի համայնքի կազմակերպված կյանքի շարունակականությանը, ճգնաժամը և վրանգը պետք է նաև լինեն բացառիկ, այնպես որպեսզի հասարակական անվտանգության, առողջության և կարգի պահպանության համար Կոնվենցիայով թույլատրված սովորական միջոցառումները կամ սահմանափակումները բացահայտորեն բավարար չլինեն» (ընդգծումը մերն է)⁶²:

Համանման կերպ Կոմիտեն իր մեկնաբանություններում սահմանել է, որ զինված հակամարտություն չհանդիսացող իրավիճակներում Դաշնագրի 4-րդ հոդվածը վկայակոչելիս պետությունները «պետք է զգուշորեն վերլուծեն արդարացումը և թե ինչու են նման միջոցառումները [սահմանափակումները] անհրաժեշտ և լեգիտիմ Կոմիտեի հանգամանքներում» (ընդգծումը մերն է)⁶³:

⁶¹ *Lawless v. Ireland*, Application no. 332/57, Judgment of 1 July 1961, §28.

⁶² *A and Others v. the United Kingdom*, Application no. 3455/05, GC Judgment of 19 February 2009, §176.

⁶³ Human Rights Committee General Comment 29: States of Emergency (Article 4), UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add.11 (31 August 2011), §3.

Կոմիտեն նաև արձանագրել է, որ պահանջն առ այն, որպեսզի շեղումը պարտավորություններից լինի «բացառապես» այնքան, որքան «դա պահանջում է դրության լրջությունը» վերաբերվում է նաև արտակարգ դրության և ձեռնարկած ցանկացած միջոցառման «**տևողությանը, աշխարհագրությանը և ծավալներին**» (ընդգծումը մերն է)⁶⁴:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների մեկնաբանությունների միջոցով սահմանվել են արտակարգ դրությունների հայտարարման որոշակի նախապայմաններ և պարտավորություններից շեղումների սահմանափակումներ:

Այսպես՝ արտակարգ իրավիճակի հայտարարումը թույլատրելի է, եթե առկա է վտանգ, որը (1) բացառիկ է՝ չի ընձեռում սովորական միջոցառումների միջոցով հասարակական կարգի պահպանման հնարավորություն, (2) իրական կամ վրահաս է և (3) ազդում է պետության ողջ բնակչության, համայնքի կազմակերպված կյանքի շարունակականության վրա: Իսկ ձեռնարկվող միջոցառումները պետք է լինեն (1) անհրաժեշտ և լեգիտիմ, ինչպես նաև (2) սահմանափակ լինեն իրենց տևողությամբ, աշխարհագրությամբ և ծավալներով:

Այս չափանիշներն ամրագրված չեն ո՛չ գործող Սահմանադրությունում, ո՛չ էլ Նախագծում (Նախագծում օգտագործվող «բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը» ձևաչափն ակնհայտորեն չի ենթադրում բոլոր վերը թվարկված սահմանափակումները) և ինկորպորացվում են երկուսի մեջ էլ հղման միջոցով՝ սահմանելով, որ սահմանափակումները հնարավոր են «արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Սակայն խնդրո առարկա միջազգային պարտավորությունները ՀՀ-ն ստանձնել է միայն երկու պայմանագրերի միջոցով (ՄԻԵԿ և Դաշնագիր). հետևաբար դրանց տեսական դեմոնստրացիայի (չեղյալ հայտարարելու) պարագայում այն կաշկանդված կլինի միայն սովորության նորմերով:

Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ գործող Սահմանադրության և միջազգային իրավունքի, ինչպես նաև Նախագծի և միջազգային իրավունքի փոխհարաբերակցության հարցին (համապատասխանաբար ՀՀ Սահմանադրության և Նախագծի, այլ ոչ թե միջազգային իրավունքի տեսանկյունից):

Գործող Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է.

Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Սակայն, բացի միջազգային պայմանագրերն ՀՀ իրավական համակարգի մաս սահմանելուց, գործող Սահմանադրության 3-րդ հոդվածն արձանագրում է

⁶⁴ Ibid., §4.

նաև.

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Վերոնշյալ դրույթը, ի տարբերություն 6-րդ հոդվածի, չի սահմանափակվում միայն պայմանագրային նորմերով և, ըստ էության, խոսում է միջազգային իրավունքի նորմերի մասին ընդհանրապես, այսինքն՝ անկախ դրանց նյութականացման ձևի (պայմանագրային, թե սովորութային): Այս մոտեցումն է, ըստ էության, արտահայտված նաև ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում: Վերջինս խոսելով միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի մասին անդրադարձ է կատարում ոչ միայն միջազգային պայմանագրային դրույթներին, այլ նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին⁶⁵ (որը չհանդիսանալով պայմանագիր, ըստ էության, իր դրույթների զգալի մասով արտացոլում է սովորութային միջազգային իրավունքը):

Այսինքն՝ անգամ եթե ՄԻԵԿ-ը և Դաշնագիրը դենոնսացվեն ՀՀ կողմից, վերջինս միևնույն է գործող Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով արտակարգ դրության ռեժիմ կիրառելիս կաշկանդված է միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով, քանի որ դրանք ինկորպորացված են որպես պետության կողմից մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության չափանիշ:

Իրավիճակն այլ է Նախագծում: Միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթը վերացվել է: Փոխարենն ավելացվել է մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ 2-րդ գլուխը եզրափակող դրույթ՝ այդ իրավունքների միջազգային պարտավորությունների լույսի ներքո մեկնաբանելու վերաբերյալ (81-րդ հոդված), և ձևափոխվել է իրավական նորմերի աստիճանակարգության վերաբերյալ հոդվածը (Նախագծում 5-րդ հոդված):

Նորմերի աստիճանակարգության վերաբերյալ 5-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես, արձանագրում է.

Ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմերը գերակայություն ունեն օրենքների նկատմամբ: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Երկրորդ նախադասությունն, ըստ էության, առավել հակիրճ արտահայտում է գործող Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված հետևյալ դրույթը.

«Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը

⁶⁵ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդ. բմբ.՝ Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 66:

բովանդակային նորամուծություն է: Առաջին նախադասության մեջ օգտագործվող «ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմեր» արտահայտությունն ըստ ամենայնի վերաբերվում է միջազգային իրավունքի իմպերատիվ կամ *jus cogens* նորմերին⁶⁶: Սակայն մարդու իրավունքներին դասվող իմպերատիվ նորմերն (օրինակ՝ խոշտանգման արգելք, ռասայական խտրականության արգելք, ցեղասպանության արգելք և այլն) արդեն իսկ *ipso facto* մտնում են պարտավորությունների այն խմբի մեջ, որոնցից շեղումներ հնարավոր չեն անգամ արտակարգ դրության պայմաններում: Ուստի Նախագծի 5-րդ հոդվածի առաջին նախադասությունը չի կարող ծառայել որպես լրացուցիչ երաշխիք արտակարգ իրավիճակների պարագայում: Այս առումով այս նոր ձևակերպումը որևէ կերպ չի փոխարինում գործող Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ապահովելու պետության պարտականությունը:

Ավելին՝ հարկ է նշել նաև, որ մարդու իրավունքների խմբին չդասվող միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը գործում են միջպետական հարթությունում (օրինակ՝ ուժի գործադրման արգելքը): Ուստի դրանց կիրառումը ներպետական իրավական համակարգում կամ պարզապես հնարավոր չէ, կամ կարող է լուրջ խնդիրներ ստեղծել հենց ազգային անվտանգության տեսանկյունից⁶⁷:

81-րդ հոդվածն ամրագրում է.

1. *Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:*
2. *Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային*

⁶⁶ Պայմանագրերի իրավունքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի հայերեն տարբերակի 53-րդ հոդվածում օգտագործվող «պարտադիր նորմ» (անգլ.՝ “peremptory”) արտահայտությունն այնքան էլ հաջող չէ, քանի որ չի արտահայտում անզլերեն “peremptory” կամ ֆրանսերեն “impérative” բառերի իրական իմաստը և, ավելին, ստեղծում է տպավորություն, թե խնդրո առարկա նորմերից տարբերվող նորմերը ոչ պարտադիր են: Ուստի կարծում ենք, որ այս ձևակերպումը յուրաքանչյուր դեպքում հստակեցման կարիք ունի, եթե այն օգտագործվելու է Նախագծի վերջնական տեքստում:

⁶⁷ Խնդրահարույց է իրավաբանական տեխնիկայի առումով նաև երկու նախադասությունների շարադրանքը: Նախադասությունների կառուցվածքից (եթե վերանանք տարբեր ենթակաների օգտագործման փաստից) տպավորություն է ստեղծվում, որ խոսքը երկու նախադասություններում նույն երկույթի մասին է: Այսպես՝ «*X-երը գերակայություն ունեն օրենքների նկատմամբ: Եթե X-երում սահմանվում են այլ նորմեր, քան նախադասված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը*»: Սակայն ենթակաները տարբեր են, և հարց է առաջանում. եթե երկու նախադասություններում խոսքը գնում է օրենքի նկատմամբ գերակա ուժ ունեցող երկու երկույթների մասին, ապա ինչո՞ւ են տարբեր կերպ տրված օրենքների հետ փոխհարաբերության վերաբերյալ ձևակերպումները: Բացի այդ պայմանագրերը միջազգային նորմերի նյութականացման ձևերից են (աղբյուր), իսկ *jus cogens* նորմերը նորմերի որակական կողմի հիերարխիկ բնութագիր են և դրանց քննարկումը միևնույն հարթությունում պարզապես անտրամաբանական է:

պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Բովանդակային առումով առաջին մասում խոսքը կրկին միայն միջազգային **պայմանագրային** պարտավորությունների մասին է, քանի որ «միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան» հենց այդ պայմանագրերի մեկնաբանման և կիրառման պրակտիկան է: Ուստի այս դրույթը նույնպես չի փոխարինում գործող Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված երաշխիքները⁶⁸:

Ինչ վերաբերվում է 2-րդ մասին, ապա առաջին հայացքից այս դրույթը կարող է ծառայել որպես արտակարգ իրավիճակներում հավանական չարաշահումների դեմ պաշտպանության երաշխիք: Սակայն ուշադիր ընթերցելու պարագայում տեսնում ենք, որ այն խոսում է միայն «սահմանափակումների» մասին՝ չանդրադառնալով «կասեցումներին»: Մինչդեռ Նախագծի 76-րդ հոդվածում օգտագործվում են թե՛ «կասեցում», թե՛ «սահմանափակում» եզրույթները: Ավելին՝ Դաշնագիրը և ՄԻԵԿ-ը արտակարգ իրավիճակների պարագայում օգտագործում են մեկ այլ եզրույթ՝ «շեղում» (անգլ.՝ «derogation»), այլ ոչ թե «սահմանափակում» (անգլ.՝ «limitation» կամ «restriction») եզրույթը (Նախագծի 76-րդ հոդվածում օգտագործվող «կասեցում» եզրույթը, թերևս առավել մոտ է հենց «շեղում» հասկացությանը, այն է՝ պարտավորությունների ամբողջական ժամանակավոր դադարեցում):

Միջազգային կառույցներն էլ բացահայտորեն ընդգծում են այս հասկացությունների տարբերությունները: Մասնավորապես՝ ըստ Կոմիտեի. «շեղումն [անգլ.՝ “derogation”] արտակարգ իրավիճակներում Դաշնագրով ամրագրված պարտավորություններից ակնհայտորեն տարբերվում է Դաշնագրի առանձին դրույթներով ամրագրված սահմանափակումներից [անգլ.՝ “restrictions and limitations”], որոնք թույլատրելի են անգամ սովորական պայմաններում»⁶⁹:

Ուստի հաշվի առնելով «սահմանափակում» (որն, ըստ էության, յուրաքանչյուր իրավունքի ներքին հատկությունն է) և «կասեցում»/«շեղում» (որն, ըստ էության, արտաքին գործոնի՝ արտակարգ իրավիճակի ազդեցության շնորհիվ իրավունքների պաշտպանության ժամանակավոր դադարեցումն է) հասկացությունների տարբերությունը, 81-րդ հոդվածը չի կարող ծառայել որպես երաշխիք արտակարգ իրավիճակների ժամանակ հավանական չարաշահումների դեմ:

Նույնն, ըստ էության, վերաբերվում է նաև 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքին, որը խոսում է միայն «սահմանափակումների» համաչափության մասին (բայց ոչ «կասեցումների»):

Հաշվի առնելով այս ամենը՝ Նախագիծը (չնայած դրա բովանդակության ընդարձակմանը) չի ընդարձակվել իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքների տեսանկյունից արտակարգ իրավիճակների համատեքստում:

⁶⁸ Սակայն այս դրույթը մյուս կողմից միայն ավելի է խճճում իրավական աստիճանակարգության հիմնահարցը: Մի կողմից Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և գերակայում է օրենքների և միջազգային պայմանագրերի նկատմամբ, սակայն մյուս կողմից այդ միջազգային պայմանագրերի կիրառման պրակտիկան պետք է օգտագործվի Սահմանադրության դրույթները մեկնաբանելիս:

⁶⁹ Human Rights Committee General Comment 29, *op. cit.*, §4.

Նախագծի վերը շարադրված հոդվածներից (5-րդ, 78-րդ, 81-րդ հոդվածներից) ոչ մեկը չի հակակշռում գործող Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունը: Տեսականորեն սա նշանակում է, որ Նախագծի կիրառման պայմաններում Դաշնագրի և ՄԻԵԿ-ի դեռնոսացիայի պարագայում արտակարգ իրավիճակների վերաբերյալ հոդվածը (ինչպես նաև այլ դրույթներ, ինչպիսին է օրինակ կյանքի իրավունքի վերաբերյալ 23-րդ հոդվածը) չի սահմանի պետության գործողության ազատությունը եզրագծող որևէ շեմ, բացառությամբ «այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը» ոչ լիարժեք ձևաչափի:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեկնաբանությունները՝ Աշխատանքային խումբը գտնում է, որ՝

1. Թե գործող Սահմանադրության 44-րդ հոդվածը, թե Նախագծի 76-րդ հոդվածն ամբողջական և ինքնաբավ չեն և լիարժեք են դառնում միայն միջազգային պարտավորությունների ինկորպորացիայի միջոցով: Օգտվելով սահմանադրական բարեփոխումների գործընթացից՝ ցանկալի է Նախագծի 76-րդ հոդվածում հստակ արձանագրել իրավունքների կասեցումների/շեղումների դեպքերի գնահատման և նման կասեցումների/շեղումների թույլատրելիության շրջանակների գնահատման օբյեկտիվ չափանիշներ:

2. Եզրութաբանական խառնաշփոթից խուսափելու համար ցանկալի է 76-րդ հոդվածում օգտագործել միջազգային փաստաթղթերի հայերեն տարբերակում օգտագործվող եզրույթը՝ «շեղում», այլ ոչ թե «կասեցում»:

3. Անկախ նրանից, թե ո՞ր եզրույթը կօգտագործվի վերջնական տեքստում («շեղում» թե «կասեցում»), անհրաժեշտ է այդ եզրույթի հիշատակումը նաև համաչափության սկզբունքի վերաբերյալ 78-րդ հոդվածում: Այլապես այն հնարավոր չի լինի վկայակոչել որպես արտակարգ իրավիճակների պայմաններում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք՝ զուտ միայն պնդելով, որ կոնկրետ իրավիճակում առկա է իրավունքների «կասեցում», այլ ոչ թե «սահմանափակում»: Նույնը վերաբերվում է նաև 81-րդ հոդվածի 2-րդ մասին:

4. Սահմանադրության գործող տեքստի 3-րդ հոդվածում արձանագրված դրույթը, որի համաձայն ապահովվում է «հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան» էական երաշխիք է մարդու իրավունքների պաշտպանության (հատկապես արտակարգ իրավիճակների պայմաններում) համար՝ անկախ միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու փաստի: Հրաժարումն այս ձևակերպումից Նախագծում կարող է համարվել հետադարձ: Նախագծի 5-րդ հոդվածում առկա «ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմերի» հիշատակումը չի կարող հակակշիռ հանդիսանալ գործող Սահմանադրության 3-րդ հոդվածի համար և լրացնել վերջինիս բացը: Նախագծի 5-րդ հոդվածի շարադրանքն իրավաբանական տեսանկյան առումով թերի է:

* * *

ՀՈԴՎԱԾ 78. ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համաչափ լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը:

**78-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքային խմբումը սույն հոդվածին անդրադարձ է կատարել Նախագծի 76-րդ հոդվածի համատեքստում:

ԳԼՈՒԽ 7. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

* * *

ՀՈԴՎԱԾ 161. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

3. Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:

161-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 161-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվում է, որպեսզի դատարանի «վերջնական» ակտերն ընդունվեն Հայաստանի Հանրապետության անունից: Փաստորեն, ստացվում է, որ անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերը (օրինակ, անձին կալանավորելու վերաբերյալ դատարանի ակտը) Հայաստանի Հանրապետության անունից չեն կայացվում: Նման մոտեցումը, մեր կարծիքով, անընդունելի է: Բացի այդ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի նախնական կարծիքի 147-րդ կետի համաձայն՝ դատարանի յուրաքանչյուր ակտ պետք է ընդունվի Հայաստանի Հանրապետության անունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 161-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատարանի վերջնական, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ այլ ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:»:

* * *

ՀՈԴՎԱԾ 162. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական

դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

162-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վենետիկի հանձնաժողովի կարծիքի 145-րդ և 148-րդ կետերի համաձայն՝ Սահմանադրական դատարանը չի կարող դատական համակարգի մաս կազմել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 167-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը:

Աշխատանքային խումբը կիսելով Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, նույնպես գտնում է, որ Նախագծի 162-րդ հոդվածի 1-ին մասից պետք է հանել «Սահմանադրական դատարանը,» բառերը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 162-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում գործում են Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը:»:

* * *

ՀՈԴՎԱԾ 163. ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1. Արդարադատություն իրականացնելիս դատավորը պետք է լինի անկախ, անաչառ և գործի միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Դատավորը չի կարող ենթարկվել պատասխանատվության արդարադատություն իրականացնելիս կայացրած դատական ակտի, գործողության կամ անգործության համար, եթե դրանք հանցագործության կամ վարչական իրավախախտման՝ օրենքով սահմանված հատկանիշներ չեն պարունակում:

3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո: Նման դեպքի մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո: Նման դեպքի մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սահմանվում են Դատական օրենսգրքով, իսկ կարգը՝ Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով:

6. Դատավորը չի կարող զբաղեցնել իր լիազորություններով չայսմանավորված որևէ պաշտոն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել համատեղելիության այլ սահմանափակումներ:

7. Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ:

8. Դատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ կայացվելու, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու, մահվան, նրա հրաժարականի դեպքերում:

9. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, տրևական հիվանդության պատճառով պաշտոնավարման անհնարինության դեպքերում, ինչպես նաև էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:

10. Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

**163-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Դատավորի անձեռնմխելիությունը՝ իրավունքի գերակայությանն ու դատավարության արդարացիությանն ուղղված նրա մասնագիտական գործունեության ապահովման կարևորագույն միջոց է: Հետևաբար, դատավորի անձեռնմխելիությունը ոչ թե նշված պաշտոնը զբաղեցնող քաղաքացու անձնական, մասնավոր առավելություն է, այլ անկողմնակալ, արդար և օրենքի

հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության հիմնարար իրավունքի բաղադրատարր է, ուստի պետք է հանդիսանա այդ բաղադրյալ իրավունքի յուրաքանչյուր կրողի առանձին իրավունք-երաշխիք: Հետևաբար, դատավորի անձեռնմխելիության սկզբունքը սահմանող իրավանորմերում օգտագործվող «դատավոր» եզրույթը պետք է մեկնաբանվի «վերագրվող ենթադրյալ իրավախախտման, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործության պահին գործող դատավորի կարգավիճակ ունեցող անձ» իմաստով: Այլ խոսքով՝ բոլոր այն դեպքերում, երբ դատավորին վերագրվող իրավախախտումը ենթադրաբար կատարվել է նրա պաշտոնավարման ժամանակահատվածում, անկախ այն հանգամանքից, թե մեղսագրվող արարքն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ է, թե՛ ոչ, գործում է դատավորի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքը: Իրավասու մարմինը դատավորին պատասխանատվության ենթարկելու հարց կարող է հարուցել միայն օրենքով սահմանված հատուկ ընթացակարգի պահանջների պահպանմամբ:

Դատավորի անձեռնմխելիության միայն այսպիսի ամրագրման դեպքում է հնարավոր ապահովել այդ սկզբունքի նպատակային, իմաստային կենսագործումը, ինչպես նաև երաշխավորել դատական իշխանության գործառույթների բնականոն իրականացումը:

Բացի այդ, նախագծի 163-րդ հոդվածի 7-րդ մասով քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը չի ներառում կուսակցության անդամ լինելը: Աշխատանքային խմբի կարծիքով, անհրաժեշտ է սահմանել նաև կուսակցությանն անդամակցելու արգելքը՝ դատավորների նկատմամբ կուսակցական հնարավոր ազդեցությունը կանխելու համար անհրաժեշտ սահմանադրական երաշխիքներ ստեղծելու համար:

Դատավորների վարձատրությունն այսօր սահմանվում է գործադիր իշխանության նախաձեռնությամբ՝ ՀՀ ազգային ժողովի կողմից: Սահմանադրական երաշխիքներ նախատեսված չեն դատավորի վարձատրության կայունությունն ապահովելու համար, իսկ դատավորի նյութական անկախությունը նույնպես կարևոր երաշխիք է: Օրինակ, ԱՄՆ Սահմանադրության երրորդ հոդվածի առաջին մասը նախատեսում է, որ դատավորի վարձատրությունը չի կարող նվազեցվել, քանի դեռ դատավորը պաշտոնավարում է: Աշխատանքային խումբը գտնում է, որ վարձատրության հարցի բարձրացումը Սահմանադրության մակադրակով, կարևոր երաշխիք է դատավորների համար:

ԵՐՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է նախագծի 163-րդ հոդվածների 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց բարձրագույն դատական խորհրդի համաձայնության: Դատավորը չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես

տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

4. Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության: Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:

7. Դատավորը և Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ կամ լինել կուսակցության անդամ:»:

11. Սահմանադրական դատարանի դատավորի և դատավորի աշխատավարձը չի կարող նվազեցվել նրա պաշտոնավարման ժամանակահատվածում:

* * *

ՀՈԴՎԱԾ 164. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ (ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ) ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ (ԸՆՏՐՈՒԹՅԱՆ) ԿԱՐԳԸ, ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Առաջին արյանի և վերաքննիչ դատարանների դատավորները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի ներկայացմամբ:

2. Առաջին արյանի և վերաքննիչ դատարանների նախագահները նշանակվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով՝ երեք տարի ժամկետով, և չեն կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից անմիջապես հետո:

3. Վճռաբեկ դատարանի դատավորներին ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը մրցութի արդյունքներով Ազգային ժողովին ներկայացնում է Վճռաբեկ դատարանի դատավորների՝ յուրաքանչյուր տեղի համար երեք թեկնածու: Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Հանրապետության նախագահը:

4. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները նշանակվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, վեց տարի ժամկետով՝ առանց վերանշանակման իրավունքի:

5. Վճռաբեկ դատարանի նախագահին Վճռաբեկ դատարանի կազմից՝ վեց տարի ժամկետով, առանց վերանշանակման իրավունքի, նշանակում է Ազգային ժողովը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Վճռաբեկ դատարանի դատավորներն ընտրվում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, Հայաստանի

Հանրապետության ընտրական իրավունք ունեցող իրավաբանների թվից, ում քառասուն տարին լրացել է և ովքեր ունեն բարձր մասնագիտական որակներ և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձ:

7. Առաջին արյանի և վերաքննիչ դատարանների դատավորները նշանակվում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող իրավաբանների թվից՝ Դատական օրենսգրքով սահմանված կարգով:

8. Դատավորների թեկնածուների նկատմամբ Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

9. Դատավորներն անփոփոխելի են և պաշտոնավարում են մինչև վաթսուներեք տարին լրանալը:

10. Դատավորների նշանակմանը և ընտրությանը վերաբերող մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով:

164-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Դատավորների նշանակումների վերաբերյալ» 2007 թվականի հունիսի 22-ի CDL-AD(2007)028 զեկույցի համաձայն՝ ոչ սահմանադրական դատարանների դատավորների նշանակումը նպատակահարմար չէ իրականացնել պառլամենտում քվեարկության միջոցով, քանի որ նման դեպքում հնարավոր չէ բացառել քաղաքական նկատառումների գերակայությունը թեկնածուի օբյեկտիվ արժանիքների նկատմամբ⁷⁰ :

Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովի կարծիքի 158-րդ կետի համաձայն՝ ԱԺ-ն չպետք է ներգրավված լինի Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահների նշանակման գործընթացին: Այդպիսի իրավասությանը պետք է օժտված լինի Դատական խորհուրդը: Այս դատողությունը Վենետիկի հանձնաժողովը կրկնում է Կարծիքի եզրահանգումներում՝ ընդգծելով, որ քաղաքական մարմինը չպետք է միջամտի Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահների նշանակման և լիազորությունների դադարեցման հարցերին (տե՛ս կետ 196):

Հատկանշական է, որ վճռաբեկ դատարանի պալատների նախագահների ընտրությունը սահմանափակելով միայն մեկ անգամ, հետագայում գործնական խնդիրներ կարող են ծագել: Մասնավորապես, կարող է լինել իրավիճակ, որ բարձրագույն դատական խորհուրդը ստիպված է լինելու պալատի նախագահ նշանակել այնպիսի անձի, որը կազմակերպչական ունակություններ չունի: Այս տեսակետից, աշխատանքային խումբը գտնում է, որ առնվազն երկու անգամ կարելի է թույլ տալ վճռաբեկ դատարանի և պալատների նախագահներին պաշտոնավարել:

⁷⁰ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի «Դատավորների նշանակումների վերաբերյալ» 2007 թվականի հունիսի 22-ի CDL-AD(2007)028 զեկույցի 47-րդ կետը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 164-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակումն իրականացվում է մրցութային կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը մրցույթի արդյունքներով Հանրապետության Նախագահին ներկայացնում է Վճռաբեկ դատարանի դատավորների՝ յուրաքանչյուր տեղի համար երեք թեկնածու: Հանրապետության Նախագահը թեկնածուների կազմից նշանակում է Վճռաբեկ դատարանի դատավորներին:

4. Վճռաբեկ դատարանի նախագահի և պալատների նախագահները նշանակվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, վեց տարի ժամկետով, բայց ոչ ավել, քան երկու անգամ:

* * *

ՀՈԴՎԱԾ 171. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Վերաքննիչ դատարաններն առաջին աստիճանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող հիմնական աստիճանն են:

**171-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Նախագծի 171-րդ հոդվածի (Վերաքննիչ դատարանները) վերաբերյալ առաջարկություններ կամ դիտողություններ չկան: Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական բարեփոխումների Հայեցակարգի 2.6.1.-րդ կետի համաձայն. «(...) դատական իշխանության գործառույթային ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատական իշխանության հասկացությունը, առաքելությունը, հիմնական գործառույթները, այն մարմնավորող կառույցի կազմակերպման և գործունեության հիմքերն ունենան սահմանադրական ամրագրում: Այդպիսի իրավակարգավորումը (դատարանակազմական և դատավարական ընդհանուր սկզբունքների հաշվառմամբ) հիմք կծառայի նաև դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորման համար (...)»: Մինչդեռ Նախագծում ինստիտուտ-գործառույթ-լիազորություններ հարթության վրա հստակ տարանջատված չեն բոլոր աստիճանների դատարանները: Մասնավորապես, Նախագծում մանրամասն ամրագրված են Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ և գործառույթային առանձնահատկությունները, իսկ ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների առումով նման կարգավորումներ չկան:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է, **Նախագծի 7-րդ գլխում հստակ փարանջարել ոչ միայն Սահմանադրական դատարանի, այլ նաև յուրաքանչյուր դատական արյանի գործառության (ֆունկցիոնալ) դերը՝ ինստիտուտ-գործառույթ-լիազորություններ հարթության վրա:**

* * *

ՀՈԴՎԱԾ 173. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ և ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է փասը անդամից, որոնցից հինգին ընտրում է Ազգային ժողովը՝ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից, պատգամավորների առնվազն երեք հինգերորդի ծայների մեծամասնությամբ, հինգին՝ դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորների թվից:

2. Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է լինեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ունենան բարձր մասնագիտական որակներ և առնվազն փասնհինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:

3. Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է համամասնորեն ներկայացնեն բոլոր արյանների դատավորներին և ունենան դատավորի պաշտոնում առնվազն փասը տարվա պաշտոնավարման փորձ:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամները պաշտոնավարում են հինգ տարի և չեն կարող վերստին ընտրվել այդ պաշտոնում:

5. Դատարանների նախագահները չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի կազմում:

6. Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների լիազորությունները կասեցվում են մինչև Բարձրագույն դատական խորհրդում նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:

7. Բարձրագույն դատական խորհրդի անդամների վրա տարածվում են դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված անհամարելիության պահանջները:

8. Բարձրագույն դատական խորհուրդը նախագահում է խորհրդի նախագահը, որն ընտրվում է հաջորդաբար՝ խորհրդի դատավոր և իրավաբան անդամների թվից, խորհրդի անդամների կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

173-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Դատական համակարգի անկախության մասին.

Մաս 1. Դատավորների անկախությունը» զեկույցի 23-27-րդ կետերում ամրագրված են դատական խորհրդի անկախության ապահովման հետևյալ երաշխիքները՝

Դատավորների ընտրության և նրանց մասնագիտական առաջընթացի հարցում որոշում կայացնող մարմինը պետք է անկախ լինի կառավարությունից: Այդ մարմնի անկախության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է որպեսզի այդ մարմնի անդամ դատավորները ընտրվեն դատական կորպուսի կողմից, ինչպես նաև այն պետք է ունենա անկախությունը՝ իր ընթացակարգային կանոնները ընդունելու հարցում: Սակայն, եթե սահմանադրությամբ, օրենսդրական ակտով կամ սովորույթի ուժով թույլատրվում է դատավորների նշանակումը կառավարության կողմից, ապա պետք է լինեն դատավորների նշանակման գործընթացի անկախության, ինչպես նաև որոշումների ընդունման վրա ազդող տարբեր գործոնները բացառող երաշխիքներ:

Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը նաև խրախուսում է անկախ մարմնի ստեղծումը և արձանագրում է, որ դա հատկապես ընդունելի է այն երկրների համար, որտեղ բացակայում են արմատացած և դեմոկրատական ուղով փորձված այլ համակարգեր:

Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը «Հանրությանը ծառայող արդարադատության հարցերով խորհրդի» մասին Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 10 Եզրակացությունում լրացուցիչ զարգացնում է նշված մոտեցումը և նշում, որ արդարադատության հարցերով խորհուրդը պետք է կազմված լինի կամ միայն դատավորներից, կամ ունենա խառը կազմ՝ դատավորներից և դատավոր չհանդիսացող այլ անձանցից կազմված: Երկու դեպքում էլ պետք է խուսափել սեփական շահերից, ինքնապաշտպանությունից և «բարեկամական մոտեցումից»: Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի կարծիքով, խառը կառուցվածքը ունի առավելություն՝ մի կողմից այն թույլ կտա խուսափել սեփական շահերից, ինքնապաշտպանությունից և «բարեկամական մոտեցումից», իսկ մյուս կողմից՝ կարտացոլի հասարակության մեջ առկա բազմակարծությունը և այդ կերպ կհանդիսանա դատական համակարգի նկատմամբ վստահության և բարձր վարկանիշի լրացուցիչ աղբյուր: Սակայն դատավորների նշանակման գործընթացում խորհրդի աշխատանքը, նույնիսկ խառը կազմ ունենալու դեպքում, չի կարող ենթարկվել Ազգային ժողովի մեծամասնության կամ գործադիր իշխանության ազդեցությանը, և պետք է անկախ լինի քաղաքական կուսակցությունների շահերից, որպեսզի խորհուրդը կարողանա երաշխավորել արդարադատության հիմնական սկզբունքներն ու արժեքները:

Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումն (CDL-AD(2007)28) ավելի մանրակրկիտ է: Նշված դիրքորոշման համաձայն՝ Եվրոպայում դատավորների նշանակման զանազան համակարգեր կան, ուստի չկա մեկ միասնական մոդել, որն ընդունելի կլինի բոլոր երկրների համար: Հին ժողովրդավարական երկրներում գործադիր իշխանությունն, երբեմն, ունենում է էական ազդեցություն դատավորներին նշանակելիս: Պրակտիկայում այդպիսի համակարգերը կարող են արդյունավետ գործել և ապահովել դատական իշխանության անկախությունը, քանի որ այդպիսի իրավասությունները սահմանափակվում են տարիների ընթացքում ձևավորված իրավական մշակույթի և սովորույթների ուժով: Սակայն,

նոր դեմոկրատական երկրներում դեռևս հնարավորություն չկա զարգացնել չարաշահումները կանխող այդպիսի սովորույթներ, ուստի այդպիսի երկրներում պետք է սահմանվեն դատավորներ նշանակման հարցում չարաշահումները կանխող սահմանադրական և իրավական կոնկրետ երաշխիքներ: Դատարանների (ոչ սահմանադրական դատարանի) դատավորների նշանակումը չպետք է հանդիսանա նպատակաուղղված քվեարկության առարկա ԱԺ-ում, քանի որ վտանգ կա, որ հնարավոր չի լինի բացառել քաղաքական ուժերի ակնկալիքների գերակայությունը՝ թեկնածուների օբյեկտիվ հատկանիշների վրա: Դատական համակարգի անկախության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել դատական խորհուրդ, որի կազմը, լիազորությունները և ինքնուրույնությունը պետք է սահմանվեն սահմանադրորեն: Այդ խորհուրդը պետք է որոշիչ դեր ունենա դատավորների նշանակման, առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում: Դատական խորհրդի անդամների մեծ մասը պետք է ընտրվեն հենց դատավորներ թվից: Ժողովրդավարական հեղինակություն ապահովելու նպատակով խորհրդի մյուս անդամները պետք է նշանակվեն ԱԺ-ի կողմից՝ հեղինակավոր իրավաբանների թվից: Այսպիսով, Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ գոնե նոր դեմոկրատական երկրներում դատական համակարգի նշանակման համար անհրաժեշտ են երաշխիքներ, որ դատավորների նշանակումն ու առաջխաղացումն իրականացվի անկախ դատական խորհրդի կողմից: Վենետիկի հանձնաժողովը հին և ավանդական դեմոկրատական երկրներին նույնպես հորդորում է վերանայել անկախ դատական խորհուրդ ունենալու հնարավորությունը: Ամեն դեպքում, խորհուրդը պետք է ունենա **խառը կազմ, ընդ որում դրա զգալի մասը, եթե ոչ մեծ մասը, պետք է լինեն դատավորներ՝ ընտրված հենց դատավորների կողմից:**

Հատկանշական է, որ խառը կազմի մեջ առավել արդյունավետ կլինի ներգրավել անկախ փաստաբաններից, որոնց նույնպես կընտրի ազգային ժողովը: Աշխատանքային խումբը չի առաջարկում դատախազներին, հաշվի առնելով վերջիններիս վերադասից կախյալ վիճակը:

Նախագծի տարբերակը թողնելու դեպքում, դատական իշխանության ներկայացուցիչները բարձրագույն դատական խորհրդում մեծամասնություն չեն կազմի, ինչը կհակասի նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին: Հատկանշական է, որ դատական իշխանությունը չպետք է կախվածության մեջ գտնվի գործադիր և օրենսդիր իշխանություններից: Մինչդեռ Նախագծի 173-րդ հոդվածի 8-րդ մասում նախատեսված այս կանոնը՝ ***Բարձրագույն դատական խորհուրդը նախագահում է խորհրդի նախագահը, որն ընտրվում է հաջորդաբար՝ խորհրդի դատավոր և իրավաբան անդամների թվից, խորհրդի անդամների կողմից՝ օրենքով սահմանված կարգով,*** ուղղակիորեն ինչ որ մի ժամանակահատվածում մեծամասնությամբ է օժտելու բարձրագույն դատական խորհրդի օրենսդիր իշխանության կողմից նշանակված անդամներին, քանի որ Նախագծի 174-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***Ձայների հավասարության դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:*** Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պետք է մեծամասնությամբ օժտել դատական իշխանության ներկայացուցիչներին:

Նկատի ունենալով այն, որ այսօր առաջին ատյանի երկու դատարան կա (ընդհանուր իրավասության և վարչական), երեք վերաքննիչ ատյան (վարչական, քրեական և քաղաքացիական) և վճռաբեկ դատարանի երկու պալատ, առաջարկվում է դատական իշխանությունից անդամներին նշանակել նույն սկզբունքով՝ 1 անդամ- ընդհանուր իրավասության դատարանից, 1 անդամ- վարչական դատարանից, 3 անդամ- վերաքննիչ դատարաններից և 2 անդամ վճռաբեկ դատարանի պալատներից- ընդհանուր՝ 7 անդամ: ՀՀ ազգային ժողովին կարելի է վերապահել 4 անդամի նշանակման լիազորություն:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է Նախագծի 173-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 173. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը

1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասնմեկ անդամից, որոնցից 4-ին ընտրում է Ազգային ժողովը՝ 2-ին իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից, և 2-ին՝ փաստաբանների պալատի խորհրդի կողմից առաջադրված փաստաբանների թվից, պարզամավորների առնվազն երեք հինգերորդի ծայների մեծամասնությամբ, յոթին՝ դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորների թվից:

2. Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է լինեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ունենան բարձր մասնագիտական որակներ և առնվազն տասնհինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ: Փաստաբան անդամները պետք է ունենան փաստաբանի առնվազն տասը տարվա մասնագիտական փորձ:

3. Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է համամասնորեն ներկայացնեն բոլոր արյանների դատավորներին և ունենան դատավորի պաշտոնում առնվազն տասը տարվա պաշտոնավարման փորձ:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամները պաշտոնավարում են հինգ տարի և չեն կարող անընդմեջ ընտրվել այդ պաշտոնում:

5. Դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի կազմում:

6. Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների լիազորությունները, ինչպես նաև փաստաբան անդամների փաստաբանական գործունեության արտոնագրերի գործողությունը կասեցվում են մինչև Բարձրագույն դատական խորհրդում նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:

7. Բարձրագույն դատական խորհրդի անդամների վրա տարածվում են դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված անհամարեղելիության պահանջները:

8. Բարձրագույն դատական խորհուրդը նախագահում է խորհրդի նախագահը, որն ընտրվում է խորհրդի դատավոր անդամների թվից,

խորհրդի անդամների կողմից՝ օրենքով սահմանված կարգով:»:

*** * ***

**ՀՈՂՎԱԾ 174. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Բարձրագույն դատական խորհուրդ՝

1) կազմում է դատավորների թեկնածությունների և առաջխաղացման ցուցակները.

2) Հանրապետության նախագահին ներկայացնում է նշանակման ենթակա դատավորների թեկնածությունները.

3) Հանրապետության նախագահին ներկայացնում է առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածությունները.

4) համապատասխան դատարանների դատավորների թվից ընտրում և Հանրապետության նախագահին ներկայացնում է նշանակման ենթակա դատարանների նախագահների թեկնածությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների կազմից՝ նշանակման ենթակա պալատների նախագահների թեկնածությունները.

5) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների թեկնածությունները.

6) օրենքով սահմանված դեպքերում լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու կամ փոխադրելու հարցը.

7) համաձայնություն է տալիս իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու վերաբերյալ.

8) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության.

9) դադարեցնում է դատավորների լիազորությունները.

10) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում կառավարությանը՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, ընդհանուր վերահսկողություն է իրականացնում դատարանների բյուջեային միջոցների օգտագործման նկատմամբ:

2. Բարձրագույն դատական խորհրդին օրենքով կարող են վերապահվել նաև իր սահմանադրական կարգավիճակով պայմանավորված այլ լիազորություններ:

3. Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է որոշումներ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Ձայների հավասարության դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

4. Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

5. Բարձրագույն դատական խորհուրդն օրենքով սահմանված կարգով ձևավորում է իր աշխատակազմը:

6. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով:

**174-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Դատական համակարգի անկախության մասին. Մաս 1. Դատավորների անկախությունը» զեկույցի 69-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ դատարանների բյուջեն պետք է ձևավորվի արդարադատության անկախության սկզբունքի պահպանմամբ: Դատավորները պետք է հնարավորություն ունենան առաջարկվող բյուջեի վերաբերյալ կարծիք արտահայտել, օրինակ, դատավորների խորհրդի միջոցով:

Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովի կարծիքի 184-րդ կետի համաձայն՝ ֆինանսական (բյուջետային) պարտականությունները կարող են ծանրաբեռնել Բարձրագույն դատական խորհրդին, որն էլ կարող է հանգեցնել դատավորների հետ կապված հիմնական գործառույթների ոչ պատշաճ կատարմանը:

Բոլոր դեպքերում, եթե դատարանների նախագահները հնարավորություն ունենան ներկայացնել իրենց ծախսերի նախահաշիվները, ապա դա կարող է անկախության համար լրացուցիչ երաշխիք հանդիսանալ:

Միաժամանակ, Աշխատանքային խումբը գտնում է, որ բարձրագույն դատական խորհրդի որոշումները՝ դատավորին պատասխանատվության ենթարկելու մասով պետք է հնարավոր լինի բողոքարկել առնվազ մեկ ատյան: Հաշվի առնելով բարձրագույն դատական խորհրդի բարձր կարգավիճակը՝ Աշխատանքային խումբը գտնում է, որ պետք է բողոքարկման ատյանը համարվի վճռաբեկ դատարանը:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքային խումբն առաջարկում է՝

1. Նախագծի 174-րդ հոդվածի 1-ին հոդվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) հաստատվում է իր, ինչպես նաև դատարանների նախագահների ներկայացմամբ՝ դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում կառավարությանը՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, ընդհանուր վերահսկողություն է իրականացնում դատարանների բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ:»:

2. Նախագծի 174-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 7-րդ մասով՝

«7. Բարձրագույն դատական խորհրդի որոշումը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան՝ Դատական օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով:»:

* * *

ԳԼՈՒԽ 8. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

* * *

Նշված գլուխը կազմված է երեք հոդվածներից՝
Հոդված 175. Դատախազությունը
Հոդված 176. Գլխավոր դատախազը
Հոդված 177. Քննչական մարմինները

Յուրաքանչյուր կայացած իրավական պետությունում իր ուրույն տեղն ու դերն ունի փաստաբանությունը: Այն հանդիսանում է Մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմներից մեկը: Փաստաբանությունը լուրջ առաքելություն ունի արդարադատության մատչելիության ապահովման գործում: Այն ուղղակիորեն նպաստում է արդարադատության իրականացմանը, և եթե պետությունը ցանկանում է ունենալ անկախ, անկողմնակալ, անաչառ՝ արդարադատություն իրականացնող դատական համակարգ, ապա պետք է ձգտի հնարավորինս կատարելագործել և ուժեղացնել փաստաբանությունը՝ տալով նրան լիարժեք անկախություն և ապահովելով անհրաժեշտ երաշխիքներով:

Փաստաբանության դերն էլ ավելի կարևորվեց, երբ օրենքներով ամրագրվեցին որոշ երաշխիքներ, մասնավորապես՝ իրավաբանական օգնության հետ կապված հանգամանքների կապակցությամբ, որպես վկա հարցաքննվելու արգելքը, փաստաթղթերի (կրիչների) առգրավման արգելքը և այլն:

Գործող ՀՀ Սահմանադրությունը միայն մեկ նորմում է հիշատակում փաստաբանությունը, երբ 83.5 հոդվածում սահմանում է փաստաբանների կարգավիճակը և լիազորությունները միայն օրենքով նախատեսելու անհրաժեշտությունը:

Աշխատանքային խումբը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությունը պետք է դատախազության դատավարական մրցակիցը հանդիսացող փաստաբանության վերաբերյալ նույնպես պարունակի սահմանադրական երաշխիքներ:

Վերոնշյալի հաշվառմամբ Աշխատանքային խումբն առաջարկում է՝

Ա) 8-րդ գլուխը ձևակերպել հետևյալ կերպ՝

**«ԳԼՈՒԽ 8.
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐ»**

Բ) 176-րդ հոդվածի (գլխավոր դատախազը) մասերն ամբողջությամբ ներառել 175 հոդվածում:

Գ) 176-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀՈԴՎԱԾ 176. ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքներով, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և փաստաբանի վարքագծի կանոնագրքով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, միասնական, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

Փաստաբանների պալատի խնդիրներն են՝

1) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

2) կազմակերպել փաստաբանների արտոնագրման գործընթացը.

3) կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը.

4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.

5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ.

6) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մարչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը:»:

* * *